





ՍԲ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏԻՈՔԱՅԻ

## ՆԱՄԱԿՆԵՐ

*Թարգմանեց՝*

ՄԱՇՏՈՑ ՎԱՀԷ ԴԱԶԱՐԵԱՆ

ԿՆՅՈՒՆԻՆԻՆԻ ԹՆՅՈՒՆԻՆԻՆԻ  
ՊԵՏՐՈՍ 2011

ՀՏԴ 23/28 Թարգմանեց՝ Մաշտոց Վահե  
ԳՄԴ 86.37 Ղազարեան  
Ի 192

### **Մուրր Իգնատիոս Անպիոբացի**

Ի 192 Նամակներ.– Երեւան: «Ընդհանրական» Նրա-  
փարակչատուն, 2011.– 156 էջ:

Ներկայացում է Առաջին դարում ապրած եւ Երկրորդ դարի սկզբին մարտիրոսացած Քրիստոնեայ առաջին ու կարեւորագոյն մարենագիրներից Իգնատիոս Անպիոբացու նամակների հայերէն նորագոյն թարգմանութիւնը: Պարունակում է Քրիստոնեական աստուածաբանութեանը, եկեղեցաբանութեանը եւ միաբնակային առընչուող ուսուցումներ:

Նախապետած է Քրիստոնեայ լայն հասարակութեան համար:

ՀՏԴ 23/28  
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-9019-8-5

© Ընդհանրական Հրատարակչատուն, 2011  
*endhanrakan.hrat@mashtoz.org*

## ՆԱԽԱԲԱՆ

*«Ձեզ յորդորում են իմ կապանքները, որոնք  
ես կրում եմ Յիսուս Քրիստոսի պատճառով,  
մինչ աղօթում եմ հասնելու Աստծուն. յա-  
րատեւեցէք ձեր համերաշխութեան եւ փո-  
խադարձ աղօթքի մէջ ... »:*

(Թրալ. ԺԲ 2)

*Եօթը նամակներ, գրուած՝ գրեթէ քսան դար ա-  
ռաջ, մահուան դատապարտուած մի Եպիսկոպոսի կող-  
մից, քրիստոնէական մի քանի համայնքների, որոնց  
անունն անգամ այսօր դժուարութեամբ է յիշուում:  
Ի՞նչ արդիականութիւն կարող են ունենալ:*

*Այս հարցին իմաստալի պատասխան հնարաւոր  
է տալ միմիայն նամակներն իսկ ընթերցելուց յետոյ,  
ընթերցանութեամբ՝ որն հարկաւոր է կատարել պատ-  
շաճ ուշադրութեամբ ու խորհրդածութեամբ:*

*Առաջին իսկ պահից, յամենայն դէպս, օգտա-  
կար է յիշել, որ այս նամակների հեղինակը, Իգնա-  
տիոս Անտիոքացին, մարտիրոս է: մի մարդ, այսինքն,  
որ ամբողջ խորութեամբ ապրել է այն՝ ինչ գրել է եւ  
իր ուսուցումներին վկայել է սեփական կեանքի ըն-  
ծայմամբ:*

*Այս առաջին ճշգրտումից յետոյ, ամենատար-  
բեր բնոյթի կարող են լինել հետաքրքրութիւնները,  
որոնք կարող են արթնանալ այս նամակների ընթեր-  
ցանութեամբ:*

Պատմաբաններն այս գրութիւններում կարող են արժէքաւոր տեղեկութիւններ գտնել քրիստոնէական առաջին համայնքների վերաբերեալ: Աստուածաբանները կարող են բազմաթիւ վկայութիւններ գտնել իրենց քննարկումների համար: Հաւատաւոր անձինք կարող են հաղորդակցութեան մէջ մտնել արտայայտուած ճշմարտութիւնների ու որոշ գաղափարների հետ, որոնք կ'օժանդակեն զօրացնելու ու ամրապնդելու իրենց հաւատքը, եւ մանաւանդ՝ իրենց սէրն ու անձնական հաղորդութիւնը Տիրոջ հետ: Եւ այսպէս ամէն ոք կարող է այս նամակներին մերձենալ իր իւրայատուկ հետաքրքրութիւններով:

Ամէնքը, սակայն, համաձայն կը գտնուեն մի կէտի շուրջ: Իգնատիոս Անտիոքացու նամակներն ամենավաւերական վկայութիւններից են այն բանի, թէ ի՛նչ է նշանակում սիրել Աստծուն ամէն ինչից վեր: Ինչը որ, հաւատացեալի համար, միշտ էլ մնում է որպէս իր կեանքի ամենակարեւոր ու ամենաարդիական յանձնառութիւնը:

Իգնատիոսը Աստծուն սիրահարուած հոգի է. նրա համար միմիայն Աստծոյ մէջ է ամէն բան ստանում արժէք, մինչ Աստծուց դուրս ամէն բան անիմաստ է:

Սիրել Աստծուն ամէն ինչից վեր, հետեւաբար՝ նաեւ սեփական կեանքից էլ վեր:

Ահա այստեղից է ծնւում Աստծոյ հետ շուտով հանդիպելու իղձը, բաղձանքը՝ որքան կարելի է շուտով հասնել մարտիրոսութեանը, հասնելու համար Միակ Բարիքին:

Այստեղից են ծնւում Իգնատիոսի անդադար յորդորները՝ պահպանելու եւ հոգատարութեամբ խընամելու Միութիւնը, քանի որ Աստուած Միութիւն է եւ Հաղորդութիւն:

Այստեղից են ծնւում նաեւ այն կրակոտ արտա-  
յայտութիւնները, որոնք Սուրբ Մարտիրոսն ուղղում  
է հերետիկոսների դէմ, որոնք ապականում են Քրիս-  
տոսի Հօտը եւ մարդկանց հեռացնում են Աստուծոց:  
Ուրիշ ոչ մի «մեղքի» դէմ չի արտայայտւում Իգնա-  
տիոսը, կարծես ընդգծելով այն ճշմարտութիւնը, որ  
Քրիստոնէական Սրբութիւնը դա նախեւառաջ սրբու-  
թիւնն է Հաւատքի մէջ, որի վրայ է հիմնւում հոգե-  
ւոր կեանքի եւ առաքինութիւնների ամբողջ կառոյցը:

Այստեղից են տակաւին ծնւում խորհրդագգա-  
ցական (միստիկ) այն զմայլելի սլացքն ու անզսպելի  
եռանդն ու հրայրքը, որոնցով այս Նամակները եզա-  
կի գլուխգործոցներ են դառնում համաշխարհային  
գրականութեան անմահ երկերի շարքում:

\* \* \*

Ներկայ հրատարակութեան նպատակն է Քսան-  
մէկերորդ դար մուտք գործած քրիստոնեային հնա-  
րաւորութիւն ընձեռել ծանօթանալու այս Նամակնե-  
րին, իսկ Նամակների միջոցով՝ նրանց Հեղինակին եւ  
Քրիստոնէութեան առաջին տասնամեակներում տիրող  
եռանդուն հոգուն ու աստուածավառ իղձերին:

Ներկայ աշխատանքն, ուստի, ծանրացուած չէ  
պատմա-բանասիրական քննութիւններով: Հետեւա-  
բար, ե՛լ ընդհանուր ներածութեան մէջ, ե՛լ առանձին  
նամակների համառօտ ներկայացման ժամանակ, ե՛լ  
ծանօթագրութիւններում ամբողջովին բացառել ենք  
քննական բնոյթի յղումներն ու նկատողութիւնները:  
Ընդգծել ենք, մինչդեռ, աստուածաբանական, հով-  
ւական եւ հոգեմարդական (ասկետիկ) բնոյթի այն

տարրերը, որոնք օգտակար ենք նկատել ներկայ դա-  
րաշրջանում ապրող քրիստոնեայի համար:

Ընթերցողն այսպիսով – յուսով ենք – կը գտնի  
այս հրատարակութիւնը բաւականին ճկուն եւ դիւր-  
ընթեռնելի, առանց աւելորդ ծանրաբեռնումների, ո-  
րոնք ուսումնասիրողների համար միայն կարող են  
ինչ որ հետաքրքրութիւն ներկայացնել: Սոյն հրա-  
տարակութեան նպատակն է ընթերցողին պարզեւել  
խաղաղ մտորումների ու խորհրդածութեան պահեր,  
որոնք իր մտքին խօսելուց առաջ՝ ընդունակ կը լինեն  
խօսելու իր սրտին:

\* \* \*

Միայն մի խօսք՝ թարգմանութեան վերաբերեալ:  
Արդի լեզուներով ներկայացնել Իգնատիոսի նամակ-  
ները, թարգմանիչների միաձայն գնահատմամբ՝ այն-  
քան էլ դիւրին գործ է, որքան կարող է առաջին հայ-  
եացքից թուալ: Յայտնի է, որ նամակներն Իգնատիո-  
սը գրի է առել Ասորիքից դէպի Հռոմ ձգուած իր ու-  
ղեւորութեան սակաւաթիւ հանդարտ պահերին: Նա  
չատ սեղմ նախադասութիւններով է արտայայտում  
իր մտքերը, քանի որ ե՛ւ ինքը, ե՛ւ իր անմիջական ըն-  
թերցողները քաջատեղեակ էին նամակներում ակն-  
արկուող հարցերին ու իրավիճակներին, որոնք մեր  
համար, սակայն, մնում են անյայտ անցեալի մշուշի  
ետեւում: Այստեղից էլ, ահա, յառաջ են գալիս դժ-  
ւարիմաց հատուածները, որոնց գումարւում են շա-  
րադասութեան յաճախակի պատահող անկատարու-  
թիւնները, կտրուկ անցումները մի մտքից միւսին,  
չարահիւսական նոր ու համարձակ դասաւորումը:



Հասկանալի է դառնում, որ բնագրի որոշ հատ-  
ւածների տառացիորէն հաւատարիմ թարգմանութիւ-  
նը արդի լեզուների՝ ուղղակի անհնարին է: Այդու-  
հանդերձ, Իգնատիոսի արդի թարգմանիչները փոր-  
ձում են պահպանել – կերպային որոշակի չորութեան  
ու միօրինակութեան գնով անգամ – այն կուռ կար-  
ճառօտութիւնը, աւելորդութիւններից զուրկ էակա-  
նութիւնն ու այն «ձայներանգը», որոնք Իգնատիոսի  
նամակների բնորոշ յատկութիւններն են:

Յուսալով, յամենայն դէպս, որ այդպիսով հնա-  
րաւոր կը դառնայ մի քիչ աւելի խորը կերպով հաս-  
կանալ եւ առաւել ամբողջական կերպով ընկալել ու  
գնահատել Իգնատիոսի միտքը:

*Թարգմանութիւնը կատարուել է քննական հետեւեալ հրա-  
տարակութիւններից.*

- S. Ignazio d'Antiochia, *Le Lettere*, a cura di Guido Gandolfo,  
Edizioni Paoline, Roma 1980;

- Ignazio di Antiochia, *Ora comincio a essere discepolo*, a cura  
di Sabino Chialà, Edizioni Qiqajon, Bose 2004.

*Այս երկրորդն իր հերթին հետեւում է բնագրերի հետեւեալ  
հրատարակութեանը.*

- Ignace d'Antioche - Polycarpe de Smyrne, *Lettres. Martyre de  
Polycarpe*, SC 10, Paris 1958.

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

### Ասորիցի Հռոմ, դեպի մարտիրոսություն

*Իգնատիոսի անունը սովորաբար կապւում է Ասորիքի Անտիոք քաղաքին: Գիտենք ամենայն վստահութեամբ, որ նա եղել է այդ քաղաքի Եպիսկոպոսը: Չունենք, սակայն, պատմական տեղեկութիւններ, որոնց հիման վրայ կարող ենք հաստատել, թէ նա ծընունդով էլ անտիոքացի էր: Այս հարցի վերաբերեալ հին աղբիւրները լռում են: Կարող ենք միայն ենթադրել, որ Իգնատիոսը ծնուել է Ասորիքի քաղաքներից կամ գիւղերից մէկում, Ք.յ. 35-40 թուականների միջև ընկած ժամանակահատուածում:*

*Անտիոքը հին աշխարհի երեւելի քաղաքներից մէկն էր: Հելլենական Ասորիքի մայրաքաղաքն էր, հարուստ, բազմազգ, կիրթ ու զարգացած բնակչութեամբ, եւ այդպիսին շարունակեց մնալ նաեւ երբ Ք.ա. 63 թուականին Պոմպէոսի զօրքերը գրաւեցին այն եւ դարձրին Հռոմէական Կայսրութեան Ասորիք նահանգի կենտրոնը: Անտիոքը վիթխարի արժանիքներ է ունեցել Քրիստոնէութեան տարածման գործում: Գործք Առաքելոցում պատմւում է (11, 19...), թէ ինչպէս առաջին քրիստոնեաները, երբ հալածանքների բռնկման պատճառով հարկադրուած հեռացան Երուսաղէմից, սիրալիբ ընդունելութիւն գտան Անտիոքում եւ այդտեղ կազմակերպեցին բաւականին եռանդուն*

ու գործուն մի համայնք: Անտիոքում գործեցին Պօղոսն ու Բառնաբասը, Անտիոք եկաւ նաեւ Պետրոսը. մանաւանդ թէ, ըստ Եւսեբիոսի, Պետրոս Առաքեալը եղաւ այդ Եկեղեցու առաջին Եպիսկոպոսը: Անտիոքում, առաջին անգամ լինելով, Քրիստոսի հետեւորդներին սկսեցին կոչել Քրիստոնեաներ:

Իգնատիոսը Անտիոքի Եկեղեցու Եպիսկոպոսը եղաւ շուրջ 40 տարի, Ք.յ. 70 թուականից մինչեւ 107 թուականը: Որոգիներսի համաձայն, Իգնատիոսը Պետրոս Առաքեալի անմիջական յաջորդն է եղել, մինչ Եւսեբիոսի համաձայն, – ինչը որ առաւել հաւանական է, – Իգնատիոսը եղել է Անտիոքի երրորդ Եպիսկոպոսը, Պետրոս Առաքեալից եւ Էվոզիոսից յետոյ:

Իգնատիոսի ծննդեան, դաստիարակութեան, կրթութեան, հասարակական դիրքի եւ Եպիսկոպոսութեան առաջին տարիների վերաբերեալ ճշգրիտ տեղեկութիւններ չեն պահպանուել:

Ինչ վերաբերուում է նրա անուանը, բոլոր նամակներն էլ սկսւում են հետեւեալ կերպ. «Իգնատիոսը, որին անուանում են նաեւ Թէոֆորոս»: Իգնատիոս անունը լատինական ծագում ունի, առաջացել է «ignis» (հուր, կրակ) բառից: Թէոֆորոս անունը նա հաւանաբար ստացել է Մկրտութեան ժամանակ, որպէս քրիստոնէական որակաւորում: Այստեղ հետաքրքրական է յիշատակել, որ Թէոֆորոս անունը յունարէնում կարող է ունենալ երկու նշանակութիւն. ներգործական եւ կրաւորական: Եթէ շեշտը դրւում է երկրորդ վանկի վրայ (Թէոֆո'րոս), իմաստը ներգործական է եւ նշանակում է Աստծուն կրող, Աստուածակիր: Իսկ եթէ շեշտը դրւում է առաջին վանկի վրայ (Թէոֆորոս), իմաստը դառնում է կրաւորական եւ

նշանակում է Աստծուց կրուած: Այս երկրորդ իմաստի վրայ է հիմնուում այն գեղեցիկ աւանդոյթը, որի համաձայն փոքրիկ Իգնատիոսն էր այն մանուկը, որին Յիսուսն Իր գիրկն առաւ եւ ցոյց տուեց Իր Առաքեալներին, ասելով՝ որ հարկաւոր է այդ մանկան նրման փոքր դառնալ (Մտթ 18, 1-5): Որպէս աւանդոյթ անշուշտ շատ գեղեցիկ է, բայց զուրկ է պատմականութեան որեւէ հիմքից: Իգնատիոսի պարագային աւելի հաւանական է թէոֆորոս անուան առաջին, ներգործական իմաստը. Աստուածակիր: Եւ նա իրօք համապատասխան գտնուեց իր անուանը. սիրոյ բոցավառ հուր եղաւ Տիրոջ նկատմամբ եւ իր գործն ու խօսքերը իրենցում կրում էին եւ բոլորին հաղորդում էին Աստծոյ անճառելի ներկայութիւնը:

Իգնատիոսի կեանքի վերաբերեալ ամենավստահելի տեղեկութիւնները նրանք են, որոնք պարունակւած են իր նամակներում եւ վերաբերում են նրա Եպիսկոպոսութեան եւ միաժամանակ նաեւ կեանքի վերջին ամիսներին:

Ք.յ. Երկրորդ դարի առաջին տարիներն էին: Քաղաքական, հասարակական, տնտեսական աշխարհը գտնուում էր Հռոմէական Կայսրութեան հզօր տիրապետութեան ներքոյ: Նրա լեզուները գրաւել էին ամբողջ Եւրոպան, հիւսիսային Աֆրիկան եւ փոքր Ասիան: Կայսերական գահին բազմել էր ընդունակ եւ իմաստուն մի անձ. Տրայիանոսը:

Բայց – ինչպէս իր ժամանակուայ ամենանշանաւոր անձնաւորութիւնների պարագան էր – նրա վրայ էլ ծանրօրէն կշռում էր մի տեսակ անկարողութիւն՝ հասկանալու կամ գոնէ հանդուրժելու Քրիստոնէութիւնը: Յիսուս Նազովրեցու բերած «Բարի Լու-

ըր» չափազանց հեռու էր իր մտածելակերպից: Հետեւաբար, Տրայիանոսի օրոք եւս, քրիստոնեաների դէմ ուղղուած հալածանքները տարածուած են ամէնուր եւ հասնում մինչեւ հեռաւոր նահանգները: Նաեւ մինչեւ Ասորիք:

Իգնատիոսը, որն այդ ժամանակ Անտիոքի անւանի Եպիսկոպոսն էր, առաջիններից մէկն է, որ ձերբակալուած եւ զինուորների ուղեկցութեամբ ուղարկուած է Հռոմ, որպէսզի այնտեղ դատուի: Բայց դատավճիռն արդէն կայացուած է. դատապարտուել է կրուելու վայրի գազանների հետ, Հռոմի Ֆլաւիական ամֆիթատրոնում (Քոլիզէում), որտեղ հեղելու է իր արիւնը որպէս Աստծուն մատուցուած ընծայ, հաւատքի մէջ եղբայրների համար:

Մի խումբ զինուորների ուղեկցութեամբ – «տասը ընծառիւծներ, որոնց հանդէպ որքան աւելի ես բարիք գործում, նրանք այնքան աւելի են չարանում»<sup>1</sup> – Իգնատիոսը սկսում է իր ճամփորդութիւնը դէպի Կայսրութեան մայրաքաղաք: Երկարատեւ ուղեւորութիւնը կատարւում է մի քանի հանգրուաններով. մասամբ՝ ծովով, մասամբ էլ՝ ցամաքով<sup>2</sup>, հետեւելով հռչակաւոր Վիա Իգնատիա ճանապարհին, որը երկուսուկէս դար առաջ, Ք.ա. 146 թուականին կառուցել էր տուել Մակեդոնիայի կառավարիչ Գայոս Իգնատիոսը:

Յամենայն դէպս, տխուր եւ յուսահատութեան աստիճան ցաւալի ուղեւորութիւնն չէ Իգնատիոսի ճամփորդութիւնը: Մարդկային տեսանկիւնից դիտ-

<sup>1</sup> Հմմտ. Հռոմ. Ե 1.

<sup>2</sup> Նոյն.

լած, այո՛, երկրային իշխանութիւնները նրան զրկել են ապրելու իրաւունքից, բայց Իգնատիոսն այդ դատավճռի մէջ տեսնում է Աստծոյ կամքը. Աստուած, որն իրեն կանչում է դէպի Ինքը: Ինչպէս արեւն է կատարում իր ամէնօրեայ ընթացքը, Իգնատիոսն էլ ընթանում է Արեւելքից դէպի Արեւմուտք, յետոյ յարութիւն առնելու հեռանկարով, ճիշտ ինչպէս արեւը, է՛լ աւելի պայծառ. Աստծոյ անսահման լոյսի մէջ: Մի վիթխարի բերկրանք է ճառագայթում Իգնատիոսի սրտից, մի անզսպելի բաղձանք՝ հասնելու Հռոմ, կըրելու մարտիրոսութիւնը եւ վերջապէս միանալու իր Աստծուն: Ուղեւորութիւն, ուստի, դէպի Լոյսը:

Անտիոքի նաւահանգիստը հանդիսացող Սելեւկիայից ճանապարհ ընկնելով, խումբը ծովային ճանապարհով հասնում է Կիլիկիա, կտրում անցնում է Կիլիկիայի ամբողջ տարածքը, հասնում է Ֆիլադելֆիա, որտեղից էլ՝ Ջմիւռնիա, ուր կանգ է առնում կարճատեւ հանգստի համար: Ջմիւռնիայում Իգնատիոսին ընդունում է Պողիկարպոսը, տեղի երիտասարդ Եպիսկոպոսը, որն Իգնատիոսին կապուած էր մտերմութեան ու մեծարանքի զգացումներով: Մինչ Իգնատիոսը դեռ ճանապարհին էր, նրա ժամանումի լուրը տարածւում է ամէնուր եւ մօտակայ Եկեղեցիներից պատուիրակութիւններ են շտապում Ջմիւռնիա, Սուրբ Եպիսկոպոսին ողջունելու եւ իրենց յարգանքի տուրքը նրան մատուցելու:

Բազմաթիւ ուրիշ պատուիրակութիւնների շարքին անկասկած ներկայ էին Եփեսոսի, Մագնեզիայի եւ Թրալլիսի համայնքների ներկայացուցիչները: Նըրանց եւ նրանց քրիստոնեայ համայնքներին Իգնատիոսն ուղղում է երեք նամակ, որոնք լի են երախ-

տագիտութեան զգացումներով եւ հարուստ՝ հովուական ուսուցումներով ու յորդորներով:

Զմիւռնիայից Իգնատիոսը մի նամակ էլ գրում է Հռոմի քրիստոնեաներին: Ճշգրիտ տեղեկութիւններ չունենք, որպէսզի յստակ կերպով հաստատենք, թէ ի՛նչն է նրան մղել շարագրելու այդ նամակը, որն անկասկած մնում է որպէս համաշխարհային գրականութեան գոհարներից մէկը: Ամենահաւանական ենթադրութիւնը սա է. Իգնատիոսի կողմից Զմիւռնիայում ընդունուած պատուիրակներից ոմանք չափազանց եռանդ գործի դնելով փորձել են յուշել նրան գաղափարը, թէ հնարաւոր է դիմել Կայսրին եւ հայցել նրա գթասրտութիւնը: Այդ նպատակին հասնելու համար բաւական կը լինէր խնդրել հռոմէաբնակ քրիստոնեայ եղբայրներից ինչ որ մէկի միջամտութիւնը, որը որոշակի վստահութիւն եւ ազդեցիկ դիրք էր վայելում կայսերական արքունիքում: Գաղափարը մարդկայնօրէն գնահատելի էր, բայց Իգնատիոսն ուրիշ նըպատակների էր այլեւս ձգտում: Այդպիսի միջամտութիւնը կը փշրէր նրա ամենանուիրական երազանքը. դառնալ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտն ու հետեւորդը, նրա համար հեղելով սեփական արիւնը, հաւատակից բոլոր եղբայրներին ու քոյրերին ի նըպատ: Ուստի իր ձեռքն է առնում գրիչը եւ նամակ է գրում հռոմէաբնակ այդ եղբայրներին, աղերսելով չմիջամտել եւ թոյլ տալ, որ հնարաւորինս շուտով ի կատար ածուի այն՝ ինչն Աստուած պատրաստել է իր համար. «Ես նման առիթ այլեւս չեմ ունենայ՝ հասնելու Աստծուն, իսկ դուք – եթէ լուէք – չէք կարողանայ մի աւելի լաւ գործի կապել ձեր անունը»<sup>1</sup>:

<sup>1</sup> Հռոմ. Բ 1.

Ճամփորդութեան երկրորդ հատուածը, Զմիւռնիայից դէպի Տրովադա, շատ ժամանակ չի պահանջում: Մանաւանդ որ Իգնատիոսին ընկերանում է Բուրրոս Սարկաւազը, որին եփեսացիները յանձնարարել էին ուղեկցել Իգնատիոսին<sup>1</sup>: Տրովադայում նըրանց են միանում նաեւ Փիլոնը եւ Ռէոս Ագաթոպոզոսը, որոնք Իգնատիոսին աւետում են նրա կողմից այնքա՛ն սպասուած բարի լուրը. Ասորիքի Եկեղեցին վերագտել է խաղաղութիւնը<sup>2</sup>, թերեւս հալածանքների դադարելու պատճառով:

Իգնատիոսը Տրովադայում կրկին յայտնուում է մերձակայ համայնքների գորովի եւ ուշադրութեան կենտրոնում: Դրա ապացոյցն են այն նամակները, որոնք Իգնատիոսն առաքում է Ֆիլադելֆիայի ու Զմիւռնիայի քրիստոնեաներին եւ Պողիկարպոսին: Բոլոր այդ նամակներում, ուսուցումներից ու յորդորներից բացի, խնդրում է Անտիոքի համայնքին հասցնել իր ողջոյնը եւ յորդորը՝ փառաւորելու Աստծուն այդ մեծ պարգեւի համար:

Ճանապարհ ընկնելու մի անակնկալ հրաման կրկին քայլքի մէջ է դնում խմբին: Ծովային ճանապարհով հասնում են Մակեդոնիայի Նէպոլիս քաղաքը, որտեղից էլ, Վիա Իգնատիա ճանապարհով, կտրում անցնում են Ֆիլիպպին, Մակեդոնիան եւ Իլլիրիան, հասնելով Դիրախիոն: Այնտեղից ճանապարհը կրկին անցնում է ծովով, հասնում են իտալական թերակղզու հարաւ-արեւելքում գտնուող Բրինդիզի նաւահանգիստը, որտեղից էլ հռչակաւոր Վիա Ափփիա ճանապարհն անշեղ հասցնում է նրանց Հռոմ:

<sup>1</sup> Եփես. Բ 1.

<sup>2</sup> Հմմտ. Ֆիլ. ԺԱ; Զմիւռ. Ժ.



Ք.յ. 107 թուականի ձմեռն է<sup>1</sup>: Դատավճիռն արդէն կայացուել է: Հաւանաբար ուշացումներ տեղի չեն ունենում եւ դատավճիռն իսկոյն ի կատար է ածւում:

Հոգեւոր ներքին անդորրի, խաղաղութեան մէջ, հաւանաբար՝ համընդհանուր անտարբերութեան մըթնորոտում, Իգնատիոսն ընծայում է իր գոհը: Սակաւաթիւ ընկերների ընթացքում վայրի գազանները – որոնց ինքն իսկ մտադիր էր ոգեւորել, եթէ չափազանց հեզ գտնուէին – յօշոտում են այն մարմինը, որի մէջ չկայ այլեւս մարդկային ոչ մի ցանկութիւն<sup>2</sup>: Եւս մի Մարտիրոս իր ցնծալի մուտքն է գործում Երկինք:

Դա տեղի է ունենում Դեկտեմբերի 20ին, ինչպէս վկայում է Անտիոքեան Յայսմաւուրքը (Է 1): Քրիստոնեաներից ոմանք հաւաքում են նրա մարմնի մնացորդները, որպէս սրբազան մասունքներ, եւ տեղափոխում են Անտիոք:

### Ողջոյնի ու յորդորների եօթը նամակներ

Սուրբ Իգնատիոս Անտիոքացուց մեզ են հասել միայն այն եօթը նամակները, որոնք այստեղ հրատարակում ենք:

Իգնատիոսն, առաջին հայեացքից, կարող է մատենագիր չթուալ այդ բառի բուն իմաստով, եւ իրա-

<sup>1</sup> Ըստ Եւսեբիոս Կեսարացու: 107 թուականը աւանդաբար ընդունուել եւ գրեթէ համատարած է դարձել, թէեւ որոշ ուսումնասիրողներ առաջարկում են տեղափոխել զէպքը 110-118 թուականների միջեւ:

<sup>2</sup> Հռոմ. Է-Ը.

կանում ո՛չ էլ կամեցել է լինել այդպիսին: Նրա մտահոգութիւնները գերազանցապէս միատիկ եւ հովուական բնոյթի էին, ամենայն հաւանականութեամբ՝ նա չէր էլ երեւակայում, որ ողջոյնի ու յորդորների այդ թերթիկները պահպանուելու էին, ընթերցուելու եւ հիացմունք առաջացնելու մինչեւ մեր օրերը:

Արդարեւ, Իգնատիոսի նամակների մասին չըպէտք է մտածենք այնպէս՝ ինչպէս, օրինակի համար, մտածում ենք Կիկերոնի կամ ա՛յլ «դասականների» նամականիների մասին. վերջինների համար նամակագրութիւնն իրենից ներկայացնում էր մի իրական գըրական ոճ, սկզբից եւեթ սահմանուած՝ հրապարակման, որի պատճառով էլ՝ իւրաքանչիւր տառ ենթարկւում էր յղկման ու ոճաւորման ուշադիր աշխատանքի: Իգնատիոսի համար, ինչպէս արդէն ասացինք, խօսքը վերաբերւում էր պարզունակ թերթիկների, որոնք ուղարկւում էր այն համայնքներին, որոնց կողմից արժանացել էր մտերմութեան ու քաջալերանքի, նրանց պատուիրակութիւնների միջոցով: Գրում էր, որպէսզի նախեւառաջ շնորհակալութիւն յայտնէր նրանց ազնիւ վարմունքի համար եւ որպէսզի քրիստոնեաներին կոչ ուղղէր՝ համերաշխութեամբ եւ ճշմարիտ հաւատքով հետեւելու Տիրոջը:

Այդուհանդերձ, այդ նամակներն իսկոյն այնքա՛ն խթանիչ ու ոգեւորիչ, բովանդակութեամբ այնքա՛ն հարուստ, աւետարանական մաքուր քնարականութեամբ այնքա՛ն համակուած թուացին քրիստոնէական համայնքներին, որ անմիջապէս բոլորի մեծարանքի առարկան դարձան: Տարբեր քաղաքների քրիստոնէական տարբեր համայնքներ սկսեցին միմեանց փոխանցել այդ նամակները, այնպէս՝ որ շուտով վըտանդ առաջացաւ, որ նամակներից ոմանք կարող էին

կորել, կամ – ինչպէս յաճախ եւ հեշտօրէն էր տեղի ունենում հնում – ոճով ու մտքերով Իգնատիոսի նամակներին նմանուող անանուն ինչ որ մի գրութիւն վերագրուէր նրա գրչին եւ սխալմամբ ներմուծուէր Իգնատիոսի նամականու ցանկի մէջ:

Թերեւս այսպէս է բացատրուում այն փաստը, որ հնում շրջանառութեան մէջ էին գտնուում Իգնատիոսի նամականու երեք տարբեր հաւաքածոներ: Սրան է վերաբերուում բանասէրների կողմից երկար ժամանակ ծեծուած «Իգնատիոսական հարցը», որին մենք այստեղ մանրամասն չենք անդրադառնայ, քանի որ դա չէ այս հրատարակութեան նպատակը: Բաւական է միայն ասել, որ այսօր բոլորի կողմից ընդունուած եւ վաւերական ճանաչուածը դա այսպէս կոչուած «Համառօտ» հաւաքածոն է: Նրան մաս են կազմում եօթը նամակներ. Եփեսացիներին, Մազնեզիացիներին, Թրալիսացիներին, Հռոմէացիներին, Ֆիլադելֆիացիներին, Ջմիւռնիացիներին, Պողիկարպոսին: Այս համոզումը հիմնուում է Սուրբ Պողիկարպոսի եւ Եւսեբիոս Կեսարացու<sup>1</sup> հեղինակաւոր վկայութիւնների վրայ, ինչպէս նաեւ՝ վերջին երեք դարերի ընթացքում կատարուած խորաթափանց ուսումնասիրութիւնների վրայ, որոնք իրենց գազաթնակէտին հասան Լայթֆոլտի եւ Փունկի կատարած մանրակրկիտ քննութիւններով:

<sup>1</sup> Իր «Եկեղեցական Պատմութիւն» աշխատութիւնում (Գ 36) Եւսեբիոս Կեսարացին այսպէս է թուարկում Իգնատիոսի նամակները. «Ջմիւռնիայում գտնուած ժամանակ մի նամակ գրեց Եփեսոսի եկեղեցուն, մի ա՛յլ նամակ՝ Մազնեզիայի եկեղեցուն, եւ մի երրորդ նամակ՝ Թրալիսի եկեղեցուն: Սրանցից բացի, գրեց նաեւ Հռոմի եկեղեցուն [...]: Տրովադայից, ապա, նոր նամակներ առաքեց Ֆիլադելֆիացիներին, Ջմիւռնիայի եկեղեցուն, եւ ի մասնաւորի՝ Պողիկարպոս Եպիսկոպոսին»:

Երկրորդ հաւաքածոն, որ կոչւում է «Երկար», նախ՝ յիշուած եօթը նամակները ներկայացնում է աւելի երկար տարբերակով, ապա՝ այդ եօթը նամակներին աւելացնում է եւս վեցը նամակ. Փիլիպեցիներին, Տարսոնացիներին, Անտիոքացիներին, Էրոնին, առաւել մի նամակ Իգնատիոսից Մարիամ Քասսոբուացուն եւ մի նամակ էլ Մարիամ Քասսոբուացուց Իգնատիոսին: Ինչ վերաբերւում է առաջին եօթը նամակների առաւել երկար տարբերակ ունենալուն, յստակ է, որ աւելացուած հատուածները դրանք ծանօթագրութիւններ են կամ դժուարիմաց հատուածներին տրուած բացատրութեան փորձեր: Միւս վեց նամակները ինչ որ մէկի գործն են, որն Իգնատիոսին նամակելու փորձ է կատարել. մի բան, որ հնում տարածւած երեւոյթ էր:

Երրորդ՝ «Ամենակարճ» հաւաքածոն Իգնատիոսի նամակների թիւը սահմանափակում է միայն երեքի. Եփեսացիներին, Հռոմէացիներին, Պողիկարպոսին: Այս երեք նամակների բնագիրն էլ, իր հերթին, բաւականին կրճատուել է: Այս երրորդ հաւաքածոն պահպանուել է ասորական ձեռագրերում. ամենայն հաւանականութեամբ՝ խօսքը վերաբերւում է Իգնատիոսի վաւերական նամականուց կատարուած հատընտիր քաղուածքի, որ կատարուել է ինչ որ մի հերետիկոսի ձեռքով, որը կամեցել է Իգնատիոսի նամականուց դուրս թողնել այն հատուածները, որոնք ակնյայտ կերպով ընդդիմանում էին իր սեփական դիրքորոշումներին:

Իգնատիոսի նամակների – յատկապէս Հռոմէացիներին ուղղուած նամակի – վերաբերեալ յայտնի է Փոլ Ալլարդի կարծիքը. «Ինչպէս քրիստոնէական հին

գրականութիւնը, անկասկած նաեւ միւս բոլոր մշակոյթների հին գրականութիւնները առաւել գեղեցիկ ոչինչ չեն ընծայում: Գրական կերպի թերութիւնները, դժուարիմաց տողերն ու կրկնութիւնները վերանում են բովանդակութեան անհամեմատելի մեծութեան առաջ»<sup>1</sup>:

Կարծիք, որին կարելի է լիովին համաձայնուել: Իգնատիոսի հոգին չափազանց լի էր եւ զգացմունքների հոսանքը չափազանց ուժգին, որպէսզի շարահիւսական կանոնները միշտ յարգուէին եւ բոլոր հատուածներն անխտիր շարադրուէին յստակ եւ իսկոյն ընկալելի ոճով: Յայտնի բոլոր ուսումնասիրողներն են սա ընդգծում: Հեղինակաւոր Էդուարդ Նորդէն, օրինակ, գրում է. «Նամակների իւրաքանչիւր բառից, իւրաքանչիւր խօսքից ճառագայթում է մի յստակ, շեշտուած, ցայտուն անհատականութիւն, որն արտայայտուած է մտքի սքանչելի նրբութեամբ: Հնարաւոր չէ երեւակայել առաւել անձնական մի գործ: Ինչին որ համապատասխանում է նաեւ ոճը. ամենավեհ կրքոտութեամբ եւ կերպի ազատութեամբ: Այդ ժամանակաշրջանի ուրիշ ո՛չ մի գրութիւն լեզուական ձեւակերպումների վրայ բռնութիւն չի գործադրում նոյնքան ցայտուն կերպով: Ռամկաբանութիւններ, լատինաբանութիւններ, նոր բառեր ու բառակապակցութիւններ. բոլորն էլ՝ չլսուած համարձակութեամբ: Մտքեր, որոնք թւում է՝ թէ մանրամասն քննարկուելու են, սկսում են եւ ապա յանկարծակի ընդհատուած: Բայց այնպիսի տպաւորութիւն չկայ, թէ դրա պատճառը կարող է լինել յունարէնով յստակ ու ան-

<sup>1</sup> P. ALLARD, *Storia critica delle persecuzioni*, Firenze 1931, p. 174.

սխալ կերպով արտայայտուելու ազգութեամբ ասորի հեղինակի անկարողութիւնը, այն նոյն կերպ՝ ինչպէս փիւնիկ Տերտուղիանոսի մօտ պատճառը լատիներէնի անգիտութիւնը չէ: Երկուսի մօտ էլ աւելի ներքին, հոգեւոր հրայրքն ու կիրքն են, որ ազատոււմ են ձեւերի ու կերպերի կապանքներից»<sup>1</sup>:

Իգնատիոսի նամակներում անկասկած բացակայում են այն ներդաշնակութիւնը, այն հաւասարակշռութիւնը, գաղափարների այն համակարգուած շարադրութիւնը, որոնք կիկերոնեան տիպարի համաձայն՝ կազմում են «մատենագրի» բնորոշ յատկանիշները: Բայց եթէ ճիշտ է, որ ոճը դա մարդն ինքն է, մարդու ինքնութիւնը, եթէ գրել՝ նշանակում է արտայայտուել, բացայայտուել, մասնակից դարձնել սեփական զգացումներին ու ապրումներին, ուրիշների փոխանցել սեփական հոգու ու սրտի հրայրքը, կարող ենք, ուրեմն, առանց երկմտանքի հաստատել, որ Իգնատիոս Անտիոքացին մատենագիր է, եւ մե՛ծ մատենագիր:

Թերեւս՝ իր կողմից անգիտակցօրէն. անկասկած՝ առանց կամենալու, առանց այդ տիտղոսը փնտրած կամ ցանկացած լինելու:

## Մամականու հիմնական նիւթերը

Անկասկած, Իգնատիոսի նամականու առաւել հետաքրքրականութեան եւ առաւել արդիականութեան պատճառը կայանում է նրա մտքի հարստութեան մէջ: Ուսուցումները, յորդորները, յատկապէս՝

<sup>1</sup> E. NORDEN, *Die antike Kunstprosa*, II, Leipzig 1898, p. 511.

այդ ամէնի գաղափարային հիմքն ու հիմնաւորումները, որոնք մարտիրոսութեան պատրաստուող Եպիսկոպոսը մէջբերում է շարունակ, վաւերական են բոլոր ժամանակների մարդկանց համար, յատկապէս՝ հաւատաւոր քրիստոնէաների համար, որոնք կոչուած են հաւատքի նմանատիպ փորձառութիւն ապրելու, թէեւ տարբեր ժամանակներում եւ տարբեր պարագաներում ու իրավիճակներում:

Արդէն ասացինք, որ Իգնատիոսի նամականին գրասեղանի առաջ հանդարտօրէն կատարուած աշխատանքի արդիւնքը չէ: Չպէտք է, հետեւաբար, ակընկալենք գտնել նրանում համակարգուած մի միտք: Ընդհակառակն, քանի որ խօսքը վերաբերում է յանկարծակի շարադրուած եւ պահի խորհրդագրացական (միտտիկ) հրայրքի համաձայն թելադրուած գրութիւնների, նրանցում գտնում ենք իրար յաջորդող պատկերների, սկզբում հազիւ ակնարկուած եւ յետոյ կըրկին քննարկուած գաղափարների, կարճառօտ, մասնատուած արտայայտութիւնների մի ամբողջութիւն: Նմանում են լուսեղէն փայլատակումների, սլացիկ, վայրկենական, բայց ազդեցիկ եւ ուժգին՝ թափանցելու մինչեւ հոգու խորքերը: Այստեղից էլ ահա ծընւում է անհրաժեշտութիւնը, ընթերցողի համար, որդեգրելու աւելի խորհրդածական՝ քան քննողական դիրքորոշում, դարերի հեռաւորութիւնից բացայայտելու համար ներկայութիւնն այն միեւնոյն Հոգու, որի ներշնչմամբ են շարադրուել այդ էջերը:

Թուարկել այստեղ, արագ համադրութեամբ թէեւ եւ, Իգնատիոսի մտքի էական բոլոր կէտերը, տաժանելի եւ թերեւս նաեւ անօգուտ աշխատանք կը լինէր: Արդիւնքում կը ստացուէր նախադասութիւնների չոր ու ցամաք մի ցանկ, որի ներկայացրած վտանգներից

մէկն էլ այն կը լինէր, որ Իգնատիոսի գործածած արտայայտութիւններէր շատերը, իրենց բնագրային ամբողջականութիւնից կտրուելով, կը կորցնէին իրենց իմաստն ու արդիւնաւէտութիւնը:

Կարող ենք, սակայն, թուարկել մի քանի նիւթեր, որոնք բոլոր նամակներում էլ առաւել կամ նըլազ չափով ներկայ լինելով՝ կազմում են ամբողջ նամականու գաղափարային շարժիչ ուժը:

#### **Ա. Իգնատիոսը որպէս Եկեղեցու միութեան եւ հարդութեան պաշտպան**

Այս հարցն ակնյայտ է նամակներէր իւրաքանչիւրում: Քննարկելում է տարբեր տեսանկիւններէր դիտուած, որպէս Հիմնաւորում ունենալով հետեւեալ տարրերը.

– Քրիստոսը Եկեղեցու գլուխն է: Գլուխը չի կարող ծնուել առանձին, առանց անդամների (Թրալ. ԺԱ).

– Ուր Քրիստոսն է, այնտեղ է Ընդհանրական Եկեղեցին (Զմիւռ. Ը).

– Ինչպէս Քրիստոսն է սիրում Եկեղեցուն, այնպէս էլ եղբայրները եւ ամուսինները պէտք է սիրեն միմեանց (Պող. Ե).

– Միութեան առանցքը եւ Քրիստոսի տեսանկիւններկայացուցիչը Եպիսկոպոսն է (Մազ. Գ.Գ, Թրալ. Գ, Զմիւռ. Ը).

– Եկեղեցիները պէտք է միութեան մէջ լինեն եւ հաղորդութեան կապեր պահպանեն: Խորհրդանշական է Անտիոքի Եկեղեցուն ուղղուած «ուրախակցու-



թեան առաքելութեան» դէպքը (Զմիւռ. ԺԱ, Ֆիլ. Ժ, Պող. Է).

– Միութեան աղբիւրը միասնական մասնակցութիւնն է Սուրբ Պատարագին (Ֆիլ. Դ, Եփես. ԺԳ) եւ ծիսական արարողութիւններին (Եփես. Ե).

– Միութեան մէջ մնալով՝ յարատեւ մասնակցում ենք Աստուծոյ կեանքին (Եփես. Դ).

– Ուրիշ, զղջալով, վերադառնում են Եկեղեցու միութեանը, նրանք էլ են պատկանում Աստուծուն (Ֆիլ. Գ).

– Ուր իշխում են բաժանումներն ու զայրոյթը, այնտեղ չի բնակւում Աստուած (Ֆիլ. Ը):

### Բ. Իգնատիոսը որպէս ուղղադասանութեան պաշտպան

Իգնատիոսի նամակներում քրիստոնէական հաւատքի հական ճշմարտութիւնները չեն քննարկւում կամ բացատրւում քարոզի կամ նոր կատարուող ուսուցման ձեւով. ներկայացւում են որպէս համընդհանուր, բոլորի կողմից ճանաչուած ու անվիճելի տրւեալներ: Իգնատիոսը հաւատքի ճշմարտութիւնների մասին խօսում է լիակատար բնականութեամբ, ճիշտ որովհետեւ դրանք տեսնում է որպէս իւրաքանչիւր քրիստոնեայի ժառանգութիւնը: Միմիայն երբ գտնւում է հերետիկոսութեան կամ հերձուածողութեան փորձերի դիմաց, Իգնատիոսի խօսքերը ստանում են բոցեղէն երանգ եւ նամակը մի պահ ձեռք է բերում ջատագովութեան վճռորոշ նկարագիր:

– Քրիստոնէական հաւատքի առաջին առարկան Աստծոյ միութիւնն է: Մարգարէներն էլ հալածանքներ կրեցին այս ճշմարտութիւնը պաշտպանելու համար (Մազ. Ը).

– Աստուած մէկ է, երեք Անձերով. Հայրը, Որդին, Սուրբ Հոգին (Եփես. Թ, Մազ. ԺԳ 1-2).

– Աստուած յայտնուել է յանձինս Քրիստոսի՝ Իր Որդու, որն Ինքն էլ Աստուած է (այս ճշմարտութիւնը ներկայ է նամակներից իւրաքանչիւրում, գրեթէ բոլոր հատուածներում).

– Քրիստոսն իսկապէս մարմնացել է, իսկապէս տառապել է, իսկապէս մահացել է եւ յարութիւն առել (Թրալ. Թ-ԺԱ, Զմիւռ. Ա-Ե).

– Խորհուրդները հաստատուել են Քրիստոսի կողմից: Ամենասուրբ Հաղորդութիւնը դա Քրիստոսի Մարմինն ու Արիւնն է (Հռոմ. Է), հակաթոյնն է՝ չմահանալու համար (Եփես. Ի), Եկեղեցու միութեան աղբիւրն է (Ֆիլ. Դ, Եփես. Ե): Մկրտութեան եւ Ամուսնութեան համար պահանջուած է Եպիսկոպոսի միջամտութիւնը կամ համաձայնութիւնը (Զմիւռ. Ը, Պող. Ե).

– Աստծոյ Խօսքի մարդեղութիւնը Սուրբ Հոգու գործն է (Եփես. ԺԸ): Սուրբ Հոգու առաքելութիւնն է նեցուկ լինել քրիստոնեաներին եւ նրանց միաւորել՝ Հօր տաճարի կերտման համար (Եփես. Թ): Սուրբ Հոգին քրիստոնեաներին մղում է միութեան եւ հետեւելու Յիսուս Քրիստոսին (Ֆիլ. Է).

– Հաւատքի մաքրութիւնը երաշխաւորուած է Եպիսկոպոսի հանդէպ համոզուած հնազանդութեամբ: Եպիսկոպոսը տեղական Եկեղեցու գլուխն է, Աստծոյ

փոխանորդը: Նրան գործակցում են քահանաներն ու սարկաւագները, որոնց հարկաւոր է յարգել: Եկեղեցու այս նուիրապետական կառոյցը հաստատուել է Առաքեալների կողմից (այս գաղափարներին հնարաւոր է հանդիպել նամակներից իւրաքանչիւրում. ի մասնաւորի, տես՝ Թրալ. Գ.Է.ԺԳ, Մադ. Չ, Եփես. Չ, եւ այլն):

– Ուղղադաւանութիւնը հարկաւոր է պաշտպանել անյապաղ եւ ամենայն խստութեամբ: Հերետիկոսներից եւ հերձուածողներից հարկաւոր է խուսափել գրեթէ սոսկումով, որովհետեւ նման են վայրագ գազանների (Եփս. Է), մարդակերպ գազանների (Զմռ. Դ), բոյսեր, որոնք Հօր տնկարանից չեն (Յիլ. Գ): Նրբանց հետ ոչ մի յարաբերութիւն չպէտք է ունենալ. միմիայն լաւ է աղօթել նրանց համար, որպէսզի դարձի գան (Զմիւռ. Դ):

#### **Գ. Իգնատիոսը որպէս Յիսուս Քրիստոսի Աստծուն սիրահարուած հոգի**

Աստուած, որ յայտնուել է յանձինս Յիսուս Քրիստոսի, Իգնատիոսի մեծ եւ միակ «կիրքն» է: Կարելի է ասել, որ Իգնատիոսն ուղղակի չի կարողանում մի միտք արտայայտել կամ մի յորդոր ուղղել առանց դիմելու Աստծոյ եւ Յիսուս Քրիստոսի Անուանը: Սա կարող է բացատրուել միմիայն այն լիասիրտ ու անզսպելի սիրով, որով համակուած էր Իգնատիոսի հոգին:

Աստծոյ Սէրը քրիստոնեաների միակ օրէնքն է.

– Որեւէ մի գործ կատարել՝ մտածելով, որ Աստուած բնակուում է մեր մէջ (Եփես. ԺԵ):

– Յիսուսի եւ Հօր հետ միութիւնը դա ամենակարեւոր իրողութիւնն է (Մազ. Ա.ԺԱ).

– Փոխադարձ սէրը ծնունդ եւ զարգանում է Յիսուս Բրիստոսի մէջ (Մազ. Չ).

– Գոյութիւն չունի Յիսուս Բրիստոսից առաւել գերազանց անձ կամ իրողութիւն (Մազ. Է).

– Յիսուսի սէրը քրիստոնեաներին երզմնեցնում է՝ լինելու հաւատարիմ (Թրալ. Չ).

– Հարկաւոր է խուլ լինել այն ճառերի դիմաց, որոնք չեն խօսում Յիսուս Բրիստոսի մասին (Թրալ. Թ): Ով չի խօսում Յիսուս Բրիստոսի մասին, նման է թաղմանական կոթողի, մահարձանի. այդպիսին դատարկ գերեզման է (Ֆիլ. Չ).

– Բրիստոնեան ինքն իրեն չի պատկանում: Նա Աստծոյ տրամադրութեան ներքոյ է (Պող. Է):

Բայց ամէնից աւելի *Իգնատիոսն ինչն է*, որ ապրում է միմիայն Աստծոյ համար: Նրա սիրտը բաբախում է, նրա հոգին թրթռում է միմիայն Աստծոյ համար: Աստուած նրան ներշնչում է վեհ ու վսեմ մտքեր (Թրալ. Դ). նա իր շղթաները կրում է յանուն Բրիստոսի (Եփես. Չ, Թրալ. ԺԲ). Աստծոյ համար տառապելու փափաքը նրա հոգում դառնում է բուռն ու անդիմադրելի (Թրալ. Դ). դիմանում ու համբերում է ամէն ինչի, միայն թէ մասնակից դառնայ Յիսուս Բրիստոսի չարչարանքներին (Զմիւռ. Դ). խնդրում է աղօթել իր համար, որպէսզի կարողանայ հասնել Աստծուն (Զմիւռ. ԺԱ):

Աստծոյ հանդէպ այդ սէրը հասնում է իր գագաթնակէտին, երբ Իգնատիոսն արդէն մօտիկից է տեսնում մարտիրոսութեան իրողութիւնը եւ գրեթէ

կանխաւ ճաշակում է Աստծոյ հետ երանելի միութիւնը: Այդպիսին է Հռոմի քրիստոնեաներին ուղղած նամակի պարագան, ուր զգացմունքների յորդառատութիւնը դառնում է լիրիզմ, բարձրակարգ քնարերգութիւն: Մեկնաբանութեան որեւէ փորձ կարող է նսեմացնել այդ մաքրափայլ գոհարի պայծառութիւնը: Ամենանշանակալի հատուածների մէջբերումն անգամ անպատշաճ կը լինի: Հրաւիրում ենք այդ նամակն ամբողջութեամբ ընթերցել հաւաք մտքով, հոգու ուշադրութեամբ եւ երանի թէ՛ աղօթքի մթնոլորտում: Միմիայն այդպէս է հնարաւոր ընկալել նրա պատգամը, հասկանալ այն եւ ճաշակել:

#### **Իգնատիոսը որպէս «միութեանը հակուած մարդ»**

Մատնանշումները, որոնք նախորդ էջերում կատարեցինք, թէեւ սակաւաքանակ են ու անզարդ, առանց յաւելեալ մեկնաբանութիւնների, այնուամենայնիւ յառաջ են քաշում մի հարց. իրականում, իր անհատականութեան ամենախորքում, ո՞վ էր Իգնատիոսը, ինչպէ՞ս է ապրել իր մարդկային փորձառութիւնը, իր քրիստոնէական եւ եպիսկոպոսական կեանքում ինչպէ՞ս է վկայել այն ամէնին, ինչը բանաւոր կամ գրաւոր կերպով ուսուցանում էր իր ճանապարհին հանդիպած համայնքներին:

Այս հարցերի վերաբերեալ ուղղակի վկայութիւններ չունենք իրեն ժամանակակից հեղինակներից: Ճիշտն ասած, սակայն, կարիքն էլ չունենք արտաքին քննարկումների: Իգնատիոսի պարագային եւս – ինչպէս Պօղոսի, Պետրոսի, միւս Առաքեալների եւ առաքելաշաւիղ Հայրերի դէպքում – պերճախօս կեր-

պով խօսում են այն գրութիւնները, որոնք հասել են մեզ: Իգնատիոսի մարդկային-հոգեւոր կերպարն ու դիմագիծը լիակատար ակնյայտութեամբ ցայտում են իր նամակներից. անմնացորդ նուիրում գաղափարականին, անսահմանափակ փափաք՝ լինելու եւ ապրելու Աստծոյ համար, անսասան հաւատք՝ յարութիւն առած, յաւիտեան կենդանի եւ այսօր իսկ ներկայ Տիրոջ հանդէպ, անզսպելի իղձ՝ հաղորդելու եւ պարգեւելու ներանձնական այն հարստութիւնները, որոնք Սուրբ Հոգին թելադրում է իր սրտում, հովուական բուռն հոգածութիւն, որը մինչ մղում է նրան եռանդուն կերպով պաշտպանելու հաւատքի ուղղադաւանութիւնը, միաժամանակ նրան իւրայատուկ կերպով ուշադիր է դարձնում աղքատների, տկարների, այրիների, ստրուկների կարիքներին ... : ... Եւ այս թուարկումը հնարաւոր է տակաւին երկար շարունակել:

Իր անձի ու անհատականութեան մասին լաւագոյն սահմանումը, սակայն, թերեւս Իգնատիոսն ինքն է տուել, գրելով Ֆիլադելֆիայի քրիստոնեաներին. «Ես, ուստի, որքանով որ դա իմ պաշտօնն էր, գործեցի որպէս միութեանը հակուած մի մարդ» (Ը 1):

Ա.հ.ա՛. միութիւնը: Ինչպէս իրաւացիօրէն ընդգրծում են Իգնատիոսի նամակների բոլոր հեղինակաւոր ուսումնասիրողները, միութիւնը կարող է նկատուել որպէս Իգնատիոսի բոլոր նամակների գաղափարային առանցքը, դրանց ընկալման ու ըմբռնման բանալին: Եւ կարծում ենք սխալ չի լինի հաստատել ամենայն վստահութեամբ, որ հէնց միութեան հասկացողութիւնն է, իր հնարաւոր բոլոր տեսանկիւններից դիտուած, որ Իգնատիոսը կամեցել է իրականացնել եւ ապրել իր անձում, ամէն ինչից վեր: Մինչեւ իսկ չափազանց ակնյայտ է, որ նա չէր կարողանայ գտնել այդ-

քան ազդու, տպաւորիչ ու տեւական շեշտադրումներ այդ հարցի շուրջ, եթէ հէնց միութեան առանցքի շուրջը կենտրոնացած չլինէին իր անձնական իղձերն ու իր հովուական ամբողջ գործունէութիւնը:

Միութիւնն իր արմատը նախեւառաջ գտնում է հէնց Աստուծոյ միութեան մէջ: Մագնեզիայի եկեղեցուն գրելիս Իգնատիոսը յիշում է Մարգարէների գործը, յատկապէս՝ քարոզելու ներշնչումը, «որպէսզի անհաւատները համոզուէին, որ կայ միայն մէկ Աստուած, որը յայտնուել է յանձինս Յիսուս Քրիստոսի» (Ը 2): Բայց այդ «միայն մէկ Աստուած» հասկացողութիւնը Իգնատիոսի համար սոսկ վերացական հաւատքի առարկայ է, այլ՝ միակ իղձը, ձգտումը, տենչանքը, որ իմաստ ու լիութիւն է հաղորդում իր կեանքին:

Այստեղից է յառաջ գալիս այն անդադար կրկնութիւնը բայերի, ինչպիսիք են «ձգտել Աստծուն», «ստանալ Աստծուն», «հասնել Աստծուն», «միանալ Աստծուն»: Սրանով է բացատրւում որոշումը, որով Իգնատիոսը դիմում է Հռոմի քրիստոնեաներին, գրեթէ հրամայելով ոչ մի կերպ չմիջամտել՝ խոչընդոտելու համար դատավճռի կայացումը. «Ես կամենում եմ, որ տակաւին վաւերական մնայ այն ամէնն, ինչ ուսուցանում էք ու յանձնարարում» (Գ 1): Այս խօսքերով կամենում է ասել, որ յատկապէս իր նկատմամբ նրանք չպէտք է լքեն իրենց սովորական համոզմունքը՝ թողնելու ամէն բան Աստծոյ ձեռքերում: Այսպիսով է հասկանալի դառնում այն սուրբ պարծանքը, որ նա զգում է, որովհետեւ Աստծուց ընտրուել է որպէս թանկարժէք ընծայ. «Աստուած Ասորիքի Եպիսկոպոսին արժանի դարձրեց իր ընտրութեանը, բերելով նրան Արեւելքից Արեւմուտք: Իմ համար գեղեցիկ

բան է մայր մտնել աշխարհից՝ Նրանում յարութիւն առնելու համար» (Բ 2): Այսպիսով է, տակաւին, արդարանում Իգնատիոսի այն յայտարարութիւնը, թէ Աստծոյ համար մարտիրոսութիւն կրելը իր համար իրական բերկրանք է. «Հրապարակաւ յայտարարում եմ բոլորին, որ ես յօժարութեամբ եմ մահանում Աստծոյ համար, եթէ դուք չխոչընդոտէք ինձ դա: Աղաչում եմ ձեզ, իմ համար մի՛ դարձէք անպատեհ բարեացակամութիւն» (Դ 1):

Աստծոյ միութիւնից՝ Յիսուս Քրիստոսի միութեանը: Իգնատիոսի վարդապետութեան կենտրոնն է Յիսուս Քրիստոսի այս կատարեալ միութիւնը, միութիւնը մարմնի եւ հոգու, միութիւնը մարդկային բնութեան եւ աստուածային բնութեան՝ յանձինս Յիսուս Քրիստոսի, Մարդ-Աստծոյ: Որպէս տիպար օրինակ կարող ենք մէջբերել Եփեսոսի եկեղեցուն ուղղած նամակի յայտնի հատուածը (Է 2), որն այստեղ ներկայացնում ենք զուգահեռ երկու սիւնակների վրայ, ընդգծելու համար այն հակադրոյթները, որոնք ակնյայտ են դարձնում երկու բնութիւնների բնորոշ յատկանիշները մէկ միութեան ներսում.

Միայն մէկ բժիշկ կայ,	եւ հոգեղէն,
մարմնեղէն	եւ անձին,
ծնուած	Աստուած,
արարուած մարմնի մէջ՝	ճշմարիտ Կեանք,
մահուան մէջ՝	եւ Աստծուց,
ծնուած՝ Մարիամից	ապա՝ անչարչար,
նախ՝ չարչարելի,	
Յիսուս Քրիստոս, մեր Տէրը:	



Այս ճշմարտութիւնն Իգնատիոսի համար նշանակում է մարդկային կեանքի ու գոյութեան առանցքը: Այս ճշմարտութեան պաշտպանութեան հարցում – եւ միմիայն այս հարցում – Իգնատիոսն անկարող է թւում զսպելու ջատագովական եռանդն ու հրայրքը, եւ ականատես ենք լինում այն բանին, թէ ինչպէս են նրա գրչից ծնւում սաստիկ խստութիւն պարունակող արտայայտութիւններ: Հերետիկոսները (խօսքն այդ ժամանակ վերաբերւում էր յատկապէս Յուդայականներին եւ Դոկետներին), որոնք մերժում կամ նախադրեալներ էին ստեղծում մերժելու համար Յիսուս Քրիստոսի միութիւնը, ուղղակի – ո՛չ աւել, ո՛չ պակաս – «կատաղած շներ» են (Յփես. Է 1)<sup>1</sup>, «գայլեր» (Ֆիլ. Բ 2), «մարդակերպ գազաններ» (Ձմիւռ. Դ 1), «չար ծիւեր, որոնք մահուան պտուղ են ծնում» (Թրալ. ԺԱ 1):

Այս արտայայտութիւնները կարող են հասկացւել միմիայն եթէ մոռացութեան չմատնենք փաստը, որ Յիսուս Քրիստոսը, սոսկ գաղափար կամ հաւատքի վերացական առարկայ լինելուց շատ հեռու, Իգնատիոսի համար մի Անձ է, այն Յիսուսն է, Մարիամից ծնուած Աստծոյ Որդին, որը մեզ յայտնեց Հօր էութիւնը, այս աշխարհում ապրեց բարեգործելով, իսկապէս մահացաւ, իսկապէս յարութիւն առաւ, տակաւին ողջ է, ներկայ է, գործում է, հոգին ու կեանքն է Իր հաւատացեալներին, Իր Եկեղեցու ամէնօրեայ սնունդն է Ամենասուրբ Հաղորդութեան միջոցով: Մի խօսքով,

<sup>1</sup> Նման արտայայտութիւնների հանդիպում ենք նաև Պօղոս Առաքեալի նամակներում: Տե՛ս, օրինակի համար, Փլպ. 3, 2. «Զգուշացէ՛ք շներից, զգուշացէ՛ք չար մշակներից...»:

իր՝ Իգնատիոսի Տէրն է. «Ինձ ի՞նչ օգուտ, եթէ մէկն ինձ գովում է, բայց անարգում է իմ Տիրոջը, չընդունելով, որ Նա օծտուած էր մարմնով» (Զմիւռ. Ե 2):

Յիսուս Քրիստոսի միութիւնը նախադրեալն է Քրիստոսի հետ քրիստոնէականի միութեան, մի իրողութիւն, որն Իգնատիոսի նամակներում արտայայտուած է ամէնուր եւ վաւերական է ինչպէս անհատ հաւատացեալի դէպքում, որը Քրիստոսի մարմնի եւ հոգու, այսինքն՝ Նրա մարդկութեան եւ աստուածութեան հետ անձնական շփման միջոցով հասնում է «ընդմիշտ ապրելու Յիսուս Քրիստոսի մէջ» (Եփես. Ի 2), այնպէս էլ՝ ամբողջ հասարակութեան, որը որպէս «Քրիստոսի մէջ ապրող բազմութիւն» (Թրալ. Ը 2) իր կեանքի գոյապատճառն ու ակունքը գտնում է Քրիստոս-Տիրոջ Անձին լիակատար կերպով յարելու, միանալու մէջ, յատկապէս Մկրտութեան եւ Ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդներին միջոցով:

Իգնատիոսն այս ճշմարտութիւններն արտայայտում է արտակարգ բնականութեամբ, ճիշտ ինչպէս մեզնից իւրաքանչիւր ոք արտայայտում է ինչ որ մի իրողութիւն, որն իր համար ընտանի է, սովորական, մինչեւ իսկ բնական, քանի որ բաւականին խորհրդածել ու իրագործել է այն իր անձում: Իգնատիոսի համար ամէն բան «Յիսուս Քրիստոսի մէջ», կամ «Քրիստոս Յիսուսի մէջ», կամ «Յիսուսի մէջ» է<sup>1</sup>. ողջոյնի

<sup>1</sup> «Յիսուս Քրիստոս» անունը (կամ «Քրիստոս Յիսուս», կամ «Յիսուս», կամ «Քրիստոս») հետեւեալ յաճախականութեամբ է հանդիպում Իգնատիոսի նամակներում. Եփես.՝ 33, Մազն.՝ 23, Թրալ.՝ 19, Հռոմ.՝ 20, Ֆիլ.՝ 22, Զմիւռ.՝ 15, Պող.՝ 3: Ընդամէնը՝ 135: Ինքնըստինքեան խօսող թուեր են:

խօսքերը, մաղթանքները, ընդունելութիւնը, համե-  
րաշխութիւնը, ժողովները, զրոյցները, ամէն տեսակ  
յորդորները ... : Քրիստոսը «անբաժանելի Կեանք» է  
(Եփես. Գ 2), «յաւիտենական Կեանք» (Եփես. ԺԸ 1):  
Ընդհակառակն, ով ապրում է առանց Քրիստոսի, Նը-  
րանից բաժանուած, մէկն է, ով սերմանում է մահ, կամ  
մինչեւ իսկ՝ «ով քարշ է տալիս իր սեփական դիակը»  
(Զմիւռ. Ե 2): Ահա այստեղից էլ ծնւում է բնական  
հարցադրումը. «Ինչպէ՞ս մենք կարող ենք ապրել Նը-  
րանից դուրս» (Մազն. Թ 2):

Կարծես Պօղոս Առաքեալի խօսքերի կատարեալ  
պատճէնը լինէին այս հաստատումները. «Ուաչուել եմ  
Քրիստոսի հետ եւ այսուհետեւ ես չեմ, որ ապրում  
եմ, այլ Քրիստոսն է ապրում իմ մէջ: Այս կեանքը  
մարմնի մէջ, ես այն ապրում եմ Աստծոյ Որդու հան-  
դէպ հաւատքով, որ սիրեց ինձ եւ իրեն մահուան  
մատնեց իմ համար» (Գղտ 2, 20):

Քրիստոսի հետ քրիստոնեայի այս յարատեւ հա-  
ղորդութեան ու երկխօսութեան կերպարանքով պէտք  
է ձեւաւորուի բրիտանացիների միութիւնը միմեանց  
միջեւ: Թէ իգնատիոսին որքան հոգեհարազատ է այս  
իրողութիւնը, ամէն ոք կարող է ինքնուրոյն գնահա-  
տել նաեւ պատահականութեան սկզբունքով բացելով  
նրա նամակներից որեւէ մէկը: Ինչպէս Քրիստոսն ին-  
քը միայն մէկ ամբողջութիւն է իր Անձում, միայն մէկ  
ամբողջութիւն պէտք է լինի նաեւ Քրիստոսի խոր-  
հրդաւոր Մարմինը, որ է Եկեղեցին: Քրիստոնեանե-  
րը կանչուած են միմեանց միջեւ իրագործելու եւ  
պահպանելու այն նոյն միութիւնը, որ գոյութիւն ու-  
նի Յիսուս Քրիստոսի Անձում եւ Յիսուսի ու Հօր մի-  
ջեւ:

Այս հարցում, ահա՛, Իգնատիոսն իրեն զգում է որպէս «միութեանը հակուած մարդ»։ մի մարդ, որն Աստուծոյ կողմից մտածուել, կամեցուել, արարուել եւ առաքուել է, որպէսզի իր նամակների հասցէատէրերին – եւ նրանց միջոցով բոլոր ժամանակների քրիստոնեաներին – ազդու կերպով հաղորդի Տիրոջ այդ անհամեմատելի պարգեւը։ Մի առաքելութիւն, որն Իգնատիոսը զգում եւ ապրում է ծիսակատարութեան յուզիչ ու հանդիսաւոր շեշտադրումներով։

Ահա թէ ինչ է գրում Մազնեցիայի քրիստոնեաներին. «Քանի որ որպէս պարգեւ ստացել եմ մի անուն, որն աստուածային վայելչութիւն է արտայայտում, կրածս այս շղթաներով գովաբանում ու հռչակում եմ Եկեղեցիներին, եւ աղօթում եմ, որ նրանց մէջ լինի մարմնի եւ հոգու միութիւնը Յիսուս Քրիստոսի, որ մեր մշտնջենաւոր կեանքն է. միութիւնը հաստատի եւ սիրոյ, որն ամենաթանկարժէք պարգեւն է. եւ յատկապէս՝ Յիսուսի եւ Հօր միութիւնը։ Աստուծոյ մէջ դիմադրելով այս աշխարհի իշխանի ամէն տեսակ յարձակումներին եւ խուսափելով նրա ազդեցութիւնից՝ կը հասնենք Աստուծուն» (Ա 2)։

Խօսքն, անկասկած, կեանքի մի սքանչելի ծրագրի մասին է, որ վերաբերւում է մարդուն ամբողջութեամբ, մարդուն ամբողջութեամբ պատուաստում է Քրիստոսին, մարդուն մղում է կոնկրետ կերպով գործի դնելու հաւատքն ու սէրը, խուսափելու սատանայի թակարդներից, եւ մարդուն ամբողջութեամբ առաջնորդում է «հասնելու Աստուծուն»։ Մարդն ամբողջութեամբ՝ մէկ միակ գաղափարական համար, Աստուծուց մղուած եւ ղէպի Աստուած ձգտող։

Սա մի ընթացք է, – հարկաւոր է ուշադրութիւն դարձնել, – որն Իգնատիոսի համար անհատական չէ, այլ՝ հասարակաց. ո՛չ կղզիացած, այլ՝ աղօթքի, կեանքի ու գործի հաղորդութեամբ, եղբայրների ու քոյրերի հետ: Քրիստոսի հետ քրիստոնեայի միութիւնը Իգնատիոսը երբեք չի ընկալում որպէս սոսկ անձնական կամ անհատական իրողութիւն, այլ միշտ մնում է որպէս հասարակաց իրականութիւն, որն իրականանում է մի կառոյցում, որը միաժամանակ մարդկային է եւ աստուածային («մարմնի եւ հոգու միութիւնը», կ'ասէր Իգնատիոսն իր կերպային արտայայտչականութեան բառապաշարով), որ է Եկեղեցին, Քրիստոսի խորհրդաւոր Մարմինը: Արդարեւ, Եկեղեցուն միայնով եւ իր բոլոր եղբայրների ու քոյրերի հետ միութեան մէջ ապրելով է, որ քրիստոնեան «միանում է Աստծուն»:

Սոսկ երազ ու անիրագործելի գաղափարակա՞ն: Իգնատիոսի փորձառութիւնը – եւ փորձառութիւնն այն բաղմամբիւ անձերի ու համայնքների, որոնք դարերի ընթացքում կամեցան բացուել Շնորհի ազդեցութեանը – փաստում է, որ այդ գաղափարականը ո՛չ միայն իրագործելի է, այլ որ Տէրն արդարեւ իրագործել է այն եւ տակաւին շարունակում է այն իրագործել մարդկութեան պատմութեան երկայնքին: «Աստծոյ պարգեւն» է (Յվհ 4, 10), որի դիմաց մարդկային բանականութեան սահմանները չափազանց նեղ են ու անձուկ:

Կարելի է միայն աւելացնել, որ միութեան այս ծրագիրը սովորաբար հասնում է արտակարգ կարեւորութեան մի ա՛յլ նպատակի եւս. քրիստոնեայի եւ մարդու միությունն ինչն իր մէջ, իր սեփական ներաշխար-

*հռւմ: Այսինքն, կարողանում է կերտել մի անձ, որ հա-  
ւասարակչիւ է, խաղաղ, անամպ, իսկապէս ազատ,  
զերծ այն ներքին բաժանումներից, որոնք շա՛տ յա-  
ճախ մարդուն մղում են օտարանալու ինքն իրենից,  
փախչելու սեփական անձից, կամ էլ ընդհակառակը՝  
լիակատար կղզիացման վիճակում միայնանալու սե-  
փական ներաշխարհում:*

*Իգնատիոսը լիովին գիտակցում էր, որ այս ա-  
մէնն իրականացնելու միայն մի ձեւ կայ. վճարել ան-  
ձամբ, Աստծոյ գործին ընծայել անձնուրացման ու  
ինքնամոռացումի սեփական նպաստը: Այս հարցում  
եւս քայլում է բոլորի առջեւից, ուրախութեամբ ըն-  
դունելով մահուան դատապարտութիւնը եւ սեփական  
կեանքն ընծայելով ի նպաստ Եկեղեցու: Եւ այդ ամէ-  
նը կատարում է գերազանց պարզութեամբ ու բնակա-  
նութեամբ: Եւ, ե՛ւս մէկ անգամ, որպէսզի ամենաամ-  
բողջական ու անմնացորդ կերպով իրագործուի միու-  
թիւնը. «Եթէ ձեր մէջ չկարողանայ ներթափանցել ձեզ  
նեղելու ու չարչրկելու ի զօրու որեւիցէ մի վէճ, ուրե-  
մըն դուք ապրում էք Աստծոյ համաձայն: Ես քաւու-  
թեան զոհ եմ ձեր համար ... » (Եփես. Ը 1):*

ՆԱՄԱԿՆԵՐ





## ԵՓԵՍՈՍԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՆ

Դէպի Հռոմ ուղղուած իր ճամփորդութեան ընթացքում Իգնատիոսը որոշ ժամանակով կանգ առաւ Զմիւռնիայում: Տեղի երիտասարդ Եպիսկոպոս Պողիկարպոսի մօտ գտնուած ժամանակ նրան եղբայրական այցելութեան եկան Եփեսոսի, Մազնեզիայի եւ Թրալլիսի եկեղեցիների ներկայացուցիչները: Նրանցից իւրաքանչիւրի հետ Իգնատիոսը հաւատքի եւ փոխադարձ քաջալերանքի մտերիմ գրոյցներ ունեցաւ: Որոշ ժամանակ անց, Եփեսոսի բոլոր քրիստոնեաներին ուղղեց սոյն նամակը, որպէս նպատակ ունենալով շնորհակալութիւն յայտնել նրանց ներկայացուցիչների այցելութեան համար, նրանց ուշադրութիւնը հրաւիրել Եփեսոսի համայնքի ամենահըրատապ խնդիրների վրայ, եւ յատկապէս՝ յորդորելու համար բոլորին, որպէսզի նախանձախնդիր լինեն միութեան պահպանութեան գործում, յարատեւելով Առաքեալների Աւանդութեան մէջ:

Եփեսոսը առեւտրական բուռն գործունէութիւն ունեցող եւ քաղաքական ու կրօնական վիթխարի համբաւ վայելող քաղաք էր: Քրիստոնէական համայնքը հիմնուել էր Պօղոս Առաքեալի եւ Յովհաննէս Աւետարանչի քարոզչութեամբ, եւ արդէն իսկ յայտնի էր եփեսացի այն բազմաթիւ քրիստոնեաներով, որոնք Աւետարանն ապրել էին լաւագոյն կերպով: Սրանով է բացատրուում գովասանքների այն շարքը, որոնցով Իգնատիոսը սկսում է իր այս նամակը:

## Ողջոյն

*Իգնատիոսը, որին անուանում են նաեւ Աստուածակիր<sup>1</sup>, Ասիայում գտնուող Եփեսոսի եկեղեցուն մաղթում է ամենայն բարիք Յիսուս Քրիստոսի եւ կատարեալ բերկրանքի մէջ.*

*– Հայր Աստծոյ լիութեան մէջ մեծութեամբ օրհնուած եկեղեցուն.*

*– եկեղեցուն, որ ժամանակներից առաջ արդէն նախասահմանուած է գոյութիւն ունենալու յարատեւ փառքի համար, անփոփոխելի կերպով միաւորուած եւ ճշմարիտ Չարչարանքներով ընտրուած, Հօր եւ Յիսուս Քրիստոսի՝ մեր Աստծոյ կամքի համաձայն.*

*– եկեղեցուն, որ արժանի է կոչուելու երանելի<sup>2</sup>:*

---

<sup>1</sup> «Աստուածակիր». թարգմանութիւնն է յունարէն *Թէոֆորոս* անուան, որն *Իգնատիոսը* միշտ գործածում է որպէս երկրորդ անուն: Մի երկրորդ անուն եւս գործածելու սովորութիւնը բաւականին տարածուած էր հին աշխարհում, իսկ քրիստոնեաներն այն հաւանաբար ստանում էին Մկրտութեան պահին: *Իգնատիոսի* համար, որն անմնացորդ կերպով Աստծուն սիրահարուած հոգի էր, թերեւս անհնարին կը լինէր առաւել բնորոշիչ անուն գտնելը:

<sup>2</sup> Իր ժամանակի նամակագրական ոճին հետեւելով, *Իգնատիոսն* իր նամակը սկսում է երկարաշունչ ու հանդիսաւոր ողջոյնով: Յատուկ ուշադրութեան է արժանի ականարկը Քրիստոսի *ճշմարիտ* չարչարանքներին եւ Աստուածութեանը:

## Երախտիքի ու գովասանքի խօսքեր

Ա. – 1. Աստծոյ մէջ ընդունեցի ձեր յոյժ սիրելի անունը<sup>1</sup>. անուն, որ ձեռք էք բերել ձեր բարեպաշտ նկարագրով, այն հաւատքի ու սիրոյ համաձայն, որոնք յայտնուել են յանձինս Քրիստոս Յիսուսի, մեր Փրկչի: Դուք, իրօք, Աստծուն նրմանուողներ էք<sup>2</sup>, եւ Նրա արեան մէջ վերստին արծարծել էք ձեր նկարագրի բնածին գործունէութիւնը եւ այն հասցրել էք լիուլի կատարման:

2. Դրա ապացոյցն է այն փաստը, որ շտապեցիք այցելել ինձ, հազիւ լսեցիք Ասորիքից ժամանելուս լուրը, շղթայուած՝ ընդհանուր Անուան

---

<sup>1</sup> Իգնատիոսը շատ յաճախ է գործածում «անուն» եզրը: Երբեմն այն պարզապէս հոմանիշն է Աստուած կամ Յիսուս անունների: Երբեմն էլ, ինչպէս այստեղ եւ յատկապէս ողջոյնի խօսքերում, մատնանշում է հասցէատիրոջ «անձը»: Տուեալ դէպքում Իգնատիոսը կամենում է ասել, որ ուրախութեամբ եւ որպէս Աստծոյ պատգամաբերներ է ընդունել այն անձանց, որոնք եկել են իրեն այցելելու: Յանձինս այդ այցելուների նա ընդունել է Եփեսոսի ամբողջ համայնքը, որպէս մէկ միակ մարմին. իրօք, բնագրում նա աւելի ճշգրիտ կերպով գրում է. «Աստծոյ մէջ ընդունեցի քո յոյժ սիրելի անունը»: Բացի սա, այս խօսքերով Իգնատիոսը ամենայն հաւանականութեամբ ակնարկում է Եփեսացիներ անուան ստուգաբանական իմաստին. այն, իրօք, նշանակում է «սիրելիներ, ցանկալիներ»: Սա եւս մի օրինակ է մէկ բառի մէջ տարբեր գաղափարների խտացման, որոնք դժուարին են դարձնում տուեալ նախադասութեան թարգմանութիւնը ա՛յլ լեզուների:

<sup>2</sup> Հմմտ. Եփս 5, 1.

եւ մեր ընդհանուր յոյսի պատճառով<sup>1</sup>, եւ փափաքող – ձեր աղօթքների շնորհիւ – ստանալու Հռոմում գազանների դէմ մարտնչելու շնորհը, որ պէսզի այդ շնորհը ստանալով՝ ես կարողանամ լինել հետեւորդ<sup>2</sup>:

3. Աստծոյ անուամբ ընդունեցի, ուստի, ձեր բազմամարդ համայնքը յանձինս Ռնեսիմոսի<sup>3</sup>, ձեր տեսանելի Եպիսկոպոսի. մի մարդ, որ սքանչելի է իր գործադրած սիրով: Խնդրում եմ ձեզ սիրել նրան Յիսուս Քրիստոսի համաձայն, եւ աղերսում եմ ձեզ բոլորիդ՝ նմանուել նրան: Օրհնեալ է Նա, ով ձեզ պարգեւել է – եւ դուք արժանի էիք դրան – ունենալ նման Եպիսկոպոս:

---

<sup>1</sup> «Ընդհանուր Անունը» եւ «ընդհանուր յոյսը» Յիսուս անւան յաւելեալ – բացայայտ կամ լուռիմաց – կցորդներն են: Արտակարգ արդիւնաւէտութիւն ու գեղեցկութիւն պարունակող արտայայտութիւններ են, որոնք Իգնատիոսին հոգեհարազատ են իւրայատուկ կերպով: Յիշենք, որ Հէնց Անտիոքում էր, որ Յիսուս Քրիստոսի աշակերտները սկսեցին կոչուել քրիստոնեաներ (Հմմտ. Գրծ 11, 26):

<sup>2</sup> Իգնատիոսն աւետում է մարտիրոսութեան իր մեծ, միակ փափաքը. մարտնչել վայրի գազանների դէմ եւ այդպիսով դառնալ Տիրոջն արժանի աշակերտ, հետեւորդ: Այս բազմանքն է դառնալու Հռոմէացիներին ուղղուած հոչակաւոր նամակի առանցքային նիւթը:

<sup>3</sup> Եփեսոսի Եկեղեցու այս Եպիսկոպոսի անունը յիշեցնում է Պողոս Առաքեալի ընկերոջը, որի մասին նա խօսում է Փիլիմոնին ուղղուած իր նամակում: Ոմանք ենթադրել են, թէ խօսքը միեւնոյն անձի մասին է, բայց այդ ենթադրութիւնը ոչ մի պատմական փաստ չունի:

Յանձնիս պատուիրակների տեսայ ձեզ բու-  
լորիդ, սիրոյ մէջ

Բ. – 1. Ինչ վերաբերուած է Բուրրոսին, իմ  
ծառայակցին ու ձեր Սարկաւազին<sup>1</sup> Աստոյ Հա-  
մաձայն, – Սարկաւազ, որ օրհնեալ է ամէն ին-  
չում, – խնդրում եմ, որ նա մնայ իմ մօտ, ի պա-  
տիւ ձեր եւ ձեր Եպիսկոպոսի: Կրօկոսը նոյնպէս,  
– որ արժանի է Աստուծոյ եւ արժանի է ձեզ, –  
որին ես ընդունեցի որպէս ձեր սիրոյ օրինակ,  
սփոփեց ինձ ամէն ինչում: Թող որ Յիսուս Քրիս-  
տոսի Հայրը մխիթարի նաեւ իրեն, Ոնեսիմոսի,  
Բուրրոսի, Եւպլուսի եւ Ֆրոնտոնի Հետ միասին:  
Յանձնիս նրանց տեսայ ձեզ բոլորիդ, սիրոյ մէջ:

2. Թող որ ես ընդմիջտ կարողանամ վայելել  
ձեզնից եկող բերկրանքը, եթէ արժանի գտնուեմ  
դրան: Պատշաճ է, ուստի, ամէն կերպ փառաւորել  
Յիսուս Քրիստոսին, որ փառաւորել է ձեզ, որպէս-  
զի – միայն մէկ Հնազանդութեան մէջ յօժարու-  
թեամբ տրամադրուած, Եպիսկոպոսին ու քահա-  
նայից դասին ենթակայ – դուք սրբանաք ամէն  
ինչում:

---

<sup>1</sup> Իգնատիոսը մեծ ուշադրութիւն ու Համակրանք է ցուցա-  
բերում Սարկաւազների նկատմամբ, որոնց միջտ անուանում  
է «իմ ծառայակիցները», քանի որ նրանք եւս ընծայուած  
էին Եկեղեցու ծառայութեանը: Սարկաւազները կարեւոր  
դերակատարութիւն ունէին առաջին դարերի եկեղեցական  
կեանքում:

Ես տակաւի՛ն կատարեալ չեմ ...

Պ. – 1. Նպատակ չունեմ ձեզ հրահանգներ տալու, իբրեւ թէ «ինչ որ մէկը» լինէի: Իրօք, Յիսուս Քրիստոսի մէջ ես տակաւին կատարեալ չեմ, թէեւ իր Անուան պատճառով եմ շղթաներ կրում: Արդարեւ, հիմա եմ սկսում ուսանել եւ ձեզ եմ դիմում որպէս իմ ուսուցչակիցների<sup>1</sup>. Կարիքն ունեմ ձեզնից հաւատքով, յորդորներով, համբերութեամբ, հեղութեամբ օծուելու:

2. Բայց քանի որ սէրն ինձ թոյլ չի տալիս ձեզ վերաբերուող հարցերի շուրջ լուել, նախաձեռնեցի յորդորել ձեզ, որպէսզի ընթանաք Աստծոյ մտքին համաձայն<sup>2</sup>: Եւ Հօր միտքը Յիսուս Քրիստոսն է, մեր անբաժանելի Կեանքը: Ինչպէս մինչեւ աշխարհի չորս ծագերը հաստատուած Եպիս-

<sup>1</sup> Մի մարդ, որ տասնեակ տարիներ նուիրուել է Աստծոյ ծառայութեանը եւ իր Եկեղեցին առաջնորդել է որպէս Եպիսկոպոս, այժմ, երբ դատապարտուել է մահուան, սկսում է դասեր քաղել Քրիստոսի Ուստից եւ յանձինս հաւատակից եղբայրների տեսնում է իր համար վաւերական ուսուցիչների: Խոնարհ գիտակցութիւնից ծնուած գաղափարներ են, ամենայն պարզութեամբ արտայայտուած, բայց թերեւս հէնց այս պատճառով էլ՝ յուզիչ են եւ խորապէս տպաւորիչ:

<sup>2</sup> «Որպէսզի ընթանաք Աստծոյ մտքին համաձայն». ահա՛ այն, ինչն Իգնատիոսի ամենահոգեհարազատ զգացումն է: Իմաստներով լի արտայայտութիւնը նշանակում է անմնացորդ յարում Յիսուս Քրիստոսին, որը Հօր ճշմարիտ միտքն է. յարում, որն իրականանում է փոխադարձ համերաշխութեան մէջ, ինչպէս կարդում ենք յաջորդ հատուածում:

կոպոսները նոյնպէս Յիսուս Քրիստոսի մտքի մէջ են<sup>1</sup>:

Միութեան գովերգ

Գ. – 1. Լաւ է, ուստի, որ դուք ընթանաք Եպիսկոպոսի մտքին համաձայն, ինչպէս եւ արդէն վարուում էք: Արդարեւ, ձեր քահանայից դասը, – որն իրաւացիօրէն համբաւաշատ է եւ Աստծուն արժանի, – սերտօրէն միացած է Եպիսկոպոսին, ինչպէս լարերը՝ քնարին: Այս իսկ պատճառով, ձեր համերաշխութիւնից եւ ձեր ներդաշնակ սիրուց, որ դրսեւորում էք, փառաբանական երգ է բարձրանում առ Յիսուս Քրիստոս:

2. Իսկ դուք, մէկ առ մէկ, մի երգչախումբ դարձէք, որպէսզի միաձայնութեամբ ներդաշնակուելով եւ միութեան մէջ Աստծոյ ձայներանգն ու ձայնաստիճանը բռնելով՝ Յիսուս Քրիստոսի մի-

---

<sup>1</sup> Յիսուս Քրիստոսը, Աւետարանում պատմուած Իր գոյութեամբ, «Հօր մտքի (gnóme)» լիակատար յայտնութիւնն է, այսինքն այն բանի, թէ Նա ճշմարտապէս ով եւ ինչպիսին է, եւ թէ ինչ փափաք ու ծրագիր ունի արարչութեան հանդէպ: Զուգահեռաբար, Եպիսկոպոսներն էլ պէտք է համապատասխանեն Յիսուս Քրիստոսի մտքին: Իզնատիտը, սակայն, մի զուգահեռականութիւն է հաստատում, որը սոսկ համանմանական է. եթէ Յիսուս Քրիստոսի համար հաստատում է, որ Նա Հօր միտքն է (գործածուած է լինել բայր), Եպիսկոպոսների պարագային ասում է, որ նրանք պէտք է Յիսուս Քրիստոսի մտքի մէջ լինեն (գործածուած է գտնուելու տեղ ցոյց տուող բայաձեւը):

Ջոցով միաձայն երգէք առ Հայր, որպէսզի լսի ձեզ եւ – բարի գործերից, որ գործում էք – ճանաչի, որ Իր Որդու անդամներն էք: Օգտակար է, ուստի, որ դուք անստգտանելի միութեան մէջ լինէք, որպէսզի անդադար հաղորդակից լինէք Աստծուն<sup>1</sup>:

Եպիսկոպոսը միութեան կենտրոն

Ե. – 1. Եթէ ես, այսքան կարճ ժամանակում, այսքան սերտ մտերմութեան հասայ ձեր Եպիսկոպոսի հետ, – մտերմութիւն ո՛չ թէ մարդկային, այլ՝ հոգեւոր, – որքա՛ն եւս առաւել պէտք է բախտաւոր համարեմ ձեզ, որ միացած էք նրան, ինչպէս Եկեղեցին միացած է Յիսուս Քրիստոսին եւ ինչպէս Յիսուս Քրիստոսը միացած է Հօրը: Որպէսզի ամէն բան համախոհութեամբ լինի միութեան մէջ:

---

<sup>1</sup> Նամակի այս հատուածում բացայայտում է միութեան ու համերաշխութեան այն ծարաւը, որն Իգնատիոսը զգում էր եւ որը կամենում է իր ընթերցողներին փոխանցել գործածելով երաժշտութիւնից ու երգեցողութիւնից փոխառնուած պատկերներ. քնարը, երգչախումբը, ձայնաստիճանը (chroma): Այս պատկերներից բացի, գործածում է նաեւ երեք գոյականներ, կամ համապատասխան ածականներ, որոնք յաճախակի են հանդիպում նրա նամակներում. «homonóia» (համերաշխութիւն). «symphonía» (ներդաշնակութիւն), մի եզր, որ նոյնպէս մաս է կազմում երաժշտական ասպարէզին. «hénótes», կամ որոշ դէպքերում «hénosis» (միութիւն):



2. Թող ոչ ոք չխաբուի. ով Խորանի շուրջը  
չէ, գուրկ է մնում «Աստծոյ Հացից»<sup>1</sup>: Արդարեւ,  
եթէ մէկ կամ երկու անձանց աղօթքն այդքա՛ն  
արդիւնաւէտ է, որքա՛ն առաւել եւս արդիւնաւէտ  
կը լինի Եպիսկոպոսի ու ամբողջ Եկեղեցու աղօթ-  
քը<sup>2</sup>:

3. Ով չի մասնակցում միասնական խորհրդ-  
դակատարութեանը, սրտով ամբարտաւան է, եւ  
արդէն իսկ կայացրել է իր դատաստանը, քանզի  
գրուած է. «Աստուած հակառակ է ամբարտաւան-  
ներին»<sup>3</sup>: Ջանանք, ուստի, չհակառակուել Եպիս-  
կոպոսին, որպէսզի ենթակայ լինենք Աստծուն:

Ընդունել Եպիսկոպոսին ինչպէս անձամբ  
Աստծուն

Ձ. – 1. Որքան աւելի էք տեսնում, որ Եպիս-  
կոպոսը լռում է, այնքան աւելի պէտք է յարգէք  
նրան: Յամենայն դէպս, հարկաւոր է, որ ում

---

<sup>1</sup> Հմմտ. Յվհ 6, 33. – Դիւրին չէ հասկանալ «thusiastérion»  
եզրի ճշգրիտ իմաստը: Թէեւ այն սովորաբար մատնանշում  
է գոհաբերութիւնների սեղանը (օրինակ՝ Մտթ 5, 23), Իզ-  
նատիոսի մօտ յաճախ ստանում է փոխաբերական նշանա-  
կութիւն: Այս հատուածում կարող է մատնանշել նաեւ Ամե-  
նասուրբ Հաղորդութեան ծիսակատարումը:

<sup>2</sup> Հմմտ. Մտթ 18, 20.

<sup>3</sup> Առկ 3, 34; Հմմտ. Յկբ 4, 6; 1Պտ 5, 5.

տանտէրն ուղարկում է մատակարարելու իր տունը, մենք նրան ընդունենք՝ ինչպէս անձամբ տանտիրոջը, որ նրան ուղարկել է<sup>1</sup>: Ակնյայտ է, ուստի, որ Եպիսկոպոսին պէտք է նկատել ինչպէս անձամբ Տիրոջը:

2. Ոնեսիմոսն ինքը, յամենայն դէպս, գովում ու պանծացնում է բարի վարքը, որ ունէք Աստծոյ մէջ. բոլորդ էլ ապրում էք ճշմարտութեան համաձայն եւ ձեր մէջ ոչ մի հերետիկոսութիւն չկայ: Մանաւանդ թէ, ոչ ոքի չէք լսում աւելի, քան նրան՝ ով ձեզ խօսում է Յիսուս Քրիստոսի մասին ամենայն ճշմարտութեամբ:

Խոյսափել հերետիկոսներից. Քրիստոսն է միակ բժիշկը

Է. – 1. Ոմանք սովոր են, վատագոյն խաբէութեամբ, շարունակ կրկնել Տիրոջ Անունը, բայց յետոյ Աստծուն անարժան գործեր են կատարում: Պէտք է խուսափէք այդպիսիներից, ինչպէս վրտանգաւոր գազաններից. կատաղած շներ են, որ կծում են անսպասելիօրէն: Պէտք է զգոյշ լինէք, քանի որ նրանց հասցրած վէրքերը դժուարութեամբ են բուժւում<sup>2</sup>:

<sup>1</sup> Հմմտ. Ղկս 9, 48; 12, 42; Մտթ 10, 40; 24, 45; Յվհ 13, 20.

<sup>2</sup> Նամակի ձայներանգը յանկարծակի փոխւում է, դառնալով խիստ ու սաստիկ: Իգնատիոսը յատուկ խտտութիւն է դրսե-

2. Միայն մէկ բժիշկ կայ, մարմնեղէն եւ հոգեղէն, ծնուած եւ անծին, արարուած մարմնի մէջ՝ Աստուած, մահուան մէջ՝ ճշմարիտ Կեանք, ծընուած՝ Մարիամից եւ Աստծուց, նախ՝ չարչարելի, ապա՝ անչարչար. Յիսուս Քրիստոս, մեր Տէրը<sup>1</sup>:

Անձս գոհաբերում եմ ձեր համար

Ը. – 1. Ոչ ոք, ուստի, թող չխաբի ձեզ, ինչպէս արդէն իսկ չէք թողնում, որ խաբեն ձեզ, քանի որ դուք ամբողջովին Աստծունն էք: Եթէ ձեր մէջ չկարողանայ ներթափանցել ձեզ նեղելու ու չարչարելու ի զօրու որեւիցէ մի վէճ, ուրեմն դուք ապրում էք Աստծոյ համաձայն: Ես քաւութեան զոհ եմ ձեր համար<sup>2</sup> եւ անձս զոհաբերում եմ ձեր

---

ւորում հերետիկոսների նկատմամբ, քանի որ աղաւաղում են հաւատքը եւ պառակտում են Եկեղեցին (տե՛ս յատկապէս Զմիւռնիայի քրիստոնեաներին ուղղուած նամակը): Նման դիրքորոշումը համընդհանուր է Առաքեալների եւ առաքելաշաւիղ Հայրերի գրութիւններում:

<sup>1</sup> Հերետիկոսներին ակնարկելուց յետոյ, Իգնատիոսը գրի է առնում հաւատքի մի համառօտ, բայց իմաստալի ու շատ գեղեցիկ մի դաւանութիւն: Հակադրոյթները, որ ցոյց են տալիս մարդկային եւ աստուածային բնութիւնների կատարեալ միութիւնը Յիսուս Քրիստոսի մէկ եւ միակ Անձում, գործածուած են Դոկետների դէմ, որոնց համաձայն՝ Քրիստոսի մարդկային բնութիւնը սոսկ երեւութական էր:

<sup>2</sup> Յունարէն «peripsema» եզրը արտայայտում է քաւութեան զոհի իմաստը, բայց միաժամանակ կարող է մատնանշել նաեւ անարգ ու անարժան ենթակայ, համեմատելի՝ աղբին ու

Համար, ո՛վ Եփեսացիներ. դուք՝ յաւիտեան ան-  
լանի Եկեղեցի:

2. Միայն բնութեամբ շարժուող մարդը չի  
կարող հոգեւոր գործեր կատարել, ո՛չ էլ հոգեւոր  
մարդը՝ սոսկ մարդկային գործեր. այնպէս՝ ինչպէս  
ո՛չ հաւատքը կարող է անհաւատութեան գործեր  
ծնել, ո՛չ էլ անհաւատութիւնը՝ հաւատքի գործեր:  
Սակայն, այն գործերը եւս, որ կատարում էք ըստ  
մարդկային բնութեան, հոգեւոր են, քանի որ  
դուք ամէն բան կատարում էք Քրիստոսի մէջ<sup>1</sup>:

Քրիստոնէաները Հօր տաճարի քարերն են

Թ. – 1. Իմացայ, որ ձեր մօտով անցել են չար  
ուսմունք կրող ոմանք: Նրանց թոյլ չէք տուել  
ձեր մէջ սերմանել իրենց սխալները, այլ փակել  
էք ձեր ականջները, որպէսզի չընդունէք այն՝ ինչ  
նրանք տարածում են: Դուք, արդարեւ, Հօր տա-

---

նման բաների, յաճախ վիրաւորական շեշտադրմամբ: Իգնա-  
տիոսի մօտ, այս եզրի գործածումը պարզապէս սովորական  
մի ձեւ չէ՝ արտայայտելու Համար սեփական անարժանու-  
թիւնը ինքնախոնարհեցման շեշտադրումներով, այլ աւելի՝  
մարտիրոս լինելու նրա սթափ զիտակցութեան արտայայ-  
տութիւնն է:

<sup>1</sup> Նրանց Համար, ովքեր ապրում են Յիսուս Քրիստոսի մէջ,  
այլեւս գոյութիւն չունեն սրբազան եւ աշխարհական, հո-  
գեւոր եւ մարմնական իրականութիւններ: Իւրաքանչիւր  
գործ եւ արարք հոգեւոր է, եթէ այն գործող ենթական հո-  
գեւոր է (Հմմտ. 1 Կր 10, 31; Գղտ 3, 26-28):

ճարի քարերն էք, սահմանուած՝ Հայր Աստծոյ շինարարութեանը, վերամբարձուած՝ Յիսուս Քրիստոսի բեռնաբարձ վերելակով, որ Նաչն է, որպէս պարան գործածելով Սուրբ Հոգին: Ձեր հաւատքն է ձեր լծակը, սէրն է ճանապարհը, որ առաջնորդում է դէպի վեր, առ Աստուած<sup>1</sup>:

2. Բոլորդ էլ, ուստի, ճանապարհորդակից ընկերներ էք, Աստծուն կրողներ, տաճարը կրողներ, Քրիստոսին կրողներ, սրբութիւն կրողներ. բոլորդ էլ ամբողջովին զարդարուած էք Յիսուս Քրիստոսի պատուիրաններով<sup>2</sup>: Եւ ես ուրախ եմ, որ արժանի համարուեցի մի քիչ խօսակցելու ձեր հետ, ձեզ գրելով այս խօսքերը, եւ մասնակցելու ձեր ուրախութեանը, քանի որ նոր կեանքին կերպարանակից լինելով՝ դուք սիրում էք միմիայն Աստծուն:

Հեզ եղէք, խոնարհ, քաղցրաբարոյ

Ժ. – 1. Ուրիշ մարդկանց համար եւս «անդադար աղօթեցէք»<sup>3</sup>: Արդարեւ, նրանց մէջ ներ-

<sup>1</sup> Հերետիկոսների քայքայիչ գործունէութեանը հակառակ, Իգնատիոսը քրիստոնէաներին կոչ է անում գիտակցելու իրենց իրականութիւնը. Աստծոյ տաճարի քարերն են: Հատուածը հարուստ է փոխաբերութիւններով, որոնք բանաստեղծական արտայայտչականութիւն են հաղորդում գրութեանը:

<sup>2</sup> Ահա թէ ինչպիսին պէտք է լինի, Իգնատիոսի համաձայն, բոլոր ժամանակների քրիստոնէան:

<sup>3</sup> Հմմտ. 1Թղ 5, 17.

կայ է դարձի մի յոյս, որպէսզի հանդիպեն Աստ-  
ծուն: Թոյլ տուէք նրանց ուսուցումներ գտնել  
գոնէ ձեր գործերի միջոցով<sup>1</sup>:

2. Նրանց ցասման դիմաց դուք հեզ եղէք.  
նրանց պարծենկոտութեան դիմաց դուք եղէք խո-  
նարհ. նրանց անարգանքներին հակադրեցէք ձեր  
աղօթքները. նրանց սխալների դիմաց դուք «հաս-  
տատուն մնացէք հաւատքի մէջ»<sup>2</sup>. նրանց խայ-  
թող խստութեան դիմաց դուք եղէք քաղցրաբա-  
րոյ: Մի՛ ջանացէք նմանուել նրանց:

3. Այնպէս վարուենք, որ բարութեամբ նը-  
րանց եղբայրները լինենք բացայայտ կերպով:  
Ջանանք նմանուել Տիրոջը<sup>3</sup>, – ո՞վ է Նրանից աւե-  
լի տառապել յանիրաւի, ո՞վ է Նրանից աւելի զըր-  
կանքներ կրել, մերժուել, – որպէսզի սատանայի  
ոչ մի չար արմատ չգտնուի ձեր մօտ, այլ ամե-  
նայն մաքրութեամբ ու իմաստութեամբ մնաք Յի-  
սուս Քրիստոսի մէջ, մարմնով եւ հոգով<sup>4</sup>:

<sup>1</sup> Եւս մի հիասքանչ ուսուցում Իգնատիոսի կողմից. այնպէս  
ապրել, որ սեփական կեանքն ու գործերը լինեն հաւատքի  
ապացոյցը: Այսինքն, խօսքով քարոզելուց առաջ նախ ապ-  
րել, գործադրել Աւետարանը:

<sup>2</sup> Հմմտ. Կղս 1, 23.

<sup>3</sup> Հմմտ. 1Թղ 1, 6.

<sup>4</sup> Արտայայտութիւնը յունարէնում հնչում է «sarkikós kai  
pneumatikós», այսինքն «մարմնապէս եւ հոգեպէս»: Իգնա-  
տիոսը քրիստոնեաներին հրաւիրում է մարդկային ամբողջ  
կեանքը կերպարանակից դարձնել Յիսուս Քրիստոսի կեան-

## Յալիտենական ժառանգութիւնը

ԺԱ. – 1. Վերջին ժամանակներն են<sup>1</sup>: Պատկառենք, ի վերջոյ, եւ երկիւղով մերձենանք Աստծոյ երկայնամտութեանը, որպէսզի մեր համար այն չփոխուի դատապարտութեան: Ուստի, ջանանք կա՛մ երկնչել «գալիք բարկութիւնից»<sup>2</sup>, կա՛մ էլ սիրենք ներկայ շնորհը: Երկուսից մէկը: Միակ բանը, որն իրօք կարեւոր է, Յիսուս Քրիստոսի մէջ գտնուելն է, ճշմարիտ կեանքը վայելելու համար<sup>3</sup>:

---

քին, դրա ե՛ւ մարմնական, այսինքն՝ մարդկային ու ամէնօրեայ, ե՛ւ հոգեւոր ոլորտներում:

<sup>1</sup> «Վերջին ժամանակներ» ասելով հասկացում է այն ժամանակաշրջանը, որին անմիջապէս յաջորդելու է աստուածային փառքի լիակատար յայտնութիւնը, Վերջին Դատաստանը: Յիսուսի Համբարձմամբ, Սուրբ Հոգու գալստեամբ եւ Եկեղեցու հիմնմամբ սկսուել են «վերջին ժամանակները»: Միշտ յիշելով, որ «վերջին» չի նշանակում «կարճ», ո՛չ էլ «շուտով»: Հարցը չի վերաբերում տեւողութեանը, այլ փրկութեան պատմութեան հանգրուանների շարքին «վերջին»ը լինելուն:

<sup>2</sup> Հմմտ. Մտթ 3, 7.

<sup>3</sup> Իգնատիոսն այստեղ մատնանշում է հնարաւոր երկու ճանապարհ Աստծուն հասնելու եւ նրանում կեանք գտնելու համար. կա՛մ երկնչել գալիք դատաստանից, կա՛մ սիրել ներկայ շնորհը: Երկու ճանապարհներն էլ կարող են մարդուն հեռու պահել կործանումից եւ օգնել նրան կերտելու մնայուն արժէքներ: Յաջորդ դարերի վանական Հայրերից Եւագրիոսը եւ Իսահակ Ասորին աւելի էին խորացնելու երկու ճանապարհների այս ուսմունքը, երկրորդին վերագրելով հոգեւոր կեանքի առաւել բարձր մակարդակ: Իգնատիոսի

2. Նրանից բացի, ոչինչ եւ ոչ ոք թող չգրաւի ձեր ուշադրութիւնը. Նրանում է, որ ես կրում եմ շղթաները, այս հոգեւոր գոհարները: Տա՛յ Աստուած, որ ես նրանցով յարութիւն առնեմ, ձեր աղօթքների շնորհիւ: Այո՛, կ'ուզենայի միշտ մասնակից լինել ձեր յիշատակմանը Աստուծոյ առաջ, գտնուելու համար Եփեսոսի քրիստոնեաների ժառանգութեան մէջ, որոնք միշտ ապրել են Առաքեալների հետ համաձայն<sup>1</sup>, Յիսուս Քրիստոսի զօրութեամբ:

#### Պօղոս Առաքեալի յիշատակումը

ԺԲ. – 1. Գիտեմ ո՛վ եմ ես եւ ո՛ւմ եմ գրում: Ես՝ դատապարտեալ, դուք՝ ողորմութիւն գտած անձինք. ես՝ վտանգուած, դուք՝ հաստատուն ու ապահով:

2. Ձեր մօտով են անցնում նրանք, ովքեր մահուամբ վերամբարձւում են առ Աստուած<sup>2</sup>:

---

մօտ սա տակաւին չկայ, բայց կարելոր է ընդգծել, որ Իգնատիոսի համար այդ երկուսն էլ պարզապէս միջոցներ են՝ միակ նպատակին հասնելու համար. Յիսուս Քրիստոսի մէջ գտնուելը: Երկու ճանապարհներից իւրաքանչիւրն էլ արժէք ունի միայն այն դէպքում, երբ օգնում է բնակուել Յիսուս Քրիստոսի մէջ, այստե՛ղ եւ հիմա՛ արդէն, սպասելով յաւիտենական կեանքին:

<sup>1</sup> Այսինքն՝ Առաքեալների վարդապետութեանը համաձայն:

<sup>2</sup> Հաւանաբար ակնարկում է Եփեսոսի աշխարհագրական դիրքին: Կարելոր նաւահանգիստ լինելով դէպի Հռոմ տա-



Դուք Պողոսի աշակերտակիցներն էք, որ սրբաց-  
լեց, վկայութիւն ստացաւ եւ այժմ իրաւամբ ան-  
լանւում է երանելի: Երբ Հասնեմ Աստծուն, յոյժ  
փափաքում եմ Պողոսի հետքերի վրայ գտնուել:  
Նրա, որ իր նամակներից իւրաքանչիւրում յիշում  
է ձեզ ի Քրիստոս Յիսուս<sup>1</sup>:

Գոհաբանութիւն եւ իսաղաղութիւն

ԺԳ. – 1. Առաւել յաճախակի հաւաքուեցէք  
Գոհաբանութիւն<sup>2</sup> մատուցելու եւ Աստծուն փա-  
ռաւորելու համար: Երբ յաճախ էք միասին հա-  
ւաքում, սատանայի ուժերը կործանւում են, եւ  
ձեր հաւատքի համերաշխ միաբանութեան մէջ  
փարատւում են այն աւերածութիւնները, որոնք  
նա ուզում է իրագործել:

---

նող ճանապարհին, այնտեղից էին անցնում մարտիրոսու-  
թեան դատապարտուած քրիստոնեաները: Բայց առաւել ու-  
շաղրութեան է արժանի արտայայտուած գաղափարը. մահ-  
ւան դատապարտութիւնը քրիստոնեայի համար այն տարրն  
է, որն իրեն վերամբարձում է առ Աստուած:

<sup>1</sup> Պողոս Առաքեալի Եփեսացիներին ուղղուած նամակից բա-  
ցի, տե՛ս Գրծ 18-20; 1Կր 15, 32; 16, 8; 1Տմ 1, 3; 2Տմ 1, 16-  
18; 4, 12.

<sup>2</sup> «Գոհաբանութիւն» եզրը Սուրբ Պատարագի համար գոր-  
ծածուող ամենատարածուած անուններից մէկն է: Առաջա-  
ցել է յունարէն εὐχαρίστω (գոհութիւն, շնորհակալութիւն եւ  
յայտնում) եզրից:

2. Աւելի լաւ բան չկայ, քան խաղաղութիւնը: Խաղաղութեան մէջ խափանուում են երկնային ու երկրային զօրութիւնների կողմից յարուցւած բոլոր հակառակութիւնները:

Հաւատք եւ սէր

ԺԳ. – 1. Այս ճշմարտութիւններից ոչ մէկը ձեր մտքից չի վրիպի, եթէ կատարեալ կերպով առ Յիսուս Քրիստոս ուղղուած՝ ունենաք հաւատք եւ սէր. առաքինութիւններ, որոնք կեանքի սկիզբն ու վերջն են: Սկիզբը հաւատքն է, վերջը՝ սէրը: Ուր այս երկու առաքինութիւնները միասին են, այնտեղ է նաեւ Աստուած: Միւս բոլոր բարի գործերն ու առաքինութիւնները, որ առաջնորդում են կատարելութեան, այս երկուսի շքախումբն են:

2. Ով դաւանում է հաւատքը, չի մեղանջում, ո՛չ էլ ատում է նա, ով ունի սէրը: «Ծառն իր պտղից է ճանաչւում»<sup>1</sup>. նմանապէս նրանք, ովքեր հուշակում են, թէ Քրիստոսին են, կը ճանաչուեն իրենց գործերից: Արդ, սա սոսկ խօսքերով դաւանելուն չի վերաբերւում, այլ տեսնելու՝ թէ տուեալ հոգին արդեօք ընդունա՞կ է անդրդուելի հաւատքի մէջ մնալու մինչեւ վերջ:

<sup>1</sup> Հմմտ. Մտթ 12, 33.

Խօսւմ եւ գործ

ԺԵ. – 1. Աւելի լաւ է լռել եւ լինել, քան թէ խօսել առանց լինելու: Լա՛ւ է ուսուցանելը, եթէ ով խօսում է, նաեւ գործադրում է: Միայն մէկն է Ուսուցիչը<sup>1</sup>. Նա, ով «ասաց եւ եղաւ»<sup>2</sup>: Նաեւ այն գործերը, որոնք Նա կատարեց լռութեամբ, արժանի են Հօրը:

2. Ով իր սրտում ունի Յիսուսի խօսքը, իսկապէս ընդունակ է այն լսելու նաեւ երբ լռում է, լինելու համար կատարեալ, գործելու համար Նըրա խօսքերով եւ ճանաչուելու համար Նրա լռութեամբ:

3. Ոչինչ չի վրիպում Տիրոջ հայեացքից, մանաւանդ թէ՛ մեր գաղտնիքներն էլ են Նրան յայտնի: Ձանանք ամէն գործ կատարել այն գիտակցութեամբ, որ Նա բնակւում է մեզնում, որպէսզի մենք Իր տաճարը լինենք<sup>3</sup> եւ Նա մեր Աստուածը

---

<sup>1</sup> Հմմտ. Մտթ 23, 8.

<sup>2</sup> Սղմ 33 [32], 9; 148, 5. Աստուածաշնչեան խօսքը, որն ի սկզբանէ գործածուած է Աստուծոյ վերաբերեալ, Իգնատիոսն ամենայն ազատութեամբ վերագրում է Յիսուսին, այսպիսով եւս յստակ դաւանելով Քրիստոսի Աստուածութիւնը: Ամբողջ Հատուածը ուղղուած է այն քրիստոնեաներին, որոնք այդպիսին են միայն խօսքով: Հետագայ մտքերը նոյնպէս Հաստատում են լռութեան եւ խօսքի ու գործի յարակցութեան արժէքը:

<sup>3</sup> Յատուկ ուշադրութեան է արժանի եզակի եւ յոգնակի թրուերի գործածումը այս համառօտ, բայց նշանակալի նախա-

լինի մեզնում<sup>1</sup>: Սա իրականութիւն է եւ մեր աչքերի առաջ կը բացայայտուի այն գործերի չափով, որոնցով կը սիրենք Իրեն սրբութեամբ:

Հաւատքն ապականոդները: Նրանց վախճանը (ԺՁ-ԺԷ)

ԺՁ. – 1. Մի՛ խաբուէք, եղբայրներ: Ովքեր ապականում են ընտանիքը, «չեն ժառանգելու Աստծոյ արքայութիւնը»<sup>2</sup>:

2. Եթէ նրանք, ովքեր այս կերպ վարուեցին, բնագոյն հետեւելով, մահուան արժանացան<sup>3</sup>, որքա՛ն եւս առաւել մահուան արժանի կը լինի նա, ով վատթար ուսմունքով ապականում է Աստծոյ հանդէպ հաւատքը, որի համար Յիսուս Քրիստոսը խաչուեց: Այդպիսին, կեղտով ու աղտոտութեամբ պատուելով, կը նետուի «անշէջ կրակի մէջ»<sup>4</sup>, ինչպէս նաեւ նրան լսողը:

---

դասութեան ներսում (մենք, տաճարը): Քրիստոնեաները, որպէս անհատներ, բազմաթիւ են, բայց միասին կազմում են Աստծոյ մէկ եւ միակ տաճարը: Նոյն կերպ, Աստուած մէկ է, բայց մեր Աստուածն է մեզնում: Շարունակ վերադառնում է Իգնատիոսին այդքա՛ն հոգեհարազատ միութեան գաղափարը: Հմմտ. 1Կր 3, 16; 6, 19.

<sup>1</sup> Հմմտ. Յյտ 21, 3.

<sup>2</sup> Հմմտ. 1Կր 6, 9-10.

<sup>3</sup> Հմմտ. Ղեւտ 20, 10.

<sup>4</sup> Մրկ 9, 43.

ԺԷ. – 1. Պատճառը, որի համար Տէրն Իր գլխի վրայ ընդունեց թանկարժէք իւղը, այն էր, որ Իր Եկեղեցու վրայ հեղէր անապականութիւնը<sup>1</sup>: Հետեւաբար, թոյլ մի՛ տուէք, որ ձեզ օժեն զազրահոտ ուսմունքով, որն այս աշխարհի իշխանից<sup>2</sup> է ծագում, որպէսզի ձեզ չստրկացնի եւ չհեռացնի ձեզ խոստացուած կեանքից:

2. Բայց ինչո՞ւ, ստանալով հանդերձ Աստուծոյ գիտութիւնը, որ Յիսուս Քրիստոսն է, բոլորս չենք իմաստնանում: Ինչո՞ւ ենք շարունակում խենթօրէն վազել դէպի կործանում, չճանաչելով ու չընդունելով պարգեւը, որ Տէրն իրօք առաքել է մեզ:

Կեանքս ընծայում եմ որպէս Խաչի գոհ

ԺԸ. – 1. Աշխարհից արհամարհուած, ես ընծայում եմ կեանքս որպէս Խաչի գոհ. Խաչ, որ գայ-

---

<sup>1</sup> Այս սահմանումով Իգնատիոսը սերտ յարաբերութիւն է հաստատում Քրիստոսի Ֆիզիկական Մարմնի եւ Նրա խորհրդաւոր Մարմնի՝ Եկեղեցու միջեւ: Փրկչի գլխին հեղուած թանկարժէք իւղը (Մտթ 26, 7 եւ Մրկ 14, 3; մինչ Դկս 7, 38 եւ Յվհ 12, 3 հատուածներում թանկարժէք իւղով օժուում են Քրիստոսի ոտքերը) անապականութեան նշանն էր: Նմանապէս քրիստոնեաները, որոնք կազմում են Քրիստոսի խորհրդաւոր Մարմինը, պէտք է հեռու մնան կեղծ ու ապականող ուսմունքներից:

<sup>2</sup> Հմմտ. Յվհ 12, 31; 14, 30; 16, 11.

Թակղուծիւն է անհաւատների համար, բայց մեր համար փրկութիւն է եւ յաւիտենական կեանք<sup>1</sup>: «Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր է քննողը»: Ո՞ւր է պարծանքը նրանց, ովքեր խելացի են կոչուում<sup>2</sup>:

2. Մեր Աստուած Յիսուս Քրիստոսը Մարիամի արգանդում կրուեց Աստծոյ ծրագրի համաձայն: Դաւթի տոհմից սերեց<sup>3</sup>, բայց Սուրբ Հոգու ներգործութեամբ: Նա ծնուեց եւ մկրտուեց, մաքրելու համար ջուրն իր Չարհարանքներով:

Բացառիկ խորհուրդներ են կատարուում Աստծոյ լուսութեան մէջ

ԺԹ. – 1. Այս աշխարհի իշխանին<sup>4</sup> անյայտ մնացին Մարիամի կուսութիւնը, ինչպէս նաեւ նրա ծննդաբերութիւնը եւ, նմանապէս, նաեւ Տիրոջ մահը: Երեք բացառիկ խորհուրդներ, որ կատարուեցին Աստծոյ լուսութեան մէջ<sup>5</sup>:

---

<sup>1</sup> Հմմտ. 1Կր 1, 23-24.

<sup>2</sup> Իգնատիոսը, հաւատքով լուսաւորուած, գիտակցում է իր անձնական անարժանութիւնը, բայց միաժամանակ յստակ գիտակցում է, որ Աստուած կարող է մեծ ու արժանի դարձնել իր խեղճ ընծան: Յամենայն դէպս, դա մի իրականութիւն է, որ անըմբռնելի կը մնայ այս աշխարհի իմաստունների համար: Հմմտ. 1Կր 1, 18-20.

<sup>3</sup> Հմմտ. Յվհ 7, 42; Հռմ 1, 3; 2Տմ 2, 8.

<sup>4</sup> Հմմտ. Յվհ 12, 31; 14, 30; 16, 11.

<sup>5</sup> Յիշեցնելուց յետոյ, որ Աստուած իր գործերը կատարելիս չի հետեւում աղմուկ ստեղծելու մարդկային չափանիշներին:

2. Ուրեմն ինչպէ՞ս յայտնի դարձուեցին աշխարհին: Մի աստղ փայլեց երկնքում, առաւել լուսաւոր, քան միւս բոլորը: Նրա լոյսն անճառելի էր եւ նրա նորութիւնը զարմանք առաջացրեց: Միւս բոլոր աստղերը, արեւի ու լուսնի հետ, խմբուեցին այդ աստղի շուրջը: Նա, սակայն, իր պայծառութեամբ գերազանցում էր միւս բոլոր աստղերին: Եւ բոլորը սաստիկ յուզումով հարցնում էին, թէ արդեօք որտեղի՞ց է այդ նորութիւնը, որն այդքա՛ն տարբեր է իրենցից<sup>1</sup>:

3. Այդ պահից սկսած խափանւում էին մոգութիւնները եւ խզւում էին չարութեան կապերը: Աստուած մարդկային կերպարանքով յայտնւելով, որպէսզի մարդուն պարզելի յաւիտենական կեանքի նորութիւնը, ջնջւում էր անգիտութիւնը եւ կործանւում էր հին թագաւորութիւնը: Սկիզբ էր առնում այն, ինչն Աստուած նախապատրաստել էր. դրա պատճառով ամէն բան արմատապէս փոխուեց, քանի որ նախապատրաստւում էր մահւան վերացումը:

---

րին, Իգնատիոսն աւելացնում է, որ ամենաբացառիկ իրադարձութիւնները եւս – ինչպիսիք են Որդու մարդեղութիւնը, նրա ծնունդն ու մահը – Աստծոյ կողմից կատարուեցին խոնարհ լռութեամբ, այն աստիճան, որ սատանային անգամ մնացին անյայտ:

<sup>1</sup> Հատուածը, որն ակնյայտ կերպով ներշնչուած է Բեթղեհէմեան աստղի պատմութիւնից (Մտթ 2, 2), թերեւս կամենում է ասել, որ Յիսուսի ծնունդը վերջ դրեց հեթանոսութեանն ու կուռքերին, նրանց պաշտամունքին սերտորէն կապուած մոգութեանն ու չարագործ գոհաբերութիւններին:

## Խոստումներ ու յանձնարարություններ

Ի. – 1. Եթէ Յիսուս Քրիստոսը, ձեր աղօթքների շնորհիւ, կը տայ ինձ այդ շնորհը եւ դա կը լինի Իր կամքը, մի երկրորդ համառօտ գրութեամբ, որ մտադիր եմ առաքել ձեզ<sup>1</sup>, մի քիչ աւելի մանրամասնօրէն կը քննարկեմ այն, ինչն այստեղ հազիւ սկսեցի. այսինքն, նոր մարդու՝ Յիսուս Քրիստոսի հետ կապուած Աստծոյ ծրագիրը, որ կենտրոնացած է Նրա հանդէպ հաւատքի եւ Նրա նկատմամբ սիրոյ, Նրա չարչարանքների ու յարութեան վրայ:

2. Մանաւանդ, եթէ Տէրն ինձ յայտնի, որ դուք բոլորդ, – միասին ու անհատաբար, – այն շնորհով, որ գալիս է Իր Անունից, հաւաքուում էք միայն մէկ հաւատքով եւ Յիսուս Քրիստոսի մէջ, որն «ըստ մարմնի ծնունց Դաւթի տոհմից»<sup>2</sup>, Մարդու Որդի եւ Աստծոյ Որդի. եւ որ հաւաքուում էք անբաժան մտքով լսելու Նպիսկոպոսի եւ քահանայից դասի խօսքը, բեկանելով մէկ միակ Հացը, որն անմահութեան դեղ է, հակաթոյն՝ չմահանալու, այլ՝ Յիսուս Քրիստոսի մէջ ապրելու համար յաւիտեան:

<sup>1</sup> Որքանով որ այժմ յայտնի է մեզ, Իզնատիոսը չկարողացաւ գրել այդ երկրորդ գրութիւնը, մարտիրոսութեան հետ կապուած դէպքերի արագ զարգացման պատճառով: Կամ էլ, եթէ գրել է, այդ գրութիւնը չի պահպանուել եւ չի հասել մինչեւ մեր օրերը:

<sup>2</sup> Հմմտ. Հռմ 1, 3.



## Աղօթքներ և հրաժեշտի ողջոյններ

ԻԱ. – 1. Ես քաւութեան գոհ եմ ձեր եւ նրանց համար, որոնց – Աստծոյ փառքի համար – ուղարկեցիք այստեղ՝ Զմիւռնիա, որտեղից գրում եմ ձեզ: Գոհանում եմ Աստուծոց, մինչ սիրտս գորովով լի է Պողիկարպոսի, ինչպէս նաեւ ձեր հանդէպ: Յիշեցէք ինձ, ինչպէս Յիսուս Քրիստոսն էլ յիշում է ձեզ:

2. Աղօթեցէք Ասորիքի Եկեղեցու համար, որտեղից – թէեւ նրա հաւատացեալներից վերջինն եմ – շղթայակապ տարւում եմ Հռոմ, որովհետեւ արժանի համարուեցի ընտրուելու, որպէսզի փառաւորեմ Աստուծոյ: Անյողղորդ մնացէք Հայր Աստծոյ եւ Յիսուս Քրիստոսի՝ մեր ընդհանուր յոյսի մէջ:

## ՄԱԳՆԵՉԻԱՅԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՆ

*Մագնեզիան Քարիայի փոքրիկ քաղաքներից մէկն էր, Մէանդրոս գետի ափերին, Եփեսոսից ո՛չ շատ հեռու: Այնտեղ ապրում էր քրիստոնեաների մի ծաղկուն համայնք, որը նոյնպէս պատուիրակներ էր ուղարկել Իգնատիոսին հանդիպելու եւ նրան մխիթարելու համար: Համայնքի Առաջնորդն էր Դամաս Եպիսկոպոսը, որի բաւականին երիտասարդ տարիքը թերեւս որոշակի խնդիրներ էր առաջացրել հասուն տարիքի հաւատացեալների մօտ:*

*Իգնատիոսն այդ հարցին ակնարկում է մեծ նրբանկատութեամբ, ապա խօսքն իսկոյն ուղղում է իրեն աւելի հոգեհարազատ հարցերին. Աւետարանի հանդէպ հաւատարմութիւնը, հաւատքի անապական պահպանումը եւ յատկապէս՝ համերաշխութիւնն ու միութիւնը:*

### Ողջոյն

*Իգնատիոսը, որին անուանում են նաեւ Աստուածակիր, Մէանդրոս գետի ափերին գտնւելող Մագնեզիայի եկեղեցուն. եկեղեցուն, որ օրհնւած է Հայր Աստծոյ շնորհով, մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսով: Նրա Անունով եմ ես ողջունում եւ լիակատար ուրախութիւն մաղթում ձեզ, Հայր Աստծոյ եւ Յիսուս Քրիստոսի մէջ:*

Գովասանքի խօսքեր (Ա-Բ)

Ա. – 1. Իմացայ ձեր սիրոյ կատարեալ դրութեան մասին, որն Աստծոյ կամքի համաձայն է: Ուստի մեծ ուրախութեամբ մտածեցի խօսել ձեր հետ, Յիսուս Քրիստոսի հանդէպ հաւատքի մէջ:

2. Քանի որ որպէս պարզեւ ստացել եմ մի անուն, որն աստուածային վայելչութիւն է արտայայտում<sup>1</sup>, կրածս այս շղթաներով գովաբանում ու հռչակում եմ Եկեղեցիներին<sup>2</sup>, եւ աղօթում եմ, որ նրանց մէջ լինի մարմնի եւ հոգու միութիւնը Յիսուս Քրիստոսի, որ մեր մշտնջենաւոր կեանքն է. միութիւնը հաւատքի եւ սիրոյ, որն ամենաթանկարժէք պարգեւն է. եւ յատկապէս՝ Յիսուսի եւ Հօր միութիւնը: Աստծոյ մէջ դիմադրելով այս աշխարհի իշխանի<sup>3</sup> ամէն տեսակ

<sup>1</sup> Յստակ չէ, թէ Իգնատիոսն այստեղ ակնարկում է իր Աստուծակիր անունը, թէ՛ քրիստոնեայ լինելու արժանապատուութեանը, որը նոյնպէս «աստուածային վայելչութիւն է արտայայտում»: Յամենայն դէպս, նշանակալի է նրա փափաքը լիուրի իրագործելու այն, ինչն արտայայտում է իր անունը:

<sup>2</sup> Մարտիրոսի շղթաները, կամ աւելի ճիշտ կը լինի ասել՝ նրա շղթայուած լինելը յանուն Աստծոյ, Քրիստոսի Եկեղեցիների համար պարձանքի առիթ է, գովաբանութիւն: Քանի որ Քրիստոսի եւ կատարեալ քրիստոնեաների խաչակրութեամբ է աճում Եկեղեցին: «Մարտիրոսների արիւնը նոր քրիստոնեաներ ծնող սերմն է» (Տերտուղիանոս):

<sup>3</sup> Հմմտ. Յվհ 12, 31; 14, 30; 16, 11.

յարձակումներին եւ խոստափելով նրա ազդեցութիւնից՝ կը հասնենք Աստուծոն<sup>1</sup>:

Բ. Քանի որ բախտն ունեցայ ձեզ բոլորիդ տեսնելու յանձինս Դամասի՝ Աստուծոն արժանի ձեր Եպիսկոպոսի, եւ յանձինս ձեր արժանաւոր քահանաներ Բասոսի եւ Ապողոնիոսի, եւ յանձինրս Զոթիոն սարկաւագի, իմ ծառայակցի, որի ներկայութիւնից կը փափաքէի տակաւին պտուղներ քաղել, քանի որ հնազանդ է Եպիսկոպոսին ինչպէս Աստուծոյ շնորհին, եւ քահանայից դասին՝ ինչպէս Յիսուս Քրիստոսի օրէնքին:

Յարգել Եպիսկոպոսին

Գ. – 1. Ձեզ նոյնպէս պատշաճ է չարաչար չգործածել ձեր Եպիսկոպոսի երիտասարդ լինելու

---

<sup>1</sup> Այստեղ առաջին անգամ լինելով գործածուած է մի բայ, որը իւրայատուկ կերպով կարեւոր է Իգնատիոսի նամակներում, յատկապէս՝ Հռոմէացիներին ուղղուած նամակում. «tyncháno» (գրեթէ միշտ գործածուած է իր «epityncháno» բաղադրեալ ձևով): Սովորաբար այն իրեն որպէս առարկայ ունի Աստուծոն, բայց երբեմն նաեւ շնորհը, Յիսուս Քրիստոսին, խոստացուած յաւիտենական ժառանգութիւնը: Թարգմանում է «հասնել», բայց իր ամբողջական իմաստը պարզապէս ինչ որ տեղ հասնելը չէ, այլ՝ հասնել միանալու, տուեալ դէպքում՝ Աստուծոն, նրա հետ լիակատար հաղորդութեան մէջ ապրելու համար:

Հանգամանքը<sup>1</sup>, այլ Հայր Աստծոյ զօրութեամբ՝ ամէն կերպ ընծայել նրան յարգանք, ինչպէս իմացայ, որ ձեր սուրբ քահանաները եւս չեն չարաշահել նրա ակնյայտ երիտասարդական վիճակը, այլ – ինչպէս վայել է Աստծոյ համաձայն իմաստնացած այրերին – Հնազանդուում են նրան. ո՛չ թէ նրան, այլ Յիսուս Քրիստոսի Հօրը, որ բոլորի Եպիսկոպոսն է<sup>2</sup>:

2. Հետեւաբար, մեզ սիրող Աստծոյ պատուի համար է, որ պէտք է Հնազանդուեանք առանց որեւէ կեղծաւորութեան, որովհետեւ ով ա՛յլ կերպ է վարուում, չի խաբում այս տեսանելի Եպիսկոպոսին, այլ ջանում է խաբել անտեսանելի Եպիսկոպոսին: Այդպիսի դէպքում խօսքը չի վերաբերւում մարմնին, այլ՝ Աստծուն, որին յայտնի են դաղտնի մտքերն ու զգացումները:

---

<sup>1</sup> Իգնատիոսի խօսքերում կարծես արձագանքում են Պօղոս Առաքեալի կողմից Տիմոթէոսին ուղղուած խօսքերը. «Թող ոչ ոք չարհամարհի քո երիտասարդ տարիքը» (1Տմ 4, 12):

<sup>2</sup> Ահա տրւում է Եպիսկոպոսին եւ եկեղեցական Հեղինակութիւններին Հնազանդուելու իրական պատճառը. նրանք տեսանելի կերպով ներկայացնում են անտեսանելի Աստծուն, որն է Հնազանդութեան միակ հասցէատէրը: Ստորեւ (Հատուած Դ.) Եպիսկոպոսի նկատմամբ Հնազանդութիւնը Իգնատիոսն ընդգծում է որպէս «քրիստոնեայ լինելու» համար էական տարր:

Եպիսկոպոսի հեղինակությունը ճանաչել  
խօսքով եւ գործով

*Դ. Հարկ է, ուստի, ո՛չ միայն քրիստոնեայ  
կոչուել, այլ յատկապէս՝ լինել այդպիսին: Այսին-  
քըն, չլինել ինչպէս ոմանք, ովքեր խօսքով ըն-  
դունում են Եպիսկոպոսին, բայց յետոյ ամէն բան  
անում են առանց նրա: Ես կարծում եմ, որ նման  
անձանց միտքը մաքուր չէ, քանի որ հաւաքւում  
են հաւաքներում, որոնք անշուշտ ըստ պատուի-  
րանի չեն:*

Երկու դրամներն ու երկու դրոշմները

*Ե. – 1. Ամէն ինչ վախճան ունի, եւ երկու  
իրականութիւններ են միասին կանգնած մեր դի-  
մաց. մահը եւ կեանքը: Իւրաքանչիւր ոք գնալու  
է իր տեղը<sup>1</sup>:*

*2. Ինչպէս նաեւ երկու դրամներ կան, մէկն՝  
Աստծունը, իսկ միւսը՝ աշխարհինը, եւ դրանցից*

---

<sup>1</sup> Նշանակալից է բնականութիւնը, որով Իգնատիոսը խօսում  
է մահուան եւ դալիք կեանքի իրականութիւնների մասին:  
Սուրբ Մարտիրոսը կարծես կամենում է ասել, որ դրանք  
քրիստոնեայի համար հոգեհարազատ ու քննարկման կարիք  
չունեցող հարցեր են: Կարեւորն այն է, – ինչպէս հաստա-  
տում է մի քանի տող յետոյ, – որ իւրաքանչիւր ոք հասնի  
ստանալու «Հայր Աստծոյ դրոշմը Յիսուս Քրիստոսի միջո-  
ցով»: Հմմտ. Գրծ 1, 25.

*իւրաքանչիւրն իր վրայ իր սեփական պատկերն ունի դրոշմուած, եւ անհաւատներն այս աշխարհի դրոշմն ունեն, մինչդեռ հաւատացեալները, սիրոյ մէջ, կրում են Հայր Աստուծոյ դրոշմը Յիսուս Քրիստոսի միջոցով: Եթէ մենք չենք ընտրում մահանալ իր միջոցով, մասնակցելու համար իր չարչարանքներին, իր կեանքը մեզնում չունենք:*

Համախոհութեան հրաւեր

Ձ. – 1. Ուստի, քանի որ քիչ առաջ յիշատակածս անձանց մէջ հաւատքով տեսայ եւ սիրով ընդունեցի ձեր ամբողջ համայնքը, արդ յորդորում եմ ձեզ. ջանացէք ամէն բան կատարել Աստուծոյ մէջ համախոհութեամբ, Եպիսկոպոսի նախագահութեամբ, որն Աստուծոյ փոխանորդն է, քահանաների ու սարկաւազների հետ միասին. քահանաների, որոնք Առաքեալների դասի տեղապահներն են, եւ ինձ յոյժ սիրելի սարկաւազների, որոնց վստահուած է սպասաւորութեան պաշտօնը Յիսուս Քրիստոսի, որն ի յաւիտենից Հօր մօտ էր եւ յայտնուեց, երբ ժամանակներն հասան իրենց լրումին:

2. Դուք բոլորդ էլ, հետեւաբար, Աստուծոն կերպարանակից դառնալով՝ միմեանց հանդէպ փոխադարձ յարգանք ունեցէք. ոչ ոք իր մերձա-

ւորին թող չդիտի սոսկ մարմնաւոր Հայեացքով<sup>1</sup>,  
այլ՝ Յիսուս Քրիստոսի մէջ միշտ սիրեցէք մի-  
մեանց: Թող ձեր մէջ տեղ չգտնի ոչինչ, որ կա-  
րող է բաժանել ձեզ, այլ ընդհակառակն՝ միացած  
մնացէք Եպիսկոպոսին ու երէցներին որպէս անա-  
պականութեան նշան եւ ուսուցում:

Միայն մէկ աղօթք, միայն մէկ թախսանձանք,  
Աստույ միայն մէկ տաճար

Է. – 1. Ինչպէս որ Տէրը ոչինչ չգործեց ա-  
ռանց Հօր, – ո՛չ անձամբ, ո՛չ էլ Առաքեալների  
միջոցով, – քանի որ միայն մէկ միութիւն է Նրա  
հետ, նոյն կերպ դուք էլ ոչինչ մի՛ գործէք առանց  
Եպիսկոպոսի ու քահանաների: Եւ մի՛ փորձէք որ-  
պէս գովելի ներկայացնել այն, ինչը ձեր անհա-  
տական նախաձեռնութեան արդիւնքն է, այլ ամէն

---

<sup>1</sup> Տուեալ դէպքում «մարմնաւոր» վարմունքը հակասում է  
այն միւս վարմունքին, որի բնորոշ յատկանիշը «Յիսուս  
Քրիստոսի մէջ» լինելն է: Իգնատիոսը յորդորում է մերձա-  
ւորին չդիտել սոսկ նիւթական չափանիշներով, այլ՝ Յիսուս  
Քրիստոսի մէջ, տուեալ անձի վերաբերեալ Աստույ կամքի  
համաձայն: Արդարեւ, ասում է «Աստուն կերպարանակից  
դառնալով», այսինքն՝ մերը դարձնելով Նրա իսկ զգացում-  
ներն ու վարուելակերպը: Իգնատիոսը քրիստոնեաներին յոր-  
դորում է իւրաքանչիւր մարդու դիտել այն Հայեացքով, ո-  
րով նրան դիտում է Աստուած Ինքը: Միմիայն այդպէս կա-  
րող է հնարաւոր դառնալ հազորդութիւնը Եկեղեցու ներ-  
սում:



բան թող ընդհանուր լինի. միայն մէկ աղօթք, միայն մէկ թախանձանք, միայն մէկ միտք, միայն մէկ յոյս՝ սիրոյ ու անապական բերկրանքի մէջ, որ Յիսուս Քրիստոսն է, որից առաւել գերազանց ոչինչ չկայ:

2. Բոլորդ, ինչպէս որ հաւաքւում էք Աստծոյ միակ տաճարի ներսում եւ միակ խորանի շուրջը, նոյն կերպ արագավազ ընթացէք դէպի միակ Յիսուս Քրիստոսը, որ միակ Հօրից ելաւ, Նրան միացած մնաց եւ Նրա մօտ վերադարձաւ:

### Յուդայականները

Ը. – 1. Մի՛ թողէք, որ մոլորեցնեն ձեզ օտար ուսմունքներով կամ հին հէքեաթներով. դրանք բոլորն էլ անօգուտ բաներ են: Արդարեւ, եթէ մինչեւ օրս դեռ շարունակենք ապրել հրէական օրէնքներով, դրանով իսկ կարծես խոստովանած կը լինենք՝ թէ տակաւին չենք ստացել շնորհը<sup>1</sup>:

<sup>1</sup> Հարկ է նշել, որ հրէական օրէնքներ ասելով Իգնատիոսն ի նկատի չունի Հին Կտակարանը որպէս այդպիսին, այլ՝ այդ նոյն Հին Կտակարանի հրէական մեկնաբանութեանը կապւած սովորոյթների այն վիթխարի զանգուածը, որի վրայ էին հրեաները (մանաւանդ փարիսեցիները) հիմնում իրենց աստուածապաշտութիւնը: Իգնատիոսի խօսքերը լիովին համահունչ են այդ հարցի շուրջ Աւետարանում Յիսուսի կողմից տրուած ուսուցումներին, որոնց բաւականին անդրադառնում է նաեւ Պօղոս Առաքեալը իր նամակներում:

2. Արդարեւ, Աստուծոյ կողմից առաքուած մարգարէներն իսկ ապրեցին Յիսուս Քրիստոսի համաձայն: Եւ այդ պատճառով է, որ հալածուեցին նաեւ, քանի որ Նրա շնորհն իրենց ներշնչում էր գործելու, որպէսզի անհաւատները համոզուէին, որ կայ միայն մէկ Աստուած, որն յայտնուել է յանձինս Յիսուս Քրիստոսի, Իր Որդու: Նա Հօր Խօսքն է, լուսթիւնից բխած<sup>1</sup>, եւ ամէն ինչում հաճելի գտնուեց Հօրը, որն Իրեն առաքել էր<sup>2</sup>:

Տիրոջ օրը

Թ. – 1. Նրանք, ուստի, ովքեր ապրում էին հին կարգի համաձայն, յոյսի նորութեանը<sup>3</sup> հա-

<sup>1</sup> Քրիստոնէական միստիկայի կարեւորագոյն կէտերից մէկն է այստեղ յիշատակում Իգնատիոսը. յաւիտենական լուսթեան մէջ Հայրն ասել է միայն մէկ Խօսք եւ Իր այդ Միաձին Խօսքի մէջ ասել է ամէն բան, մէկընդմիջաւ: Ճշմարտութիւնը փնտրող մարդկային բոլոր հարցերը այդ միակ Խօսքի մէջ են գտնում իրենց պատասխանը:

<sup>2</sup> Հմմտ. Յվհ 8, 29.

<sup>3</sup> «Յոյսի նորութիւնը» իգնատիոսեան գեղեցիկ արտայայտութիւններից մէկն է Յիսուս Քրիստոսի Աւետարանը մատնանշելու համար: Խօսքը հիմնականում ուղղուած է Յուդայականներին, որոնք մովսէսական Օրէնքի արտաքին ձեւերի նկատմամբ ծայրայեղ կապուածութեամբ՝ ուժգին հակառակում էին աւետարանական «նորութեանը»: Պօղոս Առաքեալն արդէն պարզել էր, որ Մովսէսի Օրէնքը պատմութեան ընթացքում դաստիարակի դեր էր կատարել՝ առաջնորդելով դէպի Քրիստոսը (Գղտ 3, 24): Իգնատիոսն իր

սան ո՛չ թէ տակաւին պահելով շաբաթը, այլ՝ ապրելով «Տիրոջ օրուայ» համաձայն<sup>1</sup>. այն օրուայ, որում նաեւ մեր կեանքը յայտնուեց Նրա եւ Նրա մահուան միջոցով: Ոմանք մերժում են այս փաստը, բայց սա՛ է այն խորհուրդը, որից մենք ստացել ենք հաւատքը եւ որի շնորհիւ յարատեւում ենք, որպէսզի աշակերտները լինենք<sup>2</sup> Յիսուս Քրիստոսի, մեր միակ Ուսուցչի:

2. Ինչպէ՞ս կարող ենք մենք ապրել առանց Նրա, երբ Մարգարէներն անգամ, որ Նրա աշակերտներն էին հոգով, Նրան էին սպասում որպէս

---

կողմից յաւելում է, որ միմիայն դէպի Քրիստոս առաջնորդելու իրենց այս դերից ներս է, որ Հին Օրէնքի գործերն իմաստ ունէին: Եթէ կտրուում են Քրիստոսից եւ դառնում են ինքնանպատակ, ա՛յլ բան չեն, քան միայն՝ «Հին հէքեաթներ»:

<sup>1</sup> «Տիրոջ օրը» (Յյտ 1, 10) դա կիրակին է, որ եկաւ փոխարինելու հրէական շաբաթին, ի յիշատակ Քրիստոսի Յարութեան: Յուստինոսն արդէն գրում էր, որ քրիստոնեաները հաւաքւում են կիրակի օրը, «որովհետեւ այս առաջին օրն այն է, որում Աստուած ստեղծեց աշխարհը, եւ որովհետեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսն այդ նոյն օրը յարութիւն առաւ մահից»: Ուստի, Իգնատիոսի համար եւս, «ապրել Տիրոջ օրուայ համաձայն» նշանակում է ապրել Յարուցեալի կեանքով, ապրել Յարութեան լոյսի ներքոյ:

<sup>2</sup> Բառացիօրէն՝ «աշակերտները գտնուենք»: Իգնատիոսի միտքը վախճանաբանական երանգաւորում ունի. ուզում է ասել, որ Տիրոջ երկրորդ գալստեան ու դատաստանի ժամանակ կարեւոր է, որ քրիստոնեան «գտնուի» աշակերտութեան վիճակում: Իգնատիոսի այս խօսքն անուղղակի կերպով կապւում է Յիսուսի խօսքին. «Երբ Մարդու Որդին գայ, արգեօք երկրի վրայ հաւատք կը գտնի՞» (Ղկա 18, 8):

*Ուսուցիչ: Այս պատճառով է, որ Նա, ում նրանք արդարացիորէն սպասում էին, երբ եկաւ, նրանց յարութիւն տուեց մեռեալներից<sup>1</sup>:*

Նոր թթիւնորը. Յիսուս Քրիստոս

*Ժ. – 1. Անզգայ չլինենք, ուստի, Նրա բարեացակամութեանը: Որովհետեւ եթէ Նա նմանէր մեզ, վարուելով այնպէս՝ ինչպէս վարուում ենք մենք, մենք այլեւս գոյութիւն չէինք ունենայ: Ուստի, Նրան աշակերտելով՝ սովորենք ապրել Քրիստոնէութեան համաձայն: Արդարեւ, ով այս անունից տարբեր անունով է ներկայանում, Աստծունը չէ<sup>2</sup>:*

*2. Դէն նետեցէք հնացած, թթուած ու փչացած թթիւմորը, եւ խմորուեցէք նոր թթիւմորով, որ Յիսուս Քրիստոսն է<sup>3</sup>: Թող Նա լինի ձեր կեանքի աղը, որպէսզի ձեզնից ոչ ոք չփտի ու չապականուի, քանի որ ձեր հոտի հիման վրայ էք դատուելու<sup>4</sup>:*

---

<sup>1</sup> Հմմտ. Մտթ 27, 52-53.

<sup>2</sup> Հմմտ. Գրծ 4, 12. Իգնատիոսը յստակ կերպով ակնարկում է այն տարատեսակ անուններին, որոնցով քրիստոնէական տարբեր խմբաւորումներ անուանում էին իրենք իրենց, շեշտելով իրենց տարբերութիւնը – յաճախ նաեւ, աւաղ, բաժանումը – Ընդհանրական Եկեղեցուց: Յաւոք այսօր եւս պատկերն ա՛յլ չէ:

<sup>3</sup> Հմմտ. 1Կր 5, 7-8.

<sup>4</sup> Հմմտ. Մտթ 5, 13; 1Կր 5, 7; 2Կր 2, 14-16.

3. Անհեթեթ հակասութիւն է խօսել Յիսուս Քրիստոսի մասին եւ հետեւել հրէական սովորոյթներին: Իրօք, Քրիստոնէութիւնը չէ, որ հաւատացել է յուրայականութեանը, այլ՝ յուրայականութիւնն է դարձի եկել Քրիստոնէութեան, որի մէջ հաւաքուեցին բոլոր նրանք, ովքեր հաւատում են Աստծուն:

#### ԱՆՍԱՍԱՆ ԽԱՍԱՄԲ

ԺԱ. Ձեզ այս բաներն ասում եմ, սիրելիներ, ո՛չ որովհետեւ իմացել եմ, թէ ձեզնից ոմանք այս կերպ են վարուում: Բայց, թէեւ ես ձեզնից առաւել նուստ եմ, կամենում եմ զգուշացնել ձեզ, որպէսզի սնափառութեան կարթը կուլ չտաք, այլ անյողդողդ համոզուած լինէք Տիրոջ ծննդեանը, չարչարանքներին ու յարութեանը, որոնք տեղի ունեցան կուսակալ Պոնտացի Պիղատոսի օրոք. այս դէպքերը ճշմարտապէս եւ առանց որեւէ կասկածի<sup>1</sup> կատարուեցին Յիսուս Քրիստոսի կողմից,

---

<sup>1</sup> Սա Իգնատիոսի առաջին ակնարկներից մէկն է Յիսուսի ծննդեան, չարչարանքների ու յարութեան իրականութեանը: Մարտիրոսի խօսքերը վերաբերում են Դոկետներին, որոնց համաձայն Քրիստոսի մարմինը իրական չէր, այլ՝ երեւութական, ուստի Նա «թուաց» ծնուել, չարչարուել ու մահանալ (յունարէն «dokéin» բայը նշանակում է «թուալ»): Դոկետներից հետագայում ծնունդ առան նաեւ այլ գնոստիկական հերետիկոսութիւններ. Պաւլիկեաններն ու Թոնդ-

որ մեր յոյսն է: Մաղթում եմ, որ ձեզնից ոչ ոքի  
չպատահի հեռանալ Նրանից:

Ձեզնից ոչ մեկից աւելի չեմ ...

ԺԲ. Թող որ ես ըստ ամենայնի ուրախ լինեմ  
ձեզնով, եթէ դրան արժանի եմ: Որովհետեւ, թէեւ  
չլլթաներ եմ կրում, այդուհանդերձ ձեզնից ոչ մէ-  
կից աւելի չեմ, որ ազատ էք: Գիտեմ, որ չէք հը-  
պարտանում, քանի որ Յիսուս Քրիստոսին ունէք  
ձեր մէջ: Աւելին, գիտեմ, որ երբ ձեզ գովում եմ,  
դուք ամաչում էք, ինչպէս եւ գրուած է. «Արդարն  
ինքն իրեն է մեղադրում»<sup>1</sup>:

Կրկին համախոհութեան հրաւեր

ԺԳ. – 1. Ձանացէք հաստատուն մնալ Տիրոջ  
եւ Առաքեալների ուսմունքի մէջ, որպէսզի այն  
ամէնը, որ անում էք, յաջողուի ձեզ<sup>2</sup> մարմնի եւ  
հոգու մէջ, հաւատքի եւ սիրոյ մէջ, Որդու եւ Հօր

---

րակեանները Հայաստանում, Բողոքիները սլաւոնական եր-  
կրներում, Քաթարները Եւրոպայում: Այս հարցին Իգնա-  
տիոսն առաւել ուժգին կերպով անդրադառնալու է Թրալլե-  
սի եւ Ջմիւռնիայի քրիստոնեաներին ուղղած իր նամակնե-  
րում:

<sup>1</sup> Առկ 18, 17.

<sup>2</sup> Հմմտ. Սղմ 1, 3.

եւ Հոգու մէջ, սկզբում եւ վերջում, ձեր արժանա-  
ւորագոյն Եպիսկոպոսի հետ միութեամբ, եւ այն  
թանկարժէք հոգեւոր պսակի, որ ձեր քահանա-  
ներն են եւ ձեր սարկաւազները, Աստուծոյ համա-  
ձայն:

2. Հնազանդ եղէք Եպիսկոպոսին եւ մի-  
մեանց<sup>1</sup>, ինչպէս Յիսուս Քրիստոսը որպէս մարդ  
հնազանդ եղաւ Հօրը, եւ ինչպէս Առաքեալները  
հնազանդ եղան Քրիստոսին եւ Հօրը եւ Հոգուն,  
որպէսզի մարմնաւոր եւ հոգեւոր միաբանութիւն  
լինի:

Յորդորներ եւ հրաժեշտի ողջոյններ

ԺԻ. Գիտեմ, որ արդէն իսկ լի էք Աստուծով,  
այդ պատճառով էլ ձեզ համառօտ յորդորներ գը-  
րեցի: Յիշեցէք ինձ ձեր աղօթքներում, որպէսզի  
կարողանամ հասնել Աստուծուն: Յիշեցէք նաեւ Ա-  
սորիքի Եկեղեցուն, որի անունը կրելուն արժանի  
չեմ: Աստուծոյ մէջ միաբանուած ձեր աղօթքի եւ  
ձեր սիրոյ կարիքն ունեմ, որպէսզի Ասորիքի Եկե-  
ղեցին, ձեր Եկեղեցու շնորհիւ, ի վերուստ իջած  
ցօղով զովանայ<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Հմմտ. Եփես 5, 21.

<sup>2</sup> Իգնատիոսն իր սիրագեղ սրտով կրկին յիշում եւ աղօթք-  
ներ է խնդրում Անտիոքի իր սիրելի Եկեղեցու համար, որից

ԺԵ. *Ձեզ ողջունում են եփեսացիները Ձմիւռնիայից, որտեղից եմ ձեզ գրում: Ձեր նման, նրանք էլ եկան ինձ այցելելու Աստծոյ փառքի համար: Ամէն կերպ սփոփեցին ինձ, Ձմիւռնիայի Եպիսկոպոս Պողիկարպոսի հետ միասին: Միւս Եկեղեցիներն էլ են ձեզ ողջունում Յիսուս Քրիստոսի պատուով: Ողջ եղէք Աստծոյ մէջ համախոհութեամբ, անկորոյս պահպանելով այն անբաժան հոգին, որ Յիսուս Քրիստոսն է:*

---

*Հարկադրաբար հեռացուել էր հայաձանքների պատճառով: Իր միւս նամակներից տեղեկանում ենք, որ Իգնատիոսը շուտով իմանում է, որ Անտիոքի Եկեղեցին վերագտել է իր խաղաղութիւնը: Տարբեր համայնքների խնդրում է պատուիրակներ ուղարկել Անտիոք, փոխանցելու համար իր ողջոյններն ու ուրախակցութիւնը եւ միասին գոհութիւն յայտնելու Տիրոջը (տե՛ս Ֆիլ. Ժ 1, Ձմիւռ. ԺԱ 2, Պող. Է 1):*



## ԹՐԱԼԼԻՍԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՆ

*Թրալլիսը, Քարիայի Հնագոյն քաղաքներից մէկը, Երկրորդ դարի սկզբին քաղաքական կամ Հասարակական մեծ կարեւորութիւն չէր վայելում, բացառութեամբ իր աշխարհագրական դիրքի. գտնուում էր Մէանդրոս գետի ափերին, հետեւաբար՝ առեւտրական որոշակի գործունէութեան կենտրոնում էր:*

*Այստեղ նոյնպէս Հեթանոսութիւնից դարձի եկած քրիստոնեաները ծնունդ էին տուել մի ծաղկուն Համայնքի, որն հաւատարիմ էր Աւետարանին եւ հըզօր էր նեղութիւնների մէջ, ինչպէս ընդգծում է Իգնատիոսն ինքը: Չէին պակասում, սակայն, ուղղաբաւանութեանը վտանգող ուսմունքները, որոնք տարածւում էին ամէնուրեք սպրդող Հերետիկոսների կողմից: Ամէնից աւելի մտահոգութիւնների առիթ հանդիսացող խումբը թերեւս Դոկետներն էին, որոնք մերժում էին Քրիստոսի կողմից մարդկային իրական բնութիւն ստանձնելու իրականութիւնը եւ, հետեւաբար, Նրա երկրային կեանքի բոլոր տեսանելի դըրւագները որակաւորում էին իբրեւ սոսկ «երեւութական»: Այդ «մահուան պտուղ ծնող թունաւոր ծիլերի» դէմ (ԺԱ) Սուրբ Մարտիրոսը խստագոյն տողեր է թղթին յանձնում: Բայց հարցին միւս կողմից դիտելով պէտք է ասենք, որ այդ Հերետիկոսները նրան նաեւ առիթ են ընծայում մեզ փոխանցելու հաւատքի իր գեղեցիկ դաւանութիւններից մէկը, որ կարդում ենք Իններորդ հատուածում:*

## Ողջոյն

*Իգնատիոսը, որին անուանում են նաեւ Աստուածակիր, ողջունում է Ասիայում գտնուող Թրալլիսի սուրբ եկեղեցուն.*

*– Աստոյ՝ Յիսուս Քրիստոսի Հօր սիրոյ առարկան հանդիսացող եկեղեցուն.*

*– Ընտրեալ եւ Աստուն արժանի եկեղեցուն.*

*– եկեղեցուն, որ մարմնաւոր եւ հոգեւոր խաղաղութիւն է վայելում չարչարանքների շնորհիւ Յիսուս Քրիստոսի, որն իր մէջ յարուցիւն առնելու մեր յոյսն է:*

*Ողջունում եմ նրա անդամներից իւրաքանչիւրին, Առաքեալների նմանութեամբ<sup>1</sup>, եւ Աստուծոց նրանց համար հայցում եմ ամենայն բարիք:*

Գովասանքի խօսքեր: Հնազանդութիւն Եպիսկոպոսին (Ա-Բ)

Ա. – 1. *Ձեր մասին իմացայ, որ անբասիր հոգի ունէք, համբերութեան մէջ հաստատուն ու անբաժան: Եւ դա ո՛չ թէ ջանադիր հրահանգմամբ, այլ՝ բնական տրամադրուածութեամբ<sup>2</sup>, ինչ-*

<sup>1</sup> Յունարէնում. «apostolikò charaktêri», որն առաւել ճշգրիտ կերպով կարող է թարգմանուել «առաքելական ոճով»:

<sup>2</sup> Հակասութիւնը երկու արտայայտութիւնների միջեւ է. «katà chêsîn» (ըստ կիրառման) եւ «katà phýsin» (ըստ բնու-

պէս ինձ յայտնեց Պողիբիոսը, ձեր Եպիսկոպոսը, որն Աստծոյ եւ Յիսուս Քրիստոսի կամքով եկաւ Ձմիւռնիա եւ ուրախացաւ իմ հետ, որ շղթայուած եմ Յիսուս Քրիստոսի համար, եւ ես յանձինս նրա տեսայ ձեր ամբողջ համայնքը:

2. Նրա միջոցով, ուստի, ընդունեցի ձեր բարեացակամութիւնն ըստ Աստծոյ, եւ փառաւորեցի Տիրոջն այն բանի համար, որ ձեր մասին իմացայ, – ինչպէս արդէն իսկ գիտէի, – որ Աստծուն նըմանուողներ էք:

Բ. – 1. Արդարեւ, եթէ հնազանդուում էք Եպիսկոպոսին, ինչպէս Յիսուս Քրիստոսին, դուք փաստում էք ինձ, որ ապրում էք ո՛չ թէ մարդկային դատողութեամբ, այլ՝ Յիսուս Քրիստոսի համաձայն, որ մահացաւ մեր համար, որպէսզի դուք, իր մահուանը հաւատալով, խուսափէք մահից<sup>1</sup>:

2. Ուստի անհրաժեշտ է, որ ոչինչ չանէք առանց Եպիսկոպոսի, ինչպէս արդէն իսկ այդպէս

---

թեան), որոնցից առաջինը մատնանշում է մի բան, որ ջանքի, վարժութիւնների, հրահանգման արդիւնք է, այսինքն՝ ձեռքբերուած առաքիչութիւն, մինչ երկրորդը ցոյց է տալիս մի բան, որ բնական, բնածին յատկութիւն է:

<sup>1</sup> Իրօք ուշադրութեան արժանի է կարեւորութիւնը, որ Իդնատիոսն ընծայում է Յիսուսի մահուանը: Անհրաժեշտ է հաւատալ նրա ո՛չ միայն յարուցեանը, այլ նաեւ մահուանը: Յիսուսի մահուանը հաւատալով ենք, ասում է, խուսափում մահից:

էք վարւում: Մանաւանդ թէ, հնազանդ եղէք նաեւ քահանայից դասին, ինչպէս Առաքեալներին Յիսուս Քրիստոսի, որ մեր յոյսն է<sup>1</sup>: Նրա մէջ ապրելով է, որ Նրա մէջ կը գտնուենք<sup>2</sup>:

3. Անհրաժեշտ է, ապա, որ նաեւ նրանք, ովքեր Յիսուս Քրիստոսի խորհուրդներին սպասաւորող սարկաւազներն են, բոլորի կողմից ընդունւեն ամենայն պատուով: Նրանք, իրօք, կերակուրների ու ըմպելիքների սպասաւորներ չեն, այլ՝ Աստուծոյ Եկեղեցու պաշտօնեաները: Ուստի հարկաւոր է, որ նրանք զգուշանան պախարակելի ամէն ինչից, ինչպէս կրակից<sup>3</sup>:

Առանց նուիրապետութեան չկայ Եկեղեցի

Գ. – 1. Նոյն կերպ թող ամէն ոք յարգանք ընծայի սարկաւազներին, ինչպէս Յիսուս Քրիստոսի

---

<sup>1</sup> Հմմտ. 1Տմ 1, 1.

<sup>2</sup> Այսինքն՝ ներկայ կեանքում Նրա մէջ ապրելով է, որ դաւիթ կեանքում էլ Նրա մէջ կը գտնուենք:

<sup>3</sup> Իգնատիոսն, ամենայն հաւանականութեամբ, տուեալ դէպքում «պախարակելի» ասելով հասկանում է այն բաները, որոնք ինքնըստինքեան թոյլատրելի են, բայց կարող են «գայթակղութեան» առիթ հանդիսանալ տակաւին տկար հաւատք ունեցողների համար, ուստի հարկաւոր է զգուշանալ այդ բաներից յանուն եղբայրասիրութեան: Հմմտ. 1Կր 8, 7-13.

տոսին, եւ նմանապէս նաեւ Եպիսկոպոսին, որը Հօր պատկերն է, եւ քահանաներին, ինչպէս Աստ-ծոյ ժողովին ու Առաքեալների դասին: Առանց նրանց չկայ Եկեղեցի:

2. Վստահ եմ, որ այս հարցի վերաբերեալ դուք էլ միեւնոյն զգացումներն ունէք: Արդարեւ, յանձինս ձեր Եպիսկոպոսի ընդունեցի եւ դեռ իմ մօտ ունեմ ձեր սիրոյ օրինակը. նրա վարուելա-կերպն իսկ մեծ ուսուցում է, իսկ նրա հեղութիւ-նը՝ ուժ: Կարծում եմ, որ անաստուածները<sup>1</sup> նոյն-պէս յարգում են նրան:

3. Քանի որ սիրում եմ ձեզ, խնայում եմ ձեզ, թէեւ այս հարցի շուրջ առաւել խիստ խօսքեր կա-րող էի գրել<sup>2</sup>: Եւ սակայն, ես մի դատապարտեալ լինելով, չեմ կարծում, թէ Առաքեալի նման կա-րող եմ ձեզ հրահանգներ տալ այս հարցի շուրջ:

---

<sup>1</sup> «Անաստուած» եզրով Իգնատիոսը հասկանում է բոլոր հե-թանոսներին ու հերետիկոսներին:

<sup>2</sup> Ամբողջովին հասկանալի չէ Իգնատիոսի միտքը: Ակնար-կում է ինչ որ մի բանի, որը կարող էր աւելի խիստ խօսքեր գրելու հիմք հանդիսանալ, բայց չի աւելացնում, թէ խօսքն ինչի մասին է: Ընդհանուր համատեքստից կարող ենք մի-այն ենթադրել, որ խօսքը թերեւս վերաբերում է Թրալլիսի Եկեղեցում գրանցուած եւ որոշակի տարածում գտած ան-հնազանդութեան կամ կանոնազանցութեան ինչ որ մի դէպ-քի, որի մասին այդ ժամանակ գիտէին բոլորը, բայց տեղե-կութիւններ չեն պահպանուել մինչեւ մեզ հասած վաւերա-գրերում:

Ովքեր ինձ գովում եմ, մտրակում եմ (Գ-Ե)

Գ. – 1. Շատ բաներ եմ հասկանում Աստծոյ մէջ<sup>1</sup>, բայց ինքս ինձ չափաւորում եմ, որպէսզի պարծենալով չկորչեմ: Այժմ, իրօք, պէտք է է՛լ աւելի զգոյշ լինեմ եւ ուշադրութիւն չդարձնեմ նրանց, ովքեր հպարտանալու առիթներ են ինձ տալիս: Արդարեւ, ովքեր ինձ գովում են, մտրակում են:

2. Այո՛, տառապել ուզում եմ, բայց չգիտեմ, թէ արդեօք արժանի՞ եմ<sup>2</sup>: Եռանդս յայտնի չէ շատերին, բայց է՛լ աւելի է ինձ տանջում: Ուստի կարիքն ունեմ հեղութեան, որով է լիովին պարտութեան մատնւում այս աշխարհի իշխանը:

Ե. – 1. Մի՞թէ չէի կարող գրել ձեզ երկնային իրականութիւնների մասին: Բայց քանի որ տակաւին դեռահաս էք, վախենում եմ վնաս հասցնել

---

<sup>1</sup> Բնագրի ձայներանգն այնպիսին է, որ ակնյայտ կերպով հասկացւում է, որ «Աստծոյ մէջ» ասելով Իգնատիոսը չի հասկանում միայն Աստծուն կամ աստուածայինին վերաբերուող իրողութիւնները, այլ ամէն բան, նաեւ մարդկայինն ու նիւթականը, որոնք սակայն տեսնում է Աստծոյ լոյսի մէջ, այնպէս ինչպէս դրանք տեսնում է Աստուած Ինքը:

<sup>2</sup> Հաւատքը գլխիվայր փոխում է արժէքների համակարգը: Սուրբ Մարտիրոսի համար տառապանքն ու մահը ո՛չ միայն դատապարտութիւն չեն, այլ ընդհակառակն՝ Աստծոյ պարգեւն ու մրցանակն են: Իգնատիոսն իրեն անարժան է համարում այդքա՛ն պատուի:

ձեզ<sup>1</sup>: Եւ, – ներողամիտ եղէք, – չկարողանալով կրել դրանց կշիռը, թերեւս դուք շնչահեղձ լինէք<sup>2</sup>:

2. Ես ինքս էլ, որ շղթայուած եմ եւ կարողանում եմ ըմբռնել երկնային իրականութիւնները, հրեշտակային նուիրապետութիւնը, իշխանութիւնների դասերը, տեսանելի ու անտեսանելի իրականութիւնները, սա դեռ չի նշանակում, թէ արդէն աշակերտ եմ: Դեռ շա՛տ բաներ են մեզ պակասում, որպէսզի մենք Աստծոյ պակասը չկրենք:

#### Հերետիկոսութեան թունաւոր խոտը

Ձ. – 1. Ուստի յորդորում եմ ձեզ, – ո՛չ թէ ես, այլ Յիսուս Քրիստոսի սէրը. քրիստոնէական կերակուրով միայն սնուեցէք եւ հեռու մնացէք այն օտար խոտից, որ հերետիկոսութիւնն է:

2. Արդարեւ, կան ոմանք, ովքեր Յիսուս Քրիստոսին խառնում են իրենց<sup>3</sup>, որպէսզի հա-

<sup>1</sup> Հմմտ. 1 Կր 3, 1-2.

<sup>2</sup> Իր զրուցակիցների հոգեւոր դեռահասութիւնն ի նկատի ունենալով, Իգնատիոսը հետեւում է Պողոս Առաքեալին եւ նրանց չի դիմում «խօսքերի վեհութեամբ» (Հմմտ. 1 Կր 2, 1), նախընտրելով կեանքի անմիջական օրինակը:

<sup>3</sup> Ուշադրութեան արժանի է փաստը, որ Իգնատիոսի համաձայն հերետիկոսը ո՛չ թէ իրեն խառնում է Քրիստոսին, այլ Քրիստոսին իրեն, այսինքն՝ ո՛չ թէ ուսուցանում է միեւնոյն

Լատքի արժանի թուան: Այդպէս վարուելով նըմանում են նրանց, ովքեր մահաբեր թոյն են տալիս՝ գինուն եւ մեղրին խառնած: Ով չի անդրադառնում դրան, հաճոյքով – աղէտաբեր հաճոյքով – խմում է մահը:

Խոնարհութիւն եւ համախոհութիւն

Է. – 1. Ուրեմն զգոյշ եղէք այդպիսիներից: Դա հնարաւոր կը լինի, եթէ հպարտութեամբ չըփքուէք եւ եթէ միացած մնաք Յիսուս Քրիստոս Աստծուն, Եպիսկոպոսին եւ Առաքեալների կողմից սահմանուած պատուիրաններին:

2. Ով սրբարանի ներսում է, մաքուր է. ով, մինչդեռ, դրսում է, մաքուր չէ: Այսինքն, ով ինչ որ մի բան է կատարում առանց Եպիսկոպոսի, քահանայից դասի ու սարկաւազների, այդպիսին խղճով մաքուր չէ:

Հեզութիւն, հաւատք եւ սէր

Ը. – 1. Սա չեմ գրում, որովհետեւ իմացել եմ, թէ ձեր մէջ նման բաներ են պատահում: Ուզում

---

քրիստոնէական հաւատքը, պարզապէս ինչ-ինչ սխալներով, այլ՝ ուսուցանում է մի բան, որն ամբողջովին իրենն է, պարզապէս հրամցնում է Քրիստոսի անուան ներքոյ, որպէսզի հաւատալի թուայ:



եմ, սակայն, կանխաւ զգուշացնել ձեզ, քանի որ իմ համար թանկագին անձինք էք եւ ես կանխաւ տեսնում եմ սատանայի նիւթած դաւերը<sup>1</sup>: Դուք, հետեւաբար, զգեստաւորուեցէք հոգու հեզութեամբ եւ վերածնուեցէք հաւատքի մէջ, որ Տիրոջ մարմինն է, եւ սիրոյ մէջ, որ Յիսուս Քրիստոսի արիւնն է<sup>2</sup>:

2. Ձեզնից ոչ ոք թող թշնամանք չսնուցի իր մերձաւորի դէմ: Հեթանոսներին առիթ մի՛ տուէք անարգելու Քրիստոսի մէջ ապրող բազմութիւնը սակաւաթիւ անմիտների պատճառով: «Վա՛յ նըրան, ում անմտութեան պատճառով իմ անունն արհամարհանքի առարկայ է դառնում ոմանց համար»<sup>3</sup>:

Հաւատքի դասանութիւն ընդդէմ Դոկետիստների (Թ-Ժ)

Թ. – 1. Փակէք, ուստի, ձեր ականջները, երբ ինչ որ մէկը Յիսուս Քրիստոսի մասին ձեզ խօսում

<sup>1</sup> Հմմտ. Եփս 6, 11.

<sup>2</sup> Իգնատիոսն ակնարկում է մի պատկերաւոր գաղափարի, որը բաւականին տարածուած էր առաջին քրիստոնեաների մօտ, յատկապէս Արեւելքում: Կղեմէս Աղեքսանդրացին բացատրում է, որ հաւատացեալների մօտ հաւատքն ու սէրը այն նոյն դերն են կատարում, ինչը որ Յիսուս Քրիստոսի մօտ կատարում էին մարմինն ու արիւնը. հաւատքը (մարմինը) որպէս միաւորող տարր, իսկ սէրը (արիւնը) որպէս կենարար տարր, որ տարածւում է ամբողջ էութեամբ մէկ:

<sup>3</sup> Հմմտ. Ես 52, 5.

է առանց ասելու, որ Դաւթի սերնդից էր<sup>1</sup>, Մարիամի որդին, որ իսկապէս<sup>2</sup> ծնունց, կերաւ եւ խմեց. իսկապէս հալածուեց Պոնտացի Պիղատոսի օրոք. իսկապէս խաչուեց ու մահացաւ երկնաբնակաների, երկրաբնակաների ու սանդարամետականների աչքի առաջ:

2. Նա իսկապէս յարութիւն առաւ մեռելներին, որովհետեւ Նրա Հայրը Նրան յարութիւն տրւեց: Նոյն կերպ Հայրը Յիսուս Քրիստոսի մէջ յարութիւն կը տայ նաեւ մեզ, որ հաւատում ենք Նրան: Առանց Նրա մենք չունենք ճշմարիտ կեանքը:

Ժ. Եթէ ճշմարիտ լինէր այն, ինչ ասում են որոշ անաստուածներ, այսինքն՝ անհաւատներ, թէ իբր նա թուացեալ կերպով տառապեց, – մինչ հէնց իրենք են թուացեալ գոյութիւններ<sup>3</sup>, – ու-

<sup>1</sup> Հմմտ. Յվհ 7, 42; Հռմ 1, 3; 2Տմ 2, 8.

<sup>2</sup> Ակուում է առաւել ակնյայտ կերպով ջատագովական մի հատուած ընդդէմ հերետիկոսների: Դոկետներին, որոնք ուսուցանում էին, թէ Յիսուս Քրիստոսը չունեցաւ մարդկային իրական, այլ սոսկ երեւութական մարմին, Իգնատիոսն ընդդիմանում է Մարդեղութեան իրականութեան հանդէպ իր հաւատքով, պնդելով «իսկապէս» մակբայի գործածման վերայ: Երկու դար անց, Աթանաս Աղեքսանդրացին գրում է. «Աստծոյ Խօսքը մարմին առաւ, մեր մարմնին հաւասար մարմին, քանի որ նա չկամեցաւ պարզապէս բնակուել մի մարմնում կամ սոսկ թուալ մարդ» (Ճառ Խօսքի մարդեղութեան մասին, Ը):

<sup>3</sup> Հետաքրքրական է Իգնատիոսի միտքը. քանի որ միմիայն Քրիստոսն է այն հաստատուն վէմը, որի վրայ արժէ կերտել

րեմն ինչի՞ համար եմ ես շղթաներ կրում, ինչի՞ համար եմ նաեւ փափաքում կռուել գազանների դէմ: Ի գո՞ւր եմ ես, ուրեմն, մահուան մատնում անձս: Կե՞ղծ է, ուրեմն, Տիրոջ մասին իմ աւետիսը<sup>1</sup>:

Աստուած մեզ պատուիրել է միութիւնը

ԺԱ. – 1. Ուստի հեռու մնացէք այդ չար ծիւերից, որոնք մահուան պտուղ են ծնում: Ով դըրանցից ճաշակում է, իսկոյն մահանում է: Արդարեւ, դրանք Հօր տնկարանից չեն<sup>2</sup>:

2. Եթէ Հօր տնկիները լինէին, Խաչի ճիւղերի կերպարանքը կ'ունենային եւ իրենց պտուղն անապական կը լինէր: Խաչի վրայից, Իր չարչարանքների միջից, Տէրը կանչում է ձեզ դէպի Ինքը. ձեզ, որ Իր անդամներն էք<sup>3</sup>: Իրօք, գլուխը չի կարող ծնուել առանց անդամների<sup>4</sup>. որովհետեւ

---

սեփական գոյութիւնը (Հմմտ. Մտթ 7, 24-25), հերետիկոսները անձինք են, որոնց գոյութիւնը գուրկ է իսկութիւնից, թուացեալ գոյութիւններ են, ուրուականներ:

<sup>1</sup> Իգնատիոսի խօսքերն ակնյայտօրէն արձագանքում են Պօղոս Առաքեալի մտքին, երբ նա կորնթացիներին գրում էր Քրիստոսի յարութեան մասին: Հմմտ. 1 Կր 15, 12-15.

<sup>2</sup> Հմմտ. Մտթ 15, 13; Յվհ 15, 1; 1 Կր 3, 9.

<sup>3</sup> Հաւատքի ճշմարիտ լինելու ապացոյցը Քրիստոսի Խաչին մասնակցելն է: Յիսուսի Խաչին հաղորդուելով է, որ խօսքը հաստատուում է եւ այդ խօսքի շուրջը ձեւաւորուած հասարակութիւնը դառնում է ճշմարտացի:

<sup>4</sup> Հմմտ. Եփս 4, 15-16.

Աստուած մեզ պատուիրել է միութիւնը, եւ այդ միութիւնը հէնց ինքն է:

Ձեզ յորդորում են իմ կապանքները

ԺԲ. – 1. Ողջունում եմ ձեզ Զմիւռնիայից, Աստծոյ Եկեղեցիների հետ միասին<sup>1</sup>, որ այստեղ ներկայ են եւ որ սփոփեցին ինձ ամէն կերպ, մարմնապէս եւ հոգեպէս:

2. Ձեզ յորդորում են իմ կապանքները, որոնք ես կրում եմ Յիսուս Քրիստոսի պատճառով, մինչ աղօթում եմ հասնելու Աստծուն. յարատեւեցէք ձեր համերաշխութեան եւ փոխադարձ աղօթքի մէջ: Պատշաճ է, որ ձեզնից իւրաքանչիւր ոք – եւ յատկապէս քահանաները – սփոփի Եպիսկոպոսին, ի պատիւ Հօր, Յիսուս Քրիստոսի եւ Առաքեալների:

3. Մաղթում եմ ձեզ, որ լսէք ինձ եւ սիրով կատարէք, որպէսզի ես, քանի որ գրեցի ձեզ, վըրկայութիւն չգառնամ ձեր դէմ: Եւ աղօթեցէք նաեւ իմ համար, որովհետեւ ձեր սիրոյ կարիքն ունեմ Աստծոյ ողորմութեան մէջ. որպէսզի ես արժանի համարուեմ այն ժառանգութեանը, որին հասնելուն շատ մօտ եմ, եւ խոտան չգտնուեմ:

---

<sup>1</sup> Ի նկատի ունի իրեն այցելութեան եկած եփեսոսցի ու մազնեցիացի պատուիրակներին:

## Յորդորներ եւ հրաժեշտի ողջոյններ

ԺԳ. – 1. *Ձեզ ողջունում է Զմիւռնիայի եւ Եփեսոսի եղբայրների սէրը: Ձեր աղօթքներում յիշեցէք Ասորիքի Եկեղեցին, որի անունը կրելու արժանի չեմ, քանի որ նրա անդամներից վերջինն եմ:*

2. *Անյողդողդ եղէք Յիսուս Քրիստոսի մէջ: Հնազանդ եղէք Եպիսկոպոսին ինչպէս Աստծոյ պատուիրանին: Հնազանդ եղէք նաեւ քահանայից դասին: Եւ բոլորդ սիրեցէք միմեանց անբաժան սրտով:*

3. *Հոգիս որպէս զոհ է ընծայւում ձեր համար, ո՛չ միայն այժմ, այլ նաեւ երբ կը հասնեմ Աստծուն: Դեռ վտանգի մէջ եմ<sup>1</sup>, բայց Հայրը հաւատարիմ է եւ Յիսուս Քրիստոսի մէջ կը կատարի իմ եւ ձեր խնդրանքը: Թող որ դուք կարող լինէք անբիծ գտնուել Նրանում:*

---

<sup>1</sup> Իգնատիոսի կողմից Հռոմի քրիստոնեաներին ուղղուած նամակը որպէս հիմք ունենալով կարող ենք ենթադրել, որ «վտանգ» ասելով Սուրբ Մարտիրոսը հասկանում է այն հնարաւորութիւնը, որ մայրաքաղաքի ազդեցիկ քրիստոնեաների միջնորդութեամբ նա կարող էր ազատ արձակուել եւ հետեւաբար չիրականացնել իր Տիրոջը շուտով հասնելու իր բուն փափաքը: Բայց «Աստուած հաւատարիմ է» (1Կր 1, 9; 2Թղ 3, 3) եւ կը կատարի Իր հաւատարիմ ծառայի իղձը:

## ՀՌՈՄԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՆ

*Սա անկասկած Իգնատիոսի ամենայայտնի նամակն է: Եւ թերեւս ամենայայտնի նամակն է ե՛ւ քրիստոնէական, ե՛ւ ոչ-քրիստոնէական ամբողջ Հին նամակագրութեան:*

*Իգնատիոսը, մարտիրոսութեան համար դէպի Հռոմ ուղղուած իր ճամփորդութեան ժամանակ, հասել է Զմիւռնիա: Այստեղ նրան տեղեկացնում են, որ Հռոմում բնակուող ազդեցիկ քրիստոնեաներից ումանք պատրաստում են դիմել կայսրին եւ խնդրել ազատ արձակել նրան: Իգնատիոսի համար դա մի մեծ «վտանգ» է, ուստի շտապում է նամակ գրել եւ աղերսել այդ անձանց, որպէսզի ետ կանգնեն իրենց այդ նպատակից եւ թողնեն, որ կատարուի այն, ինչ Աստուած պատրաստում է Իր աշակերտի համար:*

*Ահա այսպէս ծնունդ է առնում մի նամակ, որի մասին կարող ենք ամենայն վստահութեամբ ասել, որ աւելի աստուածային է, քան թէ մարդկային, այնքան որ յազեցած է խորհրդագրագրական քնարերգութեամբ եւ առ Աստուած ձգտող անգոսպելի սլացքով: Նամակում բացակայում են վարդապետական կամ ջատագովական մտահոգութիւնները, յորդորները կամ իւրայատուկ միջամտութիւնները: Նամակի միակ հետաքրքրութիւնը Աստուած Ինքն է, Նրա հետ միութիւնը, բաղձանքը՝ հասնել տեսնելու Նրա Դէմքը եւ վայելելու Նրա երանացուցիչ ներկայութիւնը: Եթէ դրա ճանապարհը մարտիրոսութիւնն է, եթէ դրա իրագործման պայմանը գազանների ժանիքների տակ փշրուելն է, ուրեմն Իգնատիոսի համար չկայ առաւել*

գեղեցիկ մի բան, չկայ առաւել բաղձալի իրականութիւն: Իգնատիոսի այս նամակն, արդարեւ, աւելի աղօթք է, քան գրութիւն:

## Ողջոյն

Իգնատիոսը, որին անուանում են նաեւ Աստուածակիր, Յիսուս Քրիստոսի՝ Հօր Որդու Անուամբ ողջունում է եկեղեցուն, որը ողորմութիւն ստացաւ բարձրեալ Հօր եւ Յիսուս Քրիստոսի՝ Իր Միածին Որդու սքանչելի զօրութեամբ.

– եկեղեցուն, որ սիրուել եւ լուսաւորուել է կամքով Նրա, ով կամեցել է այն ամէնն, ինչ գոյութիւն ունի, Յիսուս Քրիստոսի՝ մեր Աստծոյ հաւատքի եւ սիրոյ համաձայն.

– եկեղեցուն, որ գահերէց է Հռոմէացիների երկրում.

– եկեղեցուն, որ արժանի է Աստծուն, իրաւամբ գովաբանուած է, արժանաւորապէս՝ երանելի կոչուած, արժանի՝ փառաբանուելու եւ հասնելու իր բոլոր նպատակների կատարմանը. արժանի՝ մաքրութեան.

– եկեղեցուն, որ նախագահում է սիրոյն.

– եկեղեցուն, որ հիմնուած է Քրիստոսի օրէնքի վրայ եւ զարգարուած է Հօր Անունով:

Նրա հաւատացեալներին, որոնք մարմնապէս եւ հոգեպէս միացած են Տիրոջ պատուիրաններից իւրաքանչիւրին, Աստծոյ շնորհով լի են ա-

*ուանց բաժանումների եւ մաքուր են օտար որեւէ բծից, մաղթում եմ մեծագոյն եւ ջինջ բերկրանք Յիսուս Քրիստոսի՝ մեր Աստծոյ մէջ:*

Յուսով եմ գալ ձեզ անձամբ ողջունելու

Ա. – 1. *Աղօթեցի Աստծուն եւ ինձ տրուեց տեսնել ձեր սուրբ դէմքերը: Մանաւանդ թէ, ստացայ աւելին, քան որքան խնդրում էի: Այժմ, որ շղթայուած եմ Յիսուս Քրիստոսի համար, յուսով եմ դալ ձեզ անձամբ ողջունելու, եթէ Աստծոյ կամքն է, որ ես արժանի համարուեմ հասնելու նպատակին:*

2. *Սկիզբն, արդարեւ, նպաստաւոր է, բայց արդեօք կ'ունենա՞մ առանց խոչընդոտների ժառանգութեանս հասնելու շնորհը<sup>1</sup>: Որովհետեւ վախն ունեմ, որ ձեր սէրը կը վնասի ինձ: Ձեր համար դիւրին է անել այն, ինչ կամենում էք. իմ համար, մինչդեռ, դժուարին է հասնել Աստծուն, եթէ դուք իմ նկատմամբ կարեկցանք դրսեւորէք:*

---

<sup>1</sup> *Սկիզբ է առնում այն, ինչը լինելու է ամբողջ նամակի առանցքային նիւթը. մի կողմից մարտիրոսութեան բուռն փափաքը որպէս «նպատակին հասնելու», «ժառանգութեանը հասնելու», Աստծուն միանալու միջոց. միւս կողմից, մինչդեռ, մարդկային միջամտութիւնների վախը, որոնք կարող են անէացնել իր բոլոր երազանքները:*



## Աստծոյ խօսք կը դառնաս

Բ. – 1. Ուզում եմ, որ հաճոյ լինէք ո՛չ թէ մարդկանց, այլ՝ Աստծուն, ինչպէս արդէն իսկ հաճոյ էք Նրան: Ես նման առիթ այլեւս չեմ ունենայ՝ հասնելու Աստծուն, իսկ դուք – եթէ լուէք – չէք կարողանայ մի աւելի լաւ գործի կապել ձեր անունը: Եթէ չմիջամտէք ինձ պաշտպանելու, Աստծոյ խօսք կը դառնամ: Իսկ եթէ ձեր սրտին մօտիկ ընդունէք իմ մարդկային վիճակը, կը շարունակեմ տակաւին մի պարզ հնչիւն լինել՝:

2. Իմ համար ուրիշ ոչինչ մի՛ հայթայթեցէք, քան միայն այն, որ որպէս ողջակէզ ընծայուեմ Աստծուն, քանի որ խորանը դեռ պատրաստ է: Որպէսզի դուք, սիրոյ մէջ միայն մէկ երգչախումբ դարձած, կարողանաք Յիսուս Քրիստոսի մէջ երգեր մատուցել Հօրը, որովհետեւ Աստուած Ասորիքի Եպիսկոպոսին արժանի դարձրեց Իր ընտրութեանը, բերելով նրան Արեւելքից Արեւմուտք: Իմ համար գեղեցիկ բան է մայր մտնել աշխարհից դէպի Աստուած, Նրանում յարութիւն առնելու համար<sup>2</sup>:

<sup>1</sup> Արտակարգ գեղեցկութեան պատկեր է: Գերագոյն վկայութեամբ, սեփական կեանքի նուիրմամբ եւ Տիրոջ հետ վերջնական միութեամբ քրիստոնէան դառնում է «Աստծոյ խօսք»: Ո՛չ այլեւս մի պարզ հնչիւն, տկար, անորոշ, թերեւ ըս նաեւ անարդիւնաւէտ, այլ կեանքի ու շնորհի անսասան խօսք, ինչպիսին որ է Աստծոյ խօսքի գորութիւնը: Արժեքաւոր ուսուցում է քարոզիչներին համար:

<sup>2</sup> Ինչպէս արեւն է ծագում Արեւելքում եւ մայր մտնում Արեւմուտքում, որպէսզի սակաւաթիւ ժամեր անց կրկին

Հաստատարիմ քրիստոնեայ կը լինեմ, երբ այլեւս տեսանելի չեմ լինի աշխարհին

Գ. – 1. Դուք երբեք չարիք չէք կամեցել ոչ ոքի, մանաւանդ թէ՛ ուսուցանել էք ուրիշներին: Ես կամենում եմ, որ տակաւին վաւերական մնայ այն ամէնն, ինչ ուսուցանում էք ու յանձնարարում:

2. Իմ համար ներքին ու արտաքին ուժը խնդրեցէք միայն, որպէսզի ո՛չ միայն խօսեմ, այլ նաեւ վճռակամ լինեմ. ո՛չ միայն քրիստոնեայ կոչուեմ, այլ նաեւ իսկապէս քրիստոնեայ լինեմ: Եթէ քրիստոնեայ լինեմ, կը կարողանամ նաեւ քրիստոնեայ անունը կրել: Իսկ հաւատարիմ քրիստոնեայ կը լինեմ, երբ այլեւս տեսանելի չեմ լինի աշխարհին:

3. Ձկայ տեսանելի մի բան, որ բարի լինի ու գեղեցիկ<sup>1</sup>: Մեր Աստուած Յիսուս Քրիստոսն ա-

---

փայլի իր ողջ պայծառութեամբ, նոյն կերպ նաեւ Իգնատիոսը: Արեւելքում ծնունդ, գալիս է Արեւմուտքում մահանալու: Բայց նա յարութիւն է առնելու Աստուծոյ մէջ, անհամեմատելիօրէն աւելի պայծառ ու լուսաւոր:

<sup>1</sup> Հարկաւոր է ճիշտ հասկանալ Իգնատիոսի միտքը: Տեսանելի արարչութիւնն իր մէջ հայելացնում է Արարիչ Աստուծոյ գերագոյն Բարութեան ու Գեղեցկութեան պատկերը, բայց սկզբնական մեղքի պատճառով այդ պատկերն աղաւաղուել է: Ինչպէս նաեւ, Իգնատիոսն ասում է, որ իրական բարութիւնն ու գեղեցկութիւնը արտաքին տեսանելի կերպարանքի մէջ չեն, եւ տեսքը երբեմն կարող է թաքցնել դրանք:

ուսուցիչ յայտնի է այժմ, երբ Հօր մօտ է<sup>1</sup>: Քրիստոնէութիւնը, երբ աշխարհի կողմից ատուում է, համոզելու գործ չէ, այլ՝ մեծութեան<sup>2</sup>:

Աստուծոյ ցորենն էմ

Գ. – 1. Գրում եմ բոլոր Եկեղեցիներին եւ Հրապարակաւ յայտարարում եմ բոլորին, որ ես յօժարութեամբ եմ մահանում Աստուծոյ համար, եթէ դուք չխոչընդոտէք ինձ դա: Աղաչում եմ ձեզ, իմ համար մի՛ դարձէք անպատեհ բարեացակամութիւն: Թողէք, որ գազանների կերակուր լինեմ, որոնց միջոցով ինձ հնարաւոր է հասնել Աստ-

---

<sup>1</sup> Մարդու փրկագործութիւնն իր կատարելութեանը հասնում է այն ժամանակ, երբ Յիսուս Քրիստոսը բազմում է Հօր աջ կողմում: «Հօր մօտ» առաւել յայտնի է դառնում Նրա իրականութիւնը, Նրա իսկութիւնը որպէս Որդի: Եւ այդպէս նաեւ ամէն մի մարդ. իր իսկութիւնը գտնում է «Հօր մօտ»: Եւ ամբողջ տեսանկիւ արարչութիւնը նոյնպէս, որ կորցրել է իր սկզբնական բարութիւնն ու գեղեցկութիւնը, հեծեծում է ու տառապում, եւ անհամբեր սպասում է Աստուծոյ որդիների այդ կատարեալ յայտնութեանը (Հմմտ. Հռմ 8, 19-22):

<sup>2</sup> Իգնատիոսը կարողացել է վեհ ու վսեմ մտքեր խտացնել սակաւաթիւ տողերում: Քրիստոնէութիւնը համոզելու հարց չէ, ասում է, այլ՝ վկայութեան: Եթէ քրիստոնեայ անունն ենք սոսկ կրում, աշխարհն իրաւամբ ատում է մեզ: Տրուելիք միակ պատասխանը, Իգնատիոսի համաձայն, քրիստոնէական մեծութիւնն է. «Ով կամենում է ձեր մէջ մեծ լինել, թող ձեր ծառան լինի» (Մրկ 10, 43): Ուսուցանում է սիրոյ մեծութիւնը:

ծուն: Աստծոյ ցորենն եմ եւ պէտք է գազանների ատամների տակ աղացուեմ, որպէսզի Քրիստոսի անարատ հացը դառնամ:

2. Աւելի հէնց գազաններին համոզեցէք, որ իմ գերեզմանը դառնան եւ մարմնիցս ոչինչ չըթողնեն, որպէսզի վերջին հանգստիս մէջ բեռ չլինեմ ոչ ոքի համար<sup>1</sup>: Յայնժամ, երբ աշխարհը մարմինս անգամ չի տեսնի, իսկապէս աշակերտ կը լինեմ Յիսուս Քրիստոսին<sup>2</sup>: Աղաչեցէք Քրիստոսին իմ համար, որպէսզի այս գործիքների միջոցով ես գոհաբերութիւն դառնամ Աստծոյ համար:

3. Ձեզ հրահանգներ չեմ տալիս Պետրոսի ու Պողոսի նման. նրանք Առաքեալներ էին, իսկ ես՝ դատապարտեալ. նրանք ազատներ էին, մինչ ես՝ տակաւին ստրուկ: Բայց եթէ մարտիրոսութիւնը կրեմ, Յիսուս Քրիստոսի ազատագիրը կը լինեմ եւ նրա մէջ յարութիւն կ'առնեմ որպէս ազատ<sup>3</sup>:

<sup>1</sup> Հմմտ. 2Կր 12, 14; 1Թղ 2, 9; 2Թղ 3, 8.

<sup>2</sup> Իգնատիոսի միտքը մեծապէս տպաւորիչ է: Սուրբ Մարտիրոսը կարծես ուզում է ասել, որ Յիսուս Քրիստոսին աշակերտ լինելը սոսկ մտային իրականութիւն չէ, գաղափարների մի համակարգի ընդունում եւ վերջ: Յիսուս Քրիստոսի աշակերտ, հետեւորդ լինելը սրտի հարց է, սիրեցեալի հետ անբաժանելի միութեան հարց: Ուստի, այստեղ երկրի վրայ այդ հետեւորդութիւնը սիրոյ հառաչանք է, կարօտ, եւ իր լիակատար իսկութեանը հասնելու է միայն մահից յետոյ, երբ աշխարհն իր մարմինն անգամ չի տեսնի:

<sup>3</sup> Հին Հռոմէական օրէնսդրութեան համաձայն, ազատագիրը նա էր, ով ստրկութեան վիճակից իր տիրոջ տնօրինմամբ

Այժմ, շղթայակիր վիճակում, սովորում եմ չունենալ ոչ մի ցանկութիւն:

Միայն թէ ես հասնեմ վայելելու Յիսուս Քրիստոսին

Ե. – 1. Ասորիքից մինչեւ Հռոմ, ցամաքում ու ծովում, օր ու գիշեր ես կռում եմ դազանների դէմ, տասը ընձառիւծների, այսինքն՝ զինուորների մի դասակի կապուած, որոնց հանդէպ որքան աւելի ես բարիք գործում, նրանք այնքան աւելի են չարանում: Նրանց կողմից ինձ հասցրւած խոշտանգումների շնորհիւ է՛լ աւելի եմ աշակերտ դառնում, «բայց սրանով չեմ արդարանում»<sup>1</sup>:

---

անցել էր ազատութեան վիճակի: Բայց ազատագրի եւ իր նախկին տիրոջ միջեւ շարունակում էին գոյութիւն ունենալ սերտ կապեր. մի կողմից՝ յարգանքի, միւսից՝ պաշտպանութեան: Իգնատիոսն այս պատկերին է դիմում, – նաեւ ոճաբանական բառախաղով գործածելով «eleútheros» (ազատ) եւ «apeleútheros» (ազատագիր) եզրերը, – ասելու համար, որ մարտիրոսութիւնն իրեն կ'ազատի մարդկային կապերից եւ իրեն Յիսուս Քրիստոսի ազատագիրը կը դարձնի, իր եւ Տիրոջ միջեւ հաստատելով է՛լ առաւել սերտ ու որդիական յարաբերութիւններ: Սպասելով, անշուշտ, յարութեանը, երբ լիովին ազատ կը դառնայ Աստծոյ մէջ:

<sup>1</sup> 1Կր 4, 4. Իգնատիոսի այս հատուածից տեղեկանում ենք, որ պահակախմբի զինուորների կողմից իրականացուած հսկողութիւնը խիստ նկարագիր է ունեցել, մինչեւ իսկ անհանդուրժողութեան հասնելով: Կարող ենք ուստի պատկե-

2. Թող որ ես կարողանամ վայելել գազաններին, որ պատրաստուել են իմ համար: Մաղթում եմ, որ իրենց գործն արագ անեն: Ես ինքս կը թախանձեմ նրանց, որ իսկոյն յօշոտեն ինձ, որպէսզի չպատահի այնպէս՝ ինչպէս վարուեցին ոմանց հետ, երբ, երկնչելով, չմօտեցան նրանց: Իսկ եթէ ցանկութիւն չունենալով երկմտեն, ես ինքս նըրանց կը ստիպեմ:

3. Հասկացէք ինձ. ես գիտեմ, թէ ի՛նչն է իմ համար լաւագոյնը: Այժմ սկսում եմ աշակերտ լինել: Թող որ իմ առջեւ ոչ մի խոչընդոտ չգրուի, ո՛չ տեսանելի եւ ո՛չ էլ անտեսանելի, որպէսզի ես հասնեմ Յիսուս Քրիստոսին: Թող որ իմ վրայ թափուեն կրակ, խաչ, գազանների բազմութիւն, յօդերի խախտում, ոսկորների բաժանում, անդամների հատում, ամբողջ մարմնի կտրատում, սատանայի դաժան տանջանքներ. միայն թէ ես հասնեմ վայելելու Յիսուս Քրիստոսին:

Մի՛ խոչընդոտէ՛ք ինձ, որ ծնունւմ կեանքիս

Ձ. – 1. Ինձ ոչ մի օգուտ չեն կարող տալ երկրային վայելքները, ո՛չ էլ՝ այս աշխարհի թագա-

---

րացնել, թէ Սուրբ Մարտիրոսը որքա՛ն դժուարութիւնների է հանդիպել Եկեղեցիների պատուիրակներին ընդունելիս եւ այս նամակները շարադրելիս: Մի հանգամանք, որով այս նամակներն է՛լ աւելի թանկարժէք են դառնում:

Լորութիւնները: Իմ համար շա՛տ աւելի լաւ է մահանալ Յիսուս Քրիստոսի համար<sup>1</sup>, քան թէ թագաւորել ամբողջ աշխարհի վրայ: Նրա՛ն եմ ես փնտրում, ով մեր համար մահացաւ: Նրա՛ն եմ ես փափաքում, ով մեր համար յարութիւն առաւ: Ծննդեանս պահը մօտ է<sup>2</sup>:

2. Ներեցէք ինձ, եղբայրներ: Մի՛ խոչընդոտէք ինձ, որ ծնուեմ կեանքին. մի՛ ցանկացէք իմ մահը: Մի՛ յանձնէք աշխարհին նրան, ով փափաքում է Աստծունը լինել, եւ նրան մի՛ հրապուրէք նիւթով: Թողէք հասնեմ անստուեր լոյսին. այնտեղ հասնելով, իսկապէս մարդ կը լինեմ:

3. Թոյլ տուէք ինձ նմանուել իմ Աստծոյ չարչարանքներին: Եթէ ձեր մէջ կայ մէկը, որ Աստծուն իր մէջ ունի, թող հասկանայ՝ թէ ի՛նչ եմ ես փափաքում եւ հասկանալով իմ բաղձանքը՝ մասնակցի դրան:

---

<sup>1</sup> Հմմտ. 1 Կր 9, 15; Փլպ 1, 23.

<sup>2</sup> Իգնատիոսի համար – այնպէս՝ ինչպէս պէտք է որ լինի իւրաքանչիւր քրիստոնեայի համար – մահուան պահը դառնաւ Աստուած մուտքի պահն է, ճշմարիտ եւ վճռական ծննդեան պահը: Մարտիրոսութիւնն այն գործողութիւնն է, որ նրան «ծննդաբերում է» (այս գաղափարն է արտայայտում բնագրի յունարէն եզրը) յաւիտենական կեանքին, «անըստուեր լոյսին», ինչպէս ասում է անմիջապէս յետոյ: Ամբողջ հատուածը հիասքանչ կերպով արտայայտում է բաղձալի սպասումն այդ պահի, որն իրեն «իսկապէս մարդ» կը դարձնի:

## Մարդկային իդձերս խաչուած են

Է. – 1. Այս աշխարհի իշխանը ցանկանում է որսալ ինձ եւ ապականել ձգտումս, որ ունեմ իմ Աստծոյ հանդէպ: Ներկայ գտնուողներիցդ ոչ ոք թող չօգնի նրան, այլ ընդհակառակը՝ իմ կողմից եղէք, այսինքն՝ Աստծոյ կողմից: Յիսուս Քրիստոսին ձեր շուրթերի վրայ մի՛ ունեցէք, մինչ աշխարհն ունէք ձեր սրտում:

2. Թող ոչ մի հրապոյր չյաղթի ձեզ: Ինձ էլ չպէտք է հնազանդուէք, եթէ ես, երբ ձեր մօտ լինեմ, սկսեմ յանկարծ աղերսել ձեզ<sup>1</sup>: Հնազանդուեցէք մինչդեռ խօսքերին, որոնք այժմ գրում եմ ձեզ: Ձեզ գրում եմ, քանի դեռ ողջ եմ, բայց ուժգին փափաքում եմ մահանալ: Մարդկային իդձերս խաչուած են<sup>2</sup> եւ ինձնում այլեւս չկայ նիւթը

---

<sup>1</sup> Սուրբ Մարտիրոսը գովելի խոնարհութեամբ գիտակցում է իր մարդկային տկարութիւնը: Դէմ առ դէմ մահուան առաջ յայտնուելով, հնարաւոր է, որ թուլակամօրէն ետ ընկերկի: Բայց կանխաւ արդէն պատուիրում է, որ հռոմէացի քրիստոնեաները ուշադրութիւն չդարձնեն այդ անցողիկ տկարութեանը:

<sup>2</sup> Յունարէն բնագիրը գործածում է «ερώ» բայը (սիրել կըրթոտութեամբ, գրեթէ՝ տոփանքով, այսինքն՝ սաստիկ) եւ համապատասխան «eros» գոյականը, որը նախընտրում ենք թարգմանել «իդձ», խուսափելու համար այն երկիմաստութիւնից, որին հանդիպում ենք դեռ հայրախօսական ժամանակներից սկսած. Իգնատիոսի այս «խաչուած սէր» արտայայտութեան մէջ ոմանք ակնարկ են տեսնում խաչուած



սիրող հուրը: Լսում եմ կենդանի ջրի ձայնը, որ խօսում է ներսումս եւ ինձ ասում է. «Ե՛կ Հօր մօտ»<sup>1</sup>:

3. Այլեւս համ չեմ առնում մահկանացու սընունդից, եւ ո՛չ էլ՝ այս կեանքի հաճոյքներից: Ասածոյ հացն եմ ուզում, որ Յիսուս Քրիստոսի մարմինն է, ծնուած՝ Դաւթի սերնդից<sup>2</sup>: Որպէս ըմպելիք ուզում եմ Նրա արիւնը, որ անապական սէրն է:

Եթէ մարտիրոսութիւնը կրեմ, դա կը նշանակի, որ ինձ սիրել էք

Ը. – 1. Այլեւս չեմ կամենում մարդկային հետաքրքրութիւնների համաձայն ապրել: Այդ-

---

Քրիստոսին, բայց համատեքստը, ինչպէս նաեւ գործածուած եզրը («éros») անկասկած բացառում են նման մեկնաբանութեան հնարաւորութիւնը: Իգնատիոսը պարզապէս կամենում է ասել, որ իրեն սպասող մահուան իրականութեան մէջ նա արդէն մուտք է գործել եւ այդ իրականութիւնն արդէն իսկ ապրում է իր մարմնաւոր, հոգեւոր եւ հոգեբանական բոլոր ուժերով. սիրելու իր կարողութիւնը, այսինքն չէնց «éros»ը, արդէն իսկ խաչուած է:

<sup>1</sup> «Կենդանի ջուրը», այսինքն՝ Սուրբ Հոգու ներկայութիւնը (Հմմտ. Յվհ 4, 10; 7, 38; Ջք 14, 8) Իգնատիոսին մաքրել է երկրային փափաքներից եւ այժմ նրան կանչում է Հօր մօտ (Հմմտ. Յվհ 14, 12):

<sup>2</sup> Հմմտ. Յվհ 7, 42; Հռմ 1, 3; 2Տմ 2, 8.

պէս կը կատարուի, եթէ դուք այդպէս կամենաք:  
Այդպէս կամեցէք, որպէսզի դուք էլ Աստուծոց բա-  
րեացակամութիւնն ստանաք:

2. Սակաւաթիւ խօսքերով եմ դա խնդրում  
ձեզնից: Հաւատացէք ինձ: Յիսուս Քրիստոսը կը  
յայտնի ձեզ, որ ես խօսում եմ ճշմարտութեան  
համաձայն: Նա ճշմարտախօս բերանն է, որի մի-  
ջոցով Հայրը խօսեց ճշմարտութեամբ:

3. Աղօթեցէք իմ համար, որպէսզի ես կարո-  
ղանամ հասնել Նրան: Մարդկային նպատակներ  
հետապնդելով չգրեցի ձեզ, այլ՝ Աստուծոյ մտքի  
համաձայն: Եթէ մարտիրոսութիւնը կրեմ, դա կը  
նշանակի, որ ինձ սիրել էք: Եթէ բացառուեմ, կը  
նշանակի, որ ինձ ատել էք<sup>1</sup>:

Աղօթքներ եւ հրաժեշտի ողջոյններ

Թ. – 1. Ձեր աղօթքներում յիշեցէք Ասորիքի  
Եկեղեցին, որն այժմ, իմ փոխարէն, Աստուծոն ու-  
նի որպէս հովիւ: Միմիայն Յիսուս Քրիստոսը կը  
հսկի նրա վրայ որպէս Եպիսկոպոս, եւ ձեր սէրը:

---

<sup>1</sup> Իզնատիոսը եւս մէկ անգամ գլխիվայր փոխում է մարդ-  
կային արժէքները: Սրանք արտայայտութիւններ են, որոնց  
իմաստը հնարաւոր է հասկանալ միմիայն խորը հաւատքի  
ու անմնացորդ նուիրման լոյսի ներքոյ:

2. Ինչ վերաբերում է ինձ, ես ամաչում եմ, որ դասուում եմ այդ Եկեղեցու Հաւատացեալների շարքը: Արժանի չեմ, քանի որ նրանցից ամենավերջինն եմ, մի վիժուածք<sup>1</sup>: Բայց եթէ կարողանամ Հասնել Աստծուն, ողորմութեամբ կը ստանամ լինել ինչ որ մէկը<sup>2</sup>:

3. Ձեզ ողջունում է իմ Հոգին եւ ինձ ընդունած Եկեղեցիների սէրը: Նրանք ինձ ընդունեցին յԱնուն Յիսուս Քրիստոսի<sup>3</sup>, եւ ո՛չ թէ՛ որպէս մի պարզ անցորդ: Նաեւ այն Եկեղեցիները, որոնք իմ անցնելիք ճանապարհին չէին գտնուում, քաղաքից քաղաք ընդառաջ էին գալիս ինձ:

#### Վերջաբան

Ժ. – 1. Այս նամակը ձեզ գրում եմ Զմիւռնիայից, Եփեսացիների միջոցով, որոնք յիրաւի արժանի են կոչուելու երանելի: Իմ Հետ է, ուրիշ շատերի Հետ միասին, նաեւ Կրոկոսը, որն ինձ շա՛տ թանկագին անձ է:

---

<sup>1</sup> Հմմտ. 1 Կր 15, 8-9.

<sup>2</sup> Ներկայ կեանքը Իգնատիոսը (Պօղոս Առաքեալին Հետեւելով) Համեմատում է սաղմի ներարգանդային գոյութեանը. եթէ չենք Հասնում Աստծոյ լոյսին, մեր գոյութեան ամբողջ իմաստը ձախողւում է (վիժում), մինչ Աստծուն Հասնելով ձեռք ենք բերում մի ինքնութիւն (ծնունդ):

<sup>3</sup> Հմմտ. Մտթ 10, 40.

2. Ինչ վերաբերում է նրանց, ովքեր ինձնից առաջ Ասորիքից Հռոմ եկան Աստծոյ փառքի համար, կարծում եմ, որ նրանց արդէն ճանաչում էք: Տեղեկացրէք նրանց, որ շուտով կը հասնեմ: Նըրանք բոլորն էլ արժանի են Աստծուն եւ ձեզ: Լաւ կը լինի, որ ամէն կերպ սփռփէք նրանց<sup>1</sup>:

3. Ձեզ սա գրում եմ Սեպտեմբերի կաղանդից ինն օր առաջ<sup>2</sup>: Անյողդողդ մնացէք մինչեւ վերջ, Յիսուս Քրիստոսի սպասմամբ:

---

<sup>1</sup> Ա՛յլ տեղեկութիւններ չունենք այդ անձանց վերաբերեալ, որոնք Իգնատիոսից առաջ գնացել կամ տարուել էին Հռոմ: Խօսքն ամենայն հաւանականութեամբ վերաբերում է ուրիշ դատապարտեալների, հաշուի առնելով հանգամանքը, որ Իգնատիոսը խնդրում է մխիթարել նրանց:

<sup>2</sup> Այսինքն՝ Օգոստոսի 24ին: Սա Իգնատիոսի ամբողջ նամականու մէջ ներկայ միակ թուականն է: Դրա շնորհիւ Հռոմի քրիստոնէաները կը կարողանային մօտաւորապէս իմանալ, թէ Իգնատիոսը երբ կը հասնէր Հռոմ:

## ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ ՔՐԻՍ- ՏՈՆԵԱՆԵՐԻՆ

Երբ Իգնատիոսը, դեռ Ջմիւռնիա չհասած, ժամանեց Ասիայի կարեւորագոյն քաղաքներից մէկը հանդիսացող Ֆիլադելֆիա, այնտեղ գտաւ քրիստոնէական մի կենսունակ ու ծաղկուն համայնք, որն իրաւամբ արժանի ժառանգն էր նրանց, ում մի քանի տարի առաջ Յովհաննէս Առաքեալը գովաբանել էր այդքա՛ն շուայութեամբ (Յյտ 3, 7-13): Այդուհանդերձ, Սուրբ Մարտիրոսի կեցութիւնն այնտեղ կարծես այնքան էլ հանդարտ չի անցել. նամակում հանդիպող մի քանի արտայայտութիւններ ենթադրելու առիթ են տալիս, որ տեղի են ունեցել բուռն վիճաբանութիւններ, ոմանք փորձել են «խաբել» նրան եւ նա հարկադրուած է եղել «ձայնը բարձրացնել»: Դժուար է ճշգրիտ կերպով մեկնաբանել նման արտայայտութիւնների իմաստը. ամենայն հաւանականութեամբ խօսքը վերաբերւում է որոշ հերետիկոսների, որոնք նենգ (միաժամանակ նաեւ անմիտ) փորձեր են կատարել Իգնատիոսին խօսքերով որսալու համար:

Թերեւս հէնց այդ պատճառով է, որ այս նամակում Իգնատիոսն ամէնից աւելի մտահոգւում է միութեան, Եպիսկոպոսի շուրջը համայնքի բոլոր անդամների հաղորդութեան հարցով: Բաժանումների ահաւոր վտանգից հաւատացեալներին զգուշացնելով, Իգնատիոսը նախեւառաջ յանձնարարում է սրտի դարձը եւ յատկապէս՝ մասնակցութիւնը միակ Հաղորդութեանը, որովհետեւ «մեր Տէր Յիսուս Քրիստոսի միայն մէկ մարմին կայ, միայն մէկ դաւաթ, միայն մէկ խորան, միայն մէկ Եպիսկոպոս» (Դ):

## Ողջոյն

*Իգնատիոսը, որին անուանում են նաեւ Աստուածակիր, Յիսուս Քրիստոսի արեան մէջ<sup>1</sup> ողջունում է Ասիայում գտնուող Ֆիլադելֆիայի եկեղեցուն.*

*– Հայր Աստոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի եկեղեցուն.*

*– եկեղեցուն, որ ստացել է ողորմութիւն եւ անասան է Աստուծոյ բխող միութեան մէջ.*

*– եկեղեցուն, որ անվարան բերկրում է մեր Տիրոջ չարչարանքների մէջ, եւ Նրա յարութեան մէջ լիովին գիտակից է ողորմութեան բոլոր պարգեւներին<sup>2</sup>:*

*Եկեղեցուն, որ իմ մշտնջենաւոր ու անթերի բերկրանքն է, յատկապէս եթէ նրա բոլոր անդամները միութեան մէջ մնան Եպիսկոպոսի հետ, ինչպէս նաեւ՝ քահանաների ու սարկաւազների հետ, որոնք Եպիսկոպոսի հետ են եւ ընտրուել են Յիսուս Քրիստոսի մտքի համաձայն: Նա իր իսկ կամքի համաձայն նրանց հաստատել է զօրութեան մէջ, իր Սուրբ Հոգու միջոցով:*

---

<sup>1</sup> Այսինքն՝ ողջունում եմ ձեզ, որ փրկուել էք Յիսուս Քրիստոսի արեամբ:

<sup>2</sup> Իգնատիոսի խօսքերը վերաբերում են քրիստոնէական հաւատքի հիմքերին: Քրիստոնեայի բերկրանքը ծնւում է նրա անվարան յոյսից, որն էլ իր հերթին հիմնւում է Տիրոջ չարչարանքներից ծնուող արժանիքների վրայ: Իսկ Տիրոջ յարութեանը հայելով, քրիստոնեան գիտակցում է գալիք կեանքում իրեն սպասուող բոլոր պարգեւները, որոնք նա ստացել է Տիրոջ ողորմութեամբ:

## Եպիսկոպոսի գովքը

Ա. – 1. Ինչ վերաբերում է Եպիսկոպոսին<sup>1</sup>, գիտեմ, որ նա ո՛չ ինքն իրենից, ո՛չ էլ մարդկանցից է ստացել Համայնքի ծառայութեան պաշտօնը, որը կատարում է ո՛չ թէ սնափառութեամբ, այլ՝ Հայր Աստծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի սիրոյ մէջ: Տպաւորուած եմ նրա հոգու անդորրով. նա, լռելով, աւելի ուժեղ է, քան նրանք, ովքեր բազմաթիւ անօգուտ ճառեր են խօսում:

2. Նա ներդաշնակութեան մէջ է գտնւում Աստծոյ պատուիրանների հետ, ինչպէս քնարը՝ իր լարերի հետ: Այդ պատճառով էլ հոգիս երանելի է Համարում Աստծոյ Հանդէպ նրա տրամադրուածութիւնը, – տրամադրուածութիւն, որը գիտեմ, որ առաքինի ու կատարեալ է, – եւ հիանում է նրա Հաստատակամութեամբ ու քաղցրաբարոյութեամբ, ինչը որ կենդանի Աստծոյ անսահման բարութեան պարզեւն է:

---

<sup>1</sup> Ամբողջ այս հատուածը վերաբերում է Յիլադելֆիայի Եպիսկոպոսին, շեշտադրումներով, որ անցնում են սովորական գովասանքներից ու երախտիքի խօսքերից անդին: Ակընյայտ է, որ այդ Համայնքում յայտնուել էին նախանձի կամ Հակառակութիւնների ծիլեր, որ վերաբերում էին կա՛մ նորընտիր Եպիսկոպոսի անձին, կա՛մ էլ նրա գործելաոճին: Քանի որ նա գործի չէր գրել ինքնապաշտպանութեան իր իրաւունքը, նախընտրելով լռել, Իգնատիոսը միջամտում է բուն եռանդով, հիացմունքի խօսքեր շուայելով նրա «հոգու անդորրի» եւ պատուիրանների հետ նրա կատարեալ ներդաշնակութեան մասին:

Հեռու մնացէ՛ք բաժանումներից

Բ. – 1. Ճշմարտութեան «լոյսի որդիները»<sup>1</sup> լինելով, հեռու մնացէ՛ք բաժանումներից ու չար ուսմունքներից: Ուր որ հովիւն է, այնտեղ նրան հետեւեցէ՛ք, գառների նման:

2. Իրօք, բազմաթիւ գայլեր, որոնք իբրեւ արժանահաւատ ուսուցիչներ են ներկայանում, վնասակար հաճոյքներով որսում ու ստրկացնում են նրանց, ովքեր ընթանում են Աստուծոյ ճանապարհներով: Սակայն, եթէ դուք միութեան մէջ մնաք, նրանք տեղ չեն գտնի ձեր մէջ:

Ովքեր Աստուծուն են եւ Յիսուս Քրիստոս-  
սինը, նրանք Եպիսկոպոսի հետ են

Գ. – 1. Հեռու մնացէ՛ք չար բոյսերից, որոնց Յիսուս Քրիստոսը չի մշակում, քանի որ դրանք Հօր տնկիւները չեն<sup>2</sup>: Սա չեմ գրում, որովհետեւ ձեր մէջ բաժանումներ եմ նկատել. մանաւանդ թէ, ձեր մէջ կեանքի լիակատար վճիտութիւն եմ տեսել<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Հմմտ. Յվհ 12, 36.

<sup>2</sup> Հմմտ. Մտթ 15, 13; Յվհ 15, 1; 1Կր 3, 9.

<sup>3</sup> Յունարէն բնագրում գործածուող եզրը մատնանշում է գտելու գործողութիւնը, եւ հետեւաբար՝ վճիտութիւնը որ-



2. Ովքեր Աստծուն են եւ Յիսուս Քրիստոսինը, նրանք Եպիսկոպոսի հետ են: Ովքեր դարձի են գալիս եւ մտնում են Եկեղեցու միութեան մէջ, նրանք նոյնպէս Աստծունը կը լինեն, լինելու համար անձինք, որ ապրում են Յիսուս Քրիստոսի համաձայն:

3. Մի՛ խաբուէք, եղբայրներ: Եթէ ինչ որ մէկը հետեւում է նրան, ով բաժանումների պատճառն է, «Աստծոյ արքայութիւնը չի ժառանգելու»<sup>1</sup>: Եթէ ինչ որ մէկն ընթանում է օտար ուսմունքի համաձայն, Քրիստոսի չարչարանքներից մաս եւ բաժին չի ունենալու:

Հաղորդութիւնը միութեան աղբիւր

Դ. Զանացէք, ուստի, մասնակցել միակ Գոհաբանութեանը<sup>2</sup>: Մէկ է մեր Տէր Յիսուս Քրիստոս-

---

պէս արդիւնք, որպէս տեղի ունեցած մաքրագործում: Հաւատքը եւ Աստծուն յարելը իրենց որպէս անհրաժեշտ հետեւանք ունեն յստակ դիրքորոշման ստանձնումը, միանը-շանակ արտայայտուելը, անխուսափելիօրէն «ըստակարգումներ» պատճառելով: Թերեւս սա է Իգնատիոսի ճշգրիտ միտքը, որով եւ բացատրւում են յաջորդ տողերում ներկայ որակաւորումները:

<sup>1</sup> Հմմտ. 1 Կր 6, 9-10.

<sup>2</sup> «Գոհաբանութիւն», «Զոհ», «Պատարագ», «Սուրբ Պատարագ», «Գոհաբանական Պատարագ», «Աստուածային Պաշտամունք», «Պաշտօն». սրանք բոլորն էլ վաւերական ա-

սի մարմինը. մէկ է գաւաթը, Նրա արեան մէջ միացած լինելու համար. մէկ է խորանը, ինչպէս որ մէկ է Եպիսկոպոսը քահանայից դասի եւ սարկաւազների՝ իմ ծառայակիցների հետ: Որպէսզի ինչ էլ որ անելու լինէք, Աստծոյ համաձայն անէք:

Մարգարէները փրկուեցին Յիսուսին հաւատալով

Ե. – 1. Եղբայրներ, հոգիս առատօրէն լի է ձեր հանդէպ սիրով եւ սաստիկ ուրախութեամբ ջանում եմ գօրացնել ձեզ: Իրականում ո՛չ թէ ես, այլ՝ Յիսուս Քրիստոսը: Թէեւ Նրա համար եմ ես շղթայուած, այդուհանդերձ է՛լ աւելի եմ երկիւղ գգում, քանի որ դեռ անկատար եմ: Բայց Աստծուն ուղղուած ձեր աղօթքները կը կատարելագործեն ինձ, որպէսզի կարողանամ հասնել այն ժառանգութեանը, որն ինձ վերապահուել է ողորմութեամբ, ապաստանելով Աւետարանի<sup>1</sup> մէջ, ինչպէս Յիսուսի մարմնի, եւ Առաքեալների մէջ, ինչպէս Եկեղեցու քահանայից դասի:

---

նուններ են մատնանշելու համար ծիսական այն արարողութիւնը, որի ընթացքում կատարուում է Ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդը:

<sup>1</sup> Հայրախօսական գրականութեան մէջ սա առաջին անգամն է, որ հանդիպում է «Euanghélion» (Աւետարան) եզրը:

2. Սիրենք նաեւ Մարգարէներին<sup>1</sup>, որովհետեւ նրանք եւս կանխաւ քարոզեցին Աւետարանը, յուսացին Յիսուսին եւ սպասեցին Նրան: Այդպիսով, Նրան հաւատալով, ստացան փրկութիւնը, միութեան մէջ լինելով Յիսուս Քրիստոսի հետ: Սիրոյ եւ հիացմունքի արժանի Սրբեր լինելով, վրկայութիւն ստացան Յիսուս Քրիստոսից եւ դասուեցին ընդհանուր յոյսի Աւետարանի մէջ:

#### Զգուշացէ՛ք Յուդայականութիւնից

Չ. – 1. Եթէ ինչ որ մէկը ձեզ Յուդայականութիւն քարոզի, մի՛ լսէք նրան: Արդարեւ, աւելի լաւ է թլփատուած հրեայից լսել Քրիստոնէութեան մասին, քան թէ անթլփատ մէկից՝ Յուդայականութեան մասին: Երկուսն էլ, յամենայն դէպքս, եթէ չեն խօսում Յիսուս Քրիստոսի մասին, իմ համար դամբանաքարեր են եւ մեռեալների գերեզմաններ, որոնց վրայ մարդկային անուններ են գրուած պարզապէս<sup>2</sup>:

<sup>1</sup> Այս հատուածում – առաւել՝ քան այլուր (Մազն. Ը 2, Ֆիլ. Թ 1-2) – Իգնատիոսը խօսում է Հին Կտակարանի ամենաերեւելի կերպարների մասին: Քանի որ քրիստոնէական առաջին համայնքներում մեծ թիւ էին կազմում դարձի եկած հրեաները, կարելու էր հասկացնել նրանց, որ Հին Կտակարանի մեծ անձնաւորութիւններն ապրել էին Քրիստոսի սպասումով, հաւատալով մարդկութեան ընդհանուր յոյսին:

<sup>2</sup> Իգնատիոսը զգուշացնում է Յուդայականների դէմ, որոնք ամէն կերպ փորձում էին հաստատել Մովսէսական Օրէնքի

2. Հեռու փախէք, ուստի, այս աշխարհի իշխանի հրապուրիչ հնարքներից ու ծուղակներից, որպէսզի նրա մտածելակերպի տակ չճնշուէք ու չտկարանաք սիրոյ մէջ: Այլ ընդհակառակը. բոլորդ, անբաժան սրտով, դիմէք միութեան:

3. Գոհութիւն եմ յայտնում իմ Աստծուն, որ իմ խիղճը ձեր նկատմամբ մաքուր է եւ ոչ ոք չի կարող պարծենալով հաստատել, – ո՛չ ծածուկ կերպով, ո՛չ էլ հրապարակայնօրէն, – թէ ես բեռ եմ եղել ինչ որ մէկի համար, մեծ կամ փոքր չափով<sup>1</sup>: Բոլոր նրանց, ում հետ խօսել եմ, մաղթում

---

գործադրումը քրիստոնէական համայնքներում: Այդ Յուդայականները միշտ չէ, որ ազգութեամբ հրեայ էին: Կային հեթանոսներ (անթլիփատներ), որոնք նախ դարձի էին գալիս քրիստոնէութեան, բայց յետոյ ընկնում էին փարիսեցիական օրինապաշտութեան գիրկը: Մինչդեռ կային ազգութեամբ հրեաներ (թլիփատուածներ), որոնք օրինակելի քրիստոնեաներ էին: Ուստի Իգնատիոսն ասում է, որ աւելի օրինաչափ է գտնում դէպքը, երբ դարձի եկած հրեան քարոզում է քրիստոնէութիւնը, մինչդեռ ամբողջովին անտրամաբանական է հեթանոսի պարագան, որ քարոզում է Մովսէսական Օրէնքի պահպանումը: Յամենայն դէպս, ով էլ որ քարոզի եւ ինչ էլ որ քարոզուի, կարեւորն այն է, որ քարոզութեան առանցքը Յիսուս Քրիստոսը լինի: Այլապէս, սոսկ մարդկային իրականութիւններ են, նման արտաքինից գեղեցկացւած, բայց ներսից ոսկորներով միայն լի գերեզմանների (Հմմտ. Մտթ 23, 27):

<sup>1</sup> Դժուար է հաստատել, թէ Իգնատիոսի այս խօսքերը պարզապէս արձագանքում են Պողոս Առաքեալի նման արտայայտութիւններին (Հմմտ. Գրծ 20, 33-34; 1Թղ 2, 7; 2Կր 11, 9; 12, 13-16), թէ ուղղակիօրէն պատասխանում են իր հասցէին հնչած ինչ-ինչ բամբասանքների:

*եմ, որ իմ խօսքերը ձեռք չբերեն որպէս իրենց իսկ դէմ հնչած վկայութիւն:*

Ոչինչ մի՛ արե՛ք առանց Եպիսկոպոսի

Է. – 1. Թէեւ ոմանք փորձեցին խաբել ինձ մարմնապէս, սակայն Հոգին, որ գալիս է Աստծուց, չի կարող խաբուել: «Նա գիտէ, թէ որտեղից է գալիս եւ ուր է գնում», եւ յայտնում է ծածուկ իրողութիւնները<sup>1</sup>: Երբ ձեր մօտ էի, ուժգին խօսեցի եւ ասում էի բարձրաձայն, Աստծոյ ձայնով. «Միացած մնացէք Եպիսկոպոսին, քահանայից դասին եւ սարկաւազներին»:

2. Ոմանք կարծեցին, թէ ես այդպէս խօսեցի, որովհետեւ ինչ որ մէկն ինձ տեղեկացրեց ոմանց բաժանման մասին: Բայց Նա, ում համար եմ ես շղթայուած, ինձ վկայ է, որ ես դա չիմացայ մարդկանցից, այլ Հոգին ինձ յայտնեց դա, ասելով. «Ոչինչ մի՛ արէք առանց Եպիսկոպոսի, պահպանեցէք ձեր մարմինները որպէս Աստծոյ տաճար: Սիրեցէք միութիւնը, հեռու մնացէք բաժանումներից, նմանուեցէք Յիսուս Քրիստոսին, ինչպէս ինքն էլ նմանում է իր Հօրը»:

---

<sup>1</sup> Հմմտ. Յվհ 3, 8; 1Կր 2, 10.

## Հաւատում եւ Յիսուս Քրիստոսի շնորհին

Ը. – 1. Ես, ուստի, որքանով որ դա իմ պաշտօնն էր, գործեցի որպէս միութեանը հակուած մի մարդ: Ուր կայ բաժանում ու զայրոյթ, այնտեղ չի բնակւում Աստուած: Արդարեւ, Տէրը ներում է բոլոր նրանց, ովքեր դարձի են գալիս, եթէ դարձի են գալիս Աստուծոյ հետ միութեանը եւ Եպիսկոպոսի հետ հաղորդութեանը: Ես հաւատում եմ Յիսուս Քրիստոսի շնորհին. Նա կ'արձակի ձեր բոլոր կապանքները:

2. Յորդորում եմ ձեզ, որ ոչինչ չանէք հակաճառութեան մոլուցքից դրդուած, այլ՝ հետեւելով Քրիստոսի ուսուցմանը: Լսեցի, թէ ինչպէս էին ոմանք ասում. «Եթէ գրապահոցում<sup>1</sup> չգտնեմ դրա մասին գրուած ոչինչ, չեմ հաւատայ Աւետարանին»: Այդպիսիներին պատասխանում էի. «Այո՛, գրուած է»: Նրանք, սակայն, շարունակում

---

<sup>1</sup> Ոմանք Աւետարանին հաւատալու համար փաստարկներ էին պահանջում հրէական ու հեթանոսական հին գրականութիւնից, մանաւանդ Յուդայականներն էին այդպիսի ապացոյցներ պահանջում հինկտակարանեան մարգարէութիւններից: Իգնատիոսը նախ հաստատում է, որ այդ փաստարկները կան, բայց կտրուկ կերպով ակնացնում է, որ իր հաւատքի միակ հիմքը Ինքը Յիսուս Քրիստոսն է իր նաչով, մահուամբ եւ յարութեամբ: Միւսներին, մինչդեռ, կարծես թէ չի էլ հետաքրքրում ճշմարտութեան ձեռքբերումը. նրանք հակաճառութեան մոլուցքից դրդուած են միայն խօսում:

էին. «Բայց հէնց այդտեղ է խնդիրը»: Իմ համար գրապահոցը Յիսուս Քրիստոսն է, եւ անձեռնմխելի գրապահոցներ են Նրա Խաչը, մահը, Նրա յարութիւնը եւ հաւատքը, որը մեզ գալիս է Նրա միջոցով: Այս իրողութիւններով եմ ես կամենում արդարանալ, ձեր աղօթքների շնորհիւ:

Աւետարանն առաւել է, քան չիւն Կառկարանը

Թ. – 1. Մեծարանքի արժանի էին քահանաները, բայց իւրայատուկ կերպով՝ Մեծն Քահանայակետը<sup>1</sup>, որին է յանձնուել Սրբութիւն Սրբոցը. Միակը, որին վստահուել են Աստուծոյ գաղտնիքները: Նա դէպի Հայրն առաջնորդող դուռն է, որի միջով մտան Աբրահամը, Իսահակը, Յակոբը, Մարգարէները, Առաքեալներն ու Եկեղեցին: Այս ամէնը կատարուել է Աստուծոյ հետ միութեան նըպատակով:

2. Բայց Աւետարանն առաւել գերազանց մի բան ունի. դա Փրկչի, մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալուստն է, Նրա չարչարանքներն ու յարութիւ-

---

<sup>1</sup> Այսինքն՝ Յիսուս Քրիստոսը: Մինչ «մեծարանքի արժանի քահանաներ» ասելով Իգնատիոսը հասկանում է չիւն Ուխտի քահանաներին. մեծարանքի արժանի էին, ասում է, այո՛, բայց մնացել են անցեալում, քանի որ ամէն բան Աստուծոց յանձնուել ու վստահուել է Յիսուս Քրիստոսին:

նը: Սիրեցեալ Մարգարէներն, արդարեւ, Նրա մասին մարգարէացան, բայց Աւետարանն անմահութեան գործընթացի կատարեալ ամբողջացումն է: Այս բաները, բոլորն էլ միասին, հաւասարապէս բարի են, եթէ հաւատում էք սիրով:

## Լաւ լուրեր Անտիոքից

Ժ. – 1. Քանի որ ինձ աւետեցին, որ Ասորիքում Անտիոքի Եկեղեցին խաղաղութիւն է վայելում, – շնորհիւ ձեր աղօթքների եւ այն գորովալի զգացումների, որ նրա նկատմամբ սնում էք Քրիստոս Յիսուսի մէջ, – պատշաճ է, որ դուք, որպէս Աստուծոյ Եկեղեցի, նշանակէք մի սարկաւազ, որն Անտիոք մեկնի աստուածային առաքելութեամբ. ուրախակից լինելու բոլոր նրանց հետ, ովքեր հաւաքուած կը լինեն միասին, եւ փառաւորելու Աստուծոյ Անունը:

2. Յիսուս Քրիստոսի մէջ երանելի է նա, ով արժանի կը նկատուի կատարելու այդ առաքելութիւնը: Դուք եւս կը փառաւորուէք: Եթէ համաձայն էք, դա ձեր համար անհնարին չի լինի Աստուծոյ Անուան համար. աւելի մօտ գտնուող Եկեղեցիները նոյնպէս ուղարկել են ոմանք Եպիսկոպոսներ, իսկ ոմանք էլ՝ քահանաներ ու սարկաւազներ:



## Հրաժեշտի ողջոյններ

ԺԱ. – 1. Բոլորի կողմից յարգուած Կիլիկեցի սարկաւազ Փիլոնը այժմ էլ ինձ օգնում է Աստծոյ խօսքի ծառայութեան մէջ: Նրա հետ է Ռէոս Ագաթոսը, ընտրեալ մի այր, որն իր սեփական կեանքից հրաժարուած՝ Ասորիքից ի վեր ուղեկցում է ինձ: Երկուսն էլ բարի վկայութիւն են տալիս ձեր մասին: Եւ ես գոհութիւն եմ յայտնում Աստծուն ձեր համար, որ ընդունեցիք նրանց: Նոյն կերպ թող Տէրն ընդունի ձեզ: Իսկ նրանք, ովքեր վատ վերաբերմունք դրսեւորեցին նրանց նկատմամբ, թող որ կարողանան ներում գտնել Յիսուս Քրիստոսի շնորհով:

2. Ձեզ ողջունում է Տրովադայում բնակուող եղբայրների սէրը: Այստեղից եմ ձեզ գրում Բուրբոսի միջոցով, որին Եփեսացիներն ու Ջմիւռնիացիները յանձնարարել են մնալ իմ հետ, այսպիսով կամենալով պատուել ինձ: Նրանց էլ կը պատուի Տէր Յիսուս Քրիստոսը, ում նրանք յուսացել են մարմնով, շնչով, հոգով, հաւատքով, սիրով, միաբանութեամբ: Անյողդողդ մնացէք Յիսուս Քրիստոսի մէջ. նա է մեր ընդհանուր յոյսը:

## ՉՄԻԻՌՆԻԱՅԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՆ

Իգնատիոսի դէպի Հռոմ ուղեւորութեան առաջին հանգրուանը եղաւ Չմիւռնիան, որն Ասիայի մարդաշատ, բազմազգ եւ առեւտրային ամենակարեւոր քաղաքներից մէկն էր: Իրեն ուղեկցող պահակախմբի հետ միասին, Իգնատիոսն այստեղ մնաց մի օրոջ ժամանակ, սիրով ու հոգատարութեամբ ընդունելով տեղի երիտասարդ Եպիսկոպոս Պողիկարպոսի կողմից: Այստեղ նա մեծարանքի ու մխիթարանքի առարկան դարձաւ մերձակայ Եկեղեցիների կողմից ուղարկուած պատուիրակութիւնների (Եփեսոս, Մազնեզիա, Թրալլիս): Այստեղ նա կարողացաւ ընտանի կերպով շփուել բազմաթիւ հաւատացեալների հետ, հանդիպելով ամէն դասակարգի անձանց, հաստատելով մտերիմ յարաբերութիւններ: Այստեղ, սակայն, առիթն ունեցաւ նաեւ հանդիպելու որոշ Յուդայականների եւ, յատկապէս, Դոկետների, որոնց հետ բռուն բանավէճեր ունեցաւ:

Վերսկսելով ուղեւորութիւնը, խումբը կարճ ժամանակում հասաւ Տրովադա: Այդտեղ Իգնատիոսի առաջին գործերից մէկը եղաւ գրել սոյն նամակը Չմիւռնիայի համայնքին:

Ճիշտն ասած, առաւել ակնկալելի կը լինէր գտնել խաղաղ ու հանդարտ մի նամակ, մինչդեռ խօսքը վերաբերում է սաստիկ միջամտութեան, որի թիրախն են հերետիկոսներն ու իրենց կեղծ ուսմունքները, որոնց Սուրբ Մարտիրոսը հակադրում է իր բոցավառ հաւատքը Յիսուս Քրիստոսի հանդէպ,

*որն իսկապէս Աստծոյ Որդին է եւ իսկապէս մարդ է, իսկապէս ծնուել է, մահացել եւ յարութիւն առել: Միայն վերջին հատուածն է նուիրուած ողջոյններին եւ երախտագիտութեան արտայայտութիւններին: Դրանց միջոցով զգում ենք, թէ ինչպէս էր երախտաբի ջերմ զգացումներով բաբախում Իգնատիոսի սիրտը, որն այժմ, լի էր Աստծով, բայց հաւասարապէս նաեւ լի էր մարդկային անկեղծ զգացումներով:*

## Ողջոյն

*Իգնատիոսը, որին անուանում են նաեւ Աստուածակիր, Ասիայի Զմիւռնիա քաղաքում գտնուող եկեղեցուն մաղթում է լիակատար բերկրանք հոգու մաքրութեան եւ Աստծոյ խօսքի մէջ.*

*– Հայր Աստծոյ եւ սիրեցեալ Յիսուս Քրիստոսի եկեղեցուն.*

*– եկեղեցուն, որ ողորմութիւն է ստացել բոլոր պարզեւնների առատութեամբ.*

*– եկեղեցուն, որ լի է հաւատքով եւ սիրով, որին ոչ մի պարզեւ չի պակասում.*

*– եկեղեցուն, որ յոյժ արժանի է Աստծուն եւ սրբութիւններ է կրում:*

## Հաւատքի դաւանութիւն

*Ա. – 1. Փառաւորում եմ Յիսուս Քրիստոս Աստծուն, որ ձեզ այսքան իմաստուն է դարձրել.*

ձեզ կատարեալ գտայ անասան հաւատքի մէջ, կարծես մարմնով եւ հոգով դամուած Տէր Յիսուս Քրիստոսի խաչին, եւ Քրիստոսի արեան շնորհիւ սիրոյ մէջ արմատացած: Գիտեմ, որ ամբողջովին հաւատում էք մեր Տիրոջը, համոզուած, որ Նա իսկապէ՛ս «մարմնով Դաւթի սերնդից էր»<sup>1</sup>, Աստծոյ կամքով եւ զօրութեամբ՝ Աստծոյ Որդին, որն իսկապէ՛ս ծնուեց Կոյսից, մկրտուեց Յովհաննէսից, «որպէսզի Նրա միջոցով կատարուի ամէն արդարութիւն»<sup>2</sup>:

2. Պոնտացի Պիղատոսի եւ Հերովդէս չորրորդապետի օրոք Յիսուսն իսկապէ՛ս մարմնով դամուեց խաչին, մեր համար. Նրա պտղից ենք մենք սերել, Նրա աստուածայնօրէն երանելի չարչարանքներից: Իր յարութեամբ Նա կամեցաւ ընդմիջտ վեր բարձրացնել Իր դրօշը<sup>3</sup>, Իր սրբերի ու հաւատացեալների համար, – լինի՛ հրեաների միջեւ, թէ՛ հեթանոսների, – Իր Եկեղեցու միակ մարմնի ներսում:

Քրիստոսն իսկապէ՛ս չարչարուեց

Բ. Այդ ամէնը Նա մեր համար կրեց, որպէսզի փրկուէինք: Եւ այդ ամէնն իսկապէ՛ս կրեց,

---

<sup>1</sup> Հոմ 1, 3.

<sup>2</sup> Հմմտ. Մտթ 3, 15.

<sup>3</sup> Հմմտ. Ես 5, 26; 11, 12.

*Ինչպէս որ իսկապէ՛ս յարութիւն առաւ: Ո՛չ ինչպէս ասում են որոշ անհաւատներ. «Նա սոսկ թրւացեալ կերպով չարչարուեց», մինչ հէնց իրենք են թուացեալ գոյութիւններ: Ինչպէս որ մտածում են, այդպէս էլ կը կատարուի իրենց համար. կը լինեն անմարմին էակներ, դեւերի նման:*

Յարուցեալ Քրիստոսին հայուելով է, որ Առաքեալները հաւատացին

Գ. – 1. *Ես գիտեմ ու հաւատում եմ, որ յարութիւնից յետոյ էլ Նա մարմնով էր:*

2. *Երբ գնաց նրանց մօտ, ովքեր Պետրոսի հետ էին, նրանց ասաց. «Եկէ՛ք, հպուեցէ՛ք ինձ եւ տեսէք, որ անմարմին ոգի չեմ»<sup>1</sup>: Նրանք իսկոյն հպուեցին նրան եւ հաւատացին, միանալով նրա մարմնին եւ Նրա հոգուն: Սրա համար է, որ մահը եւս արհամարհեցին, կամ աւելի ճիշտը՝ մահից առաւել գերազանց գտնուեցին:*

3. *Յարութիւնից յետոյ նրանց հետ կերաւ եւ խմեց մարմին ունեցող մարդու նման, թէեւ հոգով միացած էր Հօրը:*

---

<sup>1</sup> Հմմտ. Ղկս 24, 39.

Զգուշացնում եմ ձեզ մարդակերպ գազափնտրից

Գ. – 1. Այս ճշմարտութիւնների վերաբերեալ յորդորում եմ ձեզ, սիրելիներ, իմանալով, որ դուք էլ միեւնոյն համոզումներն ունէք: Զգուշացնում եմ ձեզ մարդակերպ գազաններից<sup>1</sup>. ո՛չ միայն չըպէտք է ընդունէք նրանց, այլեւ, եթէ հնարաւոր է, եւ ոչ իսկ հանդիպէք նրանց: Նրանց համար աղօթելն է միայն լաւ, որպէսզի թերեւս կարողանան դարձի գալ, ինչը որ հեշտ չէ: Բայց դրան ի զօրութիւն է Յիսուս Քրիստոսը. նա է մեր ճշմարիտ կեանքը:

2. Արդարեւ, եթէ մեր Տիրոջ կողմից կատարւած գործերը սոսկ երեւութապէս էին, ուրեմն ես էլ սոսկ երեւութապէս եմ շղթայուած: Ուրեմն ինչո՞ւ կամովին յանձնուեցի մահուանը կրակի, սրի, գազանների միջոցով: Որովհետեւ սրին մօտիկ, նշանակում է Աստուծոյ մօտիկ: Գազաններով շղթայատուած լինել, նշանակում է Աստուծոյ հետ լի-

---

<sup>1</sup> Խօսքը վերաբերում է հերետիկոսներին: Առաջին հայեացքից թերեւս զարմանալի է Իգնատիոսի նամակներում նման ուժգին արտայայտութիւնների հանդիպելը, բայց ինչպէս արդէն նշել ենք Ներածութիւնում, Սուրբ Մարտիրոսի համար ամենակարեւոր ու ամենաթանկարժէք բանը դա հաւատքի ուղղադաւանութիւնն էր: Ուստի հաստատում է, որ ոչ մի յարաբերութիւն չպէտք է գոյութիւն ունենայ հերետիկոսների հետ, այլ միմիայն աղօթք՝ նրանց դարձի համար:

նել: Կարեւորն այն է, որ դա կատարուի միմիայն Յիսուս Քրիստոսի Անունով: Նրան չարչարակից լինելու համար եմ ես ամէն ինչի համբերում, քանի որ ինձ զօրացնում է հէնց Նա, ով կատարեալ մարդ դարձաւ<sup>1</sup>:

Աւելի մահուան դատապարտւածներն են,  
քան ճշմարտութեան

Ե. – 1. Ոմանք Քրիստոսին չճանաչելով, մերժում են Նրան, կամ աւելի ճիշտը՝ մերժում են Նրանից, որովհետեւ աւելի մահուան դատապարտւածներն են, քան ճշմարտութեան: Նրանց չեն համոզել ո՛չ Մարգարէները, ո՛չ Մովսէսի Օրէնքը, եւ ո՛չ էլ մինչեւ օրս Աւետարանը, եւ ո՛չ իսկ մեզնից իւրաքանչիւրի կրած չարչարանքները:

2. Մեր մասին էլ են նման կերպ մտածում: Բայց ինձ ի՞նչ օգուտ, եթէ մէկն ինձ գովում է, բայց անարգում է իմ Տիրոջը, չընդունելով, որ Նա օժտուած էր մարմնով: Ով սա չի դաւանում, արդէն իսկ լիովին ուրացել է Նրան, եւ հէնց ին-

---

<sup>1</sup> Շատ կարեւոր է Իգնատիոսի միտքը. քրիստոնեայի համար կարեւորը չարչարուելը չէ, այլ Քրիստոսին չարչարակից լինելը, Նրա հետ միասին հասնելու համար յարութեանը: Ուշադրութիւնը Քրիստոսի վրայ կենտրոնանալով, այդ չարչարակցութիւնը դառնում է սիրոյ կատարեալ նշան:

քը մէկն է, ով քարչ է տալիս իր սեփական դիակը<sup>1</sup>:

3. Պատշաճ չնկատեցի այստեղ գրի առնել նրանց անունները, քանի որ հաւատքից զուրկ են: Մանաւանդ թէ, չէի կամենայ եւ ոչ իսկ յիշել նրանց, մինչեւ որ դարձի կը գան Քրիստոսի չարանքներին, որը մեր յարութիւնն է:

Ամէն բան բովանդակուած է հաւատքի եւ սիրոյ մէջ

Ձ. – 1. Թող ոչ ոք չխաբուի: Երկնային էակներն անգամ, փառահեղ հրեշտակները, տեսանելի ու անտեսանելի իշխանները, եթէ չեն հաւատում Քրիստոսի արեանը, դատապարտուած են: «Ով կարող է հասկանալ, թող հասկանայ»<sup>2</sup>: Թող ոչ ոք չհպարտանայ իր գրաւած դիրքով. ամէն բան բովանդակուած է հաւատքի եւ սիրոյ մէջ, եւ ոչինչ առաւել նախընտրելի չէ, քան այս առաքինութիւնները:

<sup>1</sup> Քրիստոսի կեանքն իր մէջ չունենալով, մարդը հոգեպէս մեռած մէկն է, որն իր մարմինը քարչ է տալիս որպէս դիակ: Իգնատիոսի այս հաստատումը բազմաթիւ ապացոյցների կարիք չունի. մարդկանց ամէնօրեայ կեանքն արդէն լիովին փաստում է դա:

<sup>2</sup> Հմմտ. Մտթ 11, 15; 13, 9; 13, 43; Մրկ 4, 9; 4, 23; Ղկս 8, 8; 14, 35.



2. Նրանց մասին, ովքեր Յիսուս Քրիստոսի շնորհի վերաբերեալ մի ուրիշ ուսմունք են դաւանում, – այն շնորհի, որ եկաւ մեզ, – տեսէ՛ք, թէ որքա՛ն հակառակ են Աստուծոյ մտքին: Կարեւորութիւն չեն տալիս սիրոյն, ո՛չ այրիին, ո՛չ որբին, ո՛չ տառապողներին, ո՛չ բանտարկեալներին կամ ազատուածներին, ո՛չ քաղցից ու ծարաւից չարչրկուածներին<sup>1</sup>:

Ովքեր մերժում են Աստուծոյ պարգեւը, մեռնում են իրենց իսկ բանալեանում

Է. – 1. Հեռու են մնում Ամենասուրբ Հաղորդութիւնից<sup>2</sup> եւ աղօթքից, քանի որ չեն դաւանում, որ Ամենասուրբ Հաղորդութիւնը մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի մարմինն է. այն մարմինը, որ տառապեց մեր մեղքերի համար եւ որին Հայրը յարութիւն տուեց Իր բարեացակամութեամբ<sup>3</sup>: Ով-

<sup>1</sup> Հմմտ. Մտթ 25, 31-46.

<sup>2</sup> Բնագիրը գործածում է Գոհաբանութիւն եզրը, բայց տրւեալ համատեքստում կարծում ենք, որ հայերէնով իմաստին աւելի է համապատասխանում տուեալ հոմանիշը:

<sup>3</sup> Պատմական վիթխարի կարեւորութիւն ունի Իգնատիոսի այս վկայութիւնը: Այն փաստում է, որ Առաքեալների անմիջական ուսուցումներով կրթուած քրիստոնէական առաջին համայնքներն արդէն լիովին հաւատում էին Ամենասուրբ Հաղորդութեան խորհրդում Յիսուսի իրական ներկայութեանը: Եւ ուշադրութեան արժանի է նաեւ փաստը, որ

քեր մերժում են Աստծոյ պարգեւը, մեռնում են իրենց իսկ բանավէճերում<sup>1</sup>: Այդպիսիների համար աւելի լաւ կը լինէր, եթէ գործի դնէին սէրը, այնպէս՝ որ կարողանային նաեւ յարուժիւն առնել:

2. Ձեզ պատշաճ է, ուստի, հեռու մնալ այդպիսիներից եւ նրանց մասին չխօսել ո՛չ առանձնագրոյցներում, ո՛չ էլ հրապարակային խօսակցութիւններում, այլ՝ միացած մնալ Մարգարէներին եւ յատկապէս Աւետարանին, որի մէջ բացայայտւած ենք տեսնում չարչարանքները եւ իրագործւած՝ յարուժիւնը: Հեռու մնացէ՛ք բաժանումներից, ինչպէս չարիքների ակունքից:

Ուր Յիսուս Քրիստոսն է, այնտեղ է Ընդհանրական Եկեղեցին

Ը. – 1. Բոլորդ Եպիսկոպոսին հետեւեցէ՛ք, ինչպէս Յիսուս Քրիստոսն է հետեւում Հօրը. հետեւեցէ՛ք քահանայից դասին ինչպէս Առաքեալներին. սարկաւազների հանդէպ տածէ՛ք այն նոյն յարգանքը, որն ունէ՛ք Աստծոյ պատուիրանի նրկատմամբ: Թող ոչ ոք Եկեղեցուն վերաբերուող որեւիցէ մի գործ չկատարի առանց Եպիսկոպոսի:

---

Իգնատիոսն այս խորհրդի հանդէպ հաւատքը ներկայացնում է որպէս ուղղագաւանդութեան կարեւորագոյն կէտ:

<sup>1</sup> Հմմտ. ՅվՀ 6, 50-58.

Թող վաւերական նկատուի այն Պատարագը<sup>1</sup>, որին նախագահում է Եպիսկոպոսը կամ Եպիսկոպոսի կողմից լիազօրուած անձը<sup>2</sup>:

2. Ուր Եպիսկոպոսն է, թող այնտեղ գտնուի նաեւ Համայնքը, ինչպէս ուր Յիսուս Քրիստոսն է, այնտեղ է Ընդհանրական Եկեղեցին<sup>3</sup>: Առանց Եպիսկոպոսի օրինաւոր չէ ո՛չ մկրտել, ո՛չ էլ սիրոյ<sup>4</sup> ծէսը կատարել: Ինչը որ նա արտօնում է, Հա-

---

<sup>1</sup> Բնագիրը կրկին գործածում է Գոհաբանութիւն եզրը:

<sup>2</sup> Միմիայն Եպիսկոպոսը, որպէս Առաքեալների յաջորդ, իրաւասու է խորհրդակատարել ինչպէս Սուրբ Պատարագը, այնպէս էլ քրիստոնէական Ծէսի միւս բոլոր խորհուրդները: Կամ էլ կարող է ինչ որ մէկին լիազօրել կատարելու զըրանք իր փոխարէն եւ իր անունից (յանձնէ եւ յանուն իր): Լիազօրուած այդ անձինք քահանաներն են: Սա է եղել եւ մնացել Եկեղեցու անփոփոխ վարդապետութիւնը Քրիստոսի Առաքեալներին աշակերտած Իգնատիոսի ժամանակներից մինչեւ մեր օրերը:

<sup>3</sup> Հայրախօսական գրականութեան մէջ սա առաջին անգամն է, որ «Ընդհանրական» եզրը գործածւում է որպէս Եկեղեցու ստորոգելի:

<sup>4</sup> Յունարէն բնագրում գործածուած է Ագապէ եզրը: Գիտենք, որ առաջին քրիստոնէաների Համար Ագապէն դա մի եղբայրական ճաշկերոյթ էր, որի աւարտին սովորաբար կատարուում էր Ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդը, այսինքն՝ մատուցում էր Սուրբ Պատարագը: Պօղոս Առաքեալը խստօրէն յանդիմանում է Կորնթացիներին այդ արարողութեան ընթացքում տեղի ունեցող չարաշահումների Համար (1 Կր 11, 17-34), որից յետոյ երկու իրողութիւններն իրարից բաժանւում են: Ագապէ (սէր) եզրը Իգնատիոսը գործածում է տարբեր իմաստներով, մինչեւ իսկ որպէս քրիստո-

ճոյ է նաեւ Աստծուն, որպէսզի այն ամէնն, ինչ կատարուի էք, ապահով եւ վաւերական լինի:

Աստծոյ համար ամէն նեղուծիւն կրելով, մի օր հասնելու էք Նրա՛ն վայելելու

Թ. – 1. Լաւ է, ուստի, որ կրկին զգաստանանք եւ, քանի դեռ մեզ ժամանակ է տրուած, դարձի գանք Աստծուն: Լաւ է ճանաչել<sup>1</sup> Աստծուն եւ Եպիսկոպոսին: Ով պատուում է Եպիսկոպոսին, պատիւ է ընդունում Աստուծոյ: Ով ինչ որ մի բան է անում Եպիսկոպոսից գաղտնի, ծառայում է սատանային:

2. Շնորհն, ուստի, թող որ ամէն բան առատացնի ձեր համար, քանի որ արժանի էք դրան: Դուք սփոփեցիք ինձ ամէն ինչում. Յիսուս Քրիստոսն էլ ձեզ կը սփոփի: Իմ հանդէպ բարեացակամութիւն ցուցաբերեցիք ե՛ւ երբ բացակայ էի, ե՛ւ երբ ներկայ էի. Աստուած թող փոխարէնը հա-

---

նչական համայնքի հոմանիչ (Եկեղեցին նկատելով որպէս եղբայրական սիրոյ վայր): Ուստի հաշուի առնելով այս հատուածի ընդհանուր իմաստը, կարծում ենք, որ Ազգայէն այստեղ չի մատնանշում եղբայրական ճաշկերոյթը, այլ՝ Սուրբ Պատարագի մատուցումը, որն աստուածային սիրոյ գերագոյն խորհուրդն է:

<sup>1</sup> «Ճանաչել» բայը գործածուած է «հեղինակութիւնն ընդունել» իմաստով:

տուցի ձեզ: Նրա համար ամէն նեղութիւն կրելով,  
մի օր հասնելու էք Նրան վայելելու:

Ձեր համար եմ գոհաբերում իմ հոգին եւ  
ընծայում իմ շղթաները

Ժ. – 1. Լաւ արեցիք, որ իբրեւ Քրիստոս  
Աստծոյ սարկաւազներ ընդունեցիք Փիլոնին եւ  
Ռէոս Ագաթոպոզոսին, որոնք ինձ ճանապարհոր-  
դակից եղան Աստծոյ սիրոյ համար: Նրանք էլ են  
Տիրոջը երախտագիտութիւն յայտնում ձեր հա-  
մար, քանի որ ամէն կերպ օգնեցիք նրանց: Ոչինչ  
չի կորչելու ձեր համար:

2. Ձեր համար եմ գոհաբերում իմ հոգին եւ  
ընծայում իմ շղթաները<sup>1</sup>, որոնք դուք չարհամար-  
հեցիք եւ որոնց համար չամաչեցիք: Ձեր համար  
էլ չի ամաչելու Յիսուս Քրիստոսը, որ մեր կա-  
տարեալ յոյսն է<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Որպէս իր երախտագիտութեան գերագոյն ապացոյց, Իզ-  
նատիոսը զմիւռնիացիներին ընծայում է այն ամէնն, ինչ  
ունի, այսինքն՝ կեանքը: Դատապարտեալի իր պարագայում  
կեանքն ընծայել նշանակում է խաղաղ ու բերկրալի սրտով  
ընդունել մարտիրոսութիւնը, Աստծուց խնդրելով, որ իր  
կատարեալ սիրոյ արգիւնքները նպաստեն իր հաւատակից  
եղբայրների հոգեւոր կեանքին:

<sup>2</sup> Հմմտ. Մրկ 8, 38; Ղկս 9, 26; Մտթ 10, 40-41.

Քանի որ դուք կատարեալ էք, ձեր մտքերն  
էլ թող կատարեալ լինեն

ԺԱ. – 1. Ձեր աղօթքը հասել է Ասորիք, Անտիոքի Եկեղեցուն<sup>1</sup>, որտեղից եմ ճանապարհ ընկել շղթայուած այս կապանքներով, որոնք մեծապէս արժէքաւոր են Աստուծոյ համար: Նրանց բռնորին ուղղում եմ իմ ողջոյնը, թէեւ արժանի չեմ այդ համայնքին անդամ լինելու, քանի որ նրանցից վերջինն եմ: Սակայն արժանի եմ համարուել Աստուծոյ կամքի համաձայն, ո՛չ թէ իմ գիտակցութեան, այլ՝ Աստուծոյ շնորհի հիման վրայ: Աղօթում եմ, որ այդ շնորհն ինձ տրուի ամբողջութեամբ, որպէսզի – ձեր աղօթքի շնորհիւ – ես կարողանամ հասնել Աստուծուն:

2. Ուստի, որպէսզի ձեր գործը կատարեալ լինի ե՛ւ երկրի վրայ, ե՛ւ երկնքում, պատշաճ է, որ – Աստուծոյ փառքի համար – ձեր համայնքը Աստուծոյ մի պատգամաւոր ընտրի, որ գնայ Ասորիք եւ խնդակցի այդ Եկեղեցու հետ այն բանի համար, որ ապրում են խաղաղութեան մէջ, վերագտել են իրենց մեծութիւնը եւ համայնքը վերակազմաւորուել է:

3. Ինձ, հետեւաբար, թւում է, որ արժանի գործ կը լինի, եթէ ձեզնից մէկին ձեր նամակով

---

<sup>1</sup> Այսինքն՝ աղօթքը, որն Աստուծուն ուղղել էք Անտիոքի Եկեղեցու համար խաղաղութիւն հայցելով, ընդունելի է եղել:

ուղարկէք նրանց հետ տօնախմբելու Աստծոյ կամքի համաձայն վերագտնուած խաղաղութիւնը եւ այն, որ – ձեր աղօթքի շնորհիւ – հասել են նաւահանգիստ<sup>1</sup>: Քանի որ դուք կատարեալ էք, ձեր մտքերն էլ թող կատարեալ լինեն: Եթէ կամենում էք բարին գործել, Աստուած տրամադիր է ձեզ այն պարգեւելու:

Հրաժեշտի ողջոյններ (ԺԲ-ԺԳ)

ԺԲ. – 1. Ձեզ ողջունում է Տրովազայի եղբայրների սէրը: Այնտեղից եմ գրում ձեզ Բուրբոսի միջոցով. նրան – եփեսացիների, ձեր եղբայրների հետ համաձայնութեամբ – ուղարկեցիք իմ հետ եւ նա ինձ մխիթարանք եղաւ ամէն ինչում: Երանի՜ թէ ամէն ոք նրա նման լինէր, քանի որ տիպար օրինակ է, թէ ինչպէ՛ս է հարկաւոր ծառայել Աստծուն: Տիրոջ շնորհը վարձահատոյց կը լինի նրան ամէն ինչում:

2. Ողջունում եմ Աստծուն արժանի ձեր Եպիսկոպոսին<sup>2</sup>, քահանայից սրբազան դասին, սար-

<sup>1</sup> Իգնատիոսը հալածանքները նմանեցնում է փոթորկայոյզ ծովի, մինչ խաղաղութեան վերագտնումը՝ նաւի մուտքին նաւահանգիստ: Այլաբանական այս պատկերը յաճախ է հանդիպում հայրախօսական գրականութեան մէջ:

<sup>2</sup> Խօսքը վերաբերւում է Պողիկարպոսին, Զմիւռնիայի երիտասարդ Եպիսկոպոսին, որին Իգնատիոսն ուղղելու էր իր յաջորդ եւ վերջին նամակը:

կալազներին՝ իմ ծառայակիցներին, եւ բոլորին – անհատաբար եւ միասին – Յիսուս Քրիստոսի անուամբ, Նրա մարմնով եւ արեամբ, Նրա չարչարանքներով եւ յարութեամբ, Աստծոյ եւ ձեր հետ մարմնի ու հոգու միութեամբ: Շնորհ ձեզ, ողորմութիւն, խաղաղութիւն եւ յարատեւութիւն ընդմիշտ:

ԺԳ. – 1. Ողջունում եմ իմ եղբայրների ընտանիքներին, կանանց եւ որդիներին հետ միասին, եւ «այրիներ» կոչուող կոյսերին<sup>1</sup>: Անյողղող մնացէք Հոգու զօրութեամբ: Ձեզ ողջունում է Փիլոնը, որն իմ հետ է:

2. Ողջունում եմ Տաւիայի ընտանիքին եւ մաղթում եմ, որ հիմնուած լինի հաւատքի եւ մարմնաւոր ու հոգեւոր սիրոյ վրայ: Ողջունում եմ ինձ շատ սիրելի Աղկիային, աննման Դափնոսին, Եւտեկնոսին եւ բոլորին անուն առ անուն: Անյողղող մնացէք Աստծոյ շնորհի մէջ:

---

<sup>1</sup> Ամենայն հաւանականութեամբ, «կոյս» ասելով այստեղ հասկացւում է կուսակրօնութեան ներկայ վիճակը, անկախ այն բանից, թէ տուեալ անձը անցեալում ամուսնացած եղել է թէ ոչ: Այսինքն, Իգնատիոսը ողջոյն է յղում այն այրիներին, որոնք իրենց ամուսինների մահից յետոյ ընտրել են ո՛չ թէ կրկին ամուսնանալ, այլ նուիրուել Տիրոջ ծառայութեանը կուսակրօնութեան վիճակում:



## ՊՈՂԻԿԱՐՊՈՍԻՆ

Պողիկարպոսին ուղղուած նամակով փակուում է Իգնատիոսի նամականին: Ձեռագրերում եւ հրատարակութիւններում այն տեղադրուում է նամականու վերջում. կա՛մ որովհետեւ Սուրբ Մարտիրոսի իսկապէս վերջին գրութիւնն է, կա՛մ որովհետեւ առանձին տեղ է գրադեցնում նամակների շարքում, քանի որ միակն է, որ հասցէագրուած է անհատ մի անձի:

Պողիկարպոսը<sup>1</sup> Իգնատիոսից աւելի երիտասարդ էր, բայց ինքն էլ էր անմիջական շփման մէջ եղել անձանց հետ, ովքեր Յիսուսի կեանքի ականատես վկաներն էին: Տերտուղիանոսի, Եւսեբիոսի եւ Սբ. Երանոսի վկայութիւնների համաձայն, Պողիկարպոսն աշակերտել է Սբ. Յովհաննէս Աւետարանչին, որի ձեռամբ էլ ձեռնադրուել է Ձմիւռնիայի Եպիսկոպոս:

Իգնատիոսի նման, Պողիկարպոսը նոյնպէս բռնն գործունէութիւն է ծաւալել ի նպաստ Եկեղեցու միութեան եւ խաղաղութեան: 154 թուականին այցելել է Հռոմ, որպէսզի Անիկետոս Քահանայապետի հետ փորձէր լուծել Ձատրկի օրուայ փշոտ հարցը: Միշտ ի նպաստ Եկեղեցու միութեան եւ ի պաշտպանութիւն հաւատքի ուղղադաւանութեան, բազմաթիւ նամակներ է գրել Ասիայի քրիստոնէական համայնքներին, որոնցից ցաւոք պահպանուել է միայն

---

<sup>1</sup> Յունարէն «poly-karpòs» նշանակում է «պտուղներով հարուստ»: Գեղեցիկ անուն, որ լիովին համապատասխանում էր Ձմիւռնիայի սրբակեաց Եպիսկոպոսին:

մէկը, ուղղուած Ֆիլիպպիի եկեղեցուն. այդ նամակը մեր համար հիմնական կարեւորութիւն ունի, քանի որ այդ նամակի հետ միասին Պողիկարպոսը Ֆիլիպպի առաքեց նաեւ Իգնատիոսի նամակները, որոնք հաւաքել էր մէկտեղ:

Պողիկարպոսը նոյնպէս իր քրիստոնէական վրկայութիւնն աւարտեց մարտիրոսութեամբ, որի հետ կապուած դէպքերը պատմում են Վկայաբանութիւն Պողիկարպոսի (*Martyrium Polycarpi*) ձեռագրում: Իր այս նամակում Իգնատիոսն իր երիտասարդ ընկերոջը օգտակար խորհուրդներ է տալիս հովուական պաշտօնի վերաբերեալ եւ յատկապէս յորդորում է համբերութեան ու յարատեւութեան, ինչպէս «դարբնասար մուրճի հարուածների տակ» (Գ 1):

## Ողջոյն

Իգնատիոսը, որին անուանում են նաեւ Աստուածակիր, լիակատար բերկրանք է մաղթում Ջմիւռնիայի եկեղեցու Եպիսկոպոս Պողիկարպոսին, մինչ նա էլ իրեն որպէս Եպիսկոպոս ունի Հայր Աստծուն եւ Տէր Յիսուս Քրիստոսին<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Յունարէն բնագիրը մերձեցնում եւ միաժամանակ հակադրում է «episcopus» դոյականը «episcopéo» (դիտել, հսկել) բայի կրաւորական ձեւին: Այդպիսով, Իգնատիոսի այս նախադասութիւնն անթարգմանելի է դառնում ուրիշ լեզուներին: Իմաստն այն է, որ Եպիսկոպոսը, մինչ հսկում եւ պաշտպանում է իրեն վստահուած հօտը, իր հերթին հսկում է Աստծոյ կողմից, որի առաջ պատասխանատու է իր կատարած գործի համար:

## Արտացաւ եղիր միութեան հարցին

Ա. – 1. Մինչ վաւերացնում եմ Աստուծոյ մէջ բարի տրամադրուածութիւնդ, որը կարծես անդրդուելի ժայռի վրայ է հաստատուած, մեծապէս գովաբանում եմ Աստուծուն, որ ինձ արժանացրեց տեսնելու քո անբիծ դէմքը: Թող որ ես կարողանամ այն վայելել Աստուծոյ մէջ:

2. Յորդորում եմ քեզ – այն շնորհի գօրութեամբ, որով զգեստաւորուել ես – շարունակել ընթացքդ եւ խրախուսել բոլորին, որպէսզի փրկուեն: Ե՛ւ նիւթական, ե՛ւ հոգեւոր ամէն տեսակ հոգածութեամբ պաշտպանիր զբաղեցրածդ դիրքի բարի անունը: Արտացաւ եղիր միութեան հարցին, որից աւելի լաւ բան չկայ: Նեցուկ եղիր բոլորին, ինչպէս Տէրն էլ նեցուկ է քեզ: Բոլորի հանդէպ համբերատար եղիր, սիրոյ մէջ, ինչպէս արդէն իսկ վարւում ես:

3. Նուիրուիր աղօթքին, անդադար: Այժմ ունեցածիցդ է՛լ աւելի մեծ իմաստութիւն խնդրիր: Արթուն հոգիով հսկիր: Իւրաքանչիւրի հետ անհատաբար խօսիր, Աստուծոյ օրինակին հետեւելով: Կատարեալ մարգիկի նման<sup>1</sup>, քո վրայ վերցրու բոլորի հիւանդութիւնները<sup>2</sup>. ուր աւելի է ջանքը, աւելի է նաեւ վաստակը:

---

<sup>1</sup> Հմմտ. 1Կր 9, 25; 2Տմ 2, 5.

<sup>2</sup> Հմմտ. Ես 53, 4; Մտթ 8, 17.

Խորագետ եղիր օձի նման եւ պարզասիրտ՝  
աղաւնու նման

Բ. – 1. Եթէ միայն առաքինի աշակերտներին  
ես սիրում, արժանիք չունես<sup>1</sup>: Աւելի, քաղցրու-  
թեամբ ենթարկիր նրանց, ովքեր առաւել վնասա-  
կար են ու ապականիչ: Ամէն վէրք միեւնոյն դե-  
ղով չի բուժուում. սաստիկ տենդը մեղմիր թարմ ու  
զով թուրմերով:

2. Ամէն ինչում խորագէտ եղիր օձի նման  
եւ միշտ պարզասիրտ՝ աղանու նման<sup>2</sup>: Մարմնա-  
ւոր եւ հոգեւոր ես հէնց ա՛յս պատճառով, որպէս-  
զի ընդունակ լինես խոնարհուելու այն ամէնի  
վրայ, որ հանդիպում է աչքերիդ առաջ: Ինչ վե-  
րաբերուում է անտեսանելի իրականութիւններին,  
մինչդեռ, աղօթիր, որ յայտնուեն քեզ, որպէսզի  
ոչինչ չպակասի քեզ, այլ ընդհակառակը՝ գերա-  
ւատօրէն հարստանաս հոգեւոր բոլոր պարզեւ-  
ներով:

3. Նպաստաւոր ժամանակը կանչում է քեզ  
հասնելու Աստծուն, ինչպէս նաւավարն է բարե-

---

<sup>1</sup> Յունարէն բնագիրն «արժանիք» եզրի փոխարէն գործա-  
ծում է «*cháris*» («չնորհ») եզրը: Իգնատիոսի արտայայտու-  
թիւնը յիշեցնում է Ղկս 6, 32-34 հատուածը, ուր նոյնպէս  
գործածուում է «*cháris*»-ը, փոխանակ Մտթ 5, 46 հատուածում  
գործածուող «*misthós*»-ի («վարձ», «հատուցում»):

<sup>2</sup> Հմմտ. Մտթ 10, 16.

նպաստ քամիներ հայցում եւ փոթորկից տարու-  
բերուածն է փնտրում մի նաւահանգիստ: Ժուժ-  
կալ եղիր, իբրեւ Աստծոյ մարդիկ. յաղթողին խոս-  
տացուած են անապականութիւնն ու յաւիտենա-  
կան կեանքը, որի հանդէպ դու ինքդ էլ ստոյգ  
հաւատք ունես: Ես ամէն ինչում զոհաբերում եմ  
անձս քո համար եւ քո համար եմ ընծայում իմ  
չղթաները, որոնց նկատմամբ դու սէր ցուցաբե-  
րեցիր:

Անյողողող մնա, ինչպէս դարբնասալը մուր-  
ճի հարուածների տակ

Գ. – 1. Թող չսարսափեցնեն քեզ նրանք, ով-  
քեր արժանահաւատ են թւում, բայց ա՛յլ ուս-  
մունքներ են ուսուցանում: Անյողողող մնա, ինչ-  
պէս դարբնասալը մուրճի հարուածների տակ:  
Քաջարի մարդիկին է յատուկ հարուածներ ստա-  
նալ, բայց յաղթական դուրս գալ: Որքա՛ն աւելի  
հարկաւոր է, որ մենք ամէն բան Աստծոյ համար  
կրենք ու համբերենք, որպէսզի Նա էլ մեզ համբե-  
րի:

2. Է՛լ աւելի եռանդուն եղիր, քան որքան  
այժմ կաս: Ուշադիր քննիր ժամանակները: Սպա-  
սիր Նրան, ով ժամանակից վեր է, Անժամանակը.  
Անտեսանելին, որ մեր համար տեսանելի դարձաւ.  
Անչօջափելին, Անչարշարելին, որ մեր համար

դարձաւ չարչարելի. նա, որ ամէն տեսակ տառապանք կրեց մեր համար:

Թող ոչինչ չկատարուի առանց քո համաձայնութեան

Գ. – 1. Այրիները չպէտք է անտեսուեն ու անհոգութեան մատնուեն: Տիրոջից յետոյ, դու պէտք է լինես նրանց խնամատարը: Թող ոչինչ չկատարուի առանց քո համաձայնութեան, եւ դու ինքդ էլ ոչինչ մի՛ արա առանց Աստուծոյ, ինչպէս եւ արդէն իսկ վարուում ես: Եղիբ անսասան:

2. Հաւաքները թող առաւել յաճախակի լինեն: Փնտրիր բոլորին, իւրաքանչիւրին յանուանէ կանչիր:

3. Ստրուկների եւ ստրկուհիների հետ գոռոզութեամբ մի՛ վարուիր: Սակայն նրանք էլ չպէտք է գոռոզութեամբ վարուեն: Մանաւանդ թէ, Աստուծոյ փառքի համար, պէտք է առաւել եւս հնազանդ լինեն, որպէսզի Աստուծոց լաւագոյն ազատութիւն ստանան: Չպէտք է պահանջեն ազատագրուել համայնքի ծախսով, որպէսզի անյազ ցանկութիւնների ստրուկ չդառնան:

## Յորդորներ ամուսնացածներին ու ամուրիներին

Ե. – 1. Անպատշաճ արհեստներից հեռու մընա. առաւել եւս, խօսի՛ր դրանց մասին<sup>1</sup>: Իմ քոյրերին յորդորի սիրել Տիրոջը եւ գոհ լինել իրենց ամուսիններից մարմնով եւ հոգով: Հաւասարապէս, յորդորի իմ եղբայրներին, Յիսուս Քրիստոսի Անունով, «սիրել իրենց կանանց ինչպէս Տէրը սիրեց Եկեղեցուն»<sup>2</sup>:

2. Եթէ ինչ որ մէկն ի վիճակի է կուսակրօնութեամբ<sup>3</sup> ապրելու, պատուելու համար Տիրոջ մարմինը, թող խոնարհութեամբ ապրի այդ վիճակը: Եթէ հպարտանում է, կորչում է. եթէ իրեն Եպիսկոպոսից վեր է դասում, արդէն իսկ ապականւում է<sup>4</sup>: Փեսաներին ու հարսերին պատշաճ է, որ

---

<sup>1</sup> Իգնատիոսի միտքը թերեւս այն է, որ Պողիկարպոսը, որպէս Եպիսկոպոս, ո՛չ միայն անձամբ չպէտք է զբաղուի անպատշաճ արհեստներով, այլ իր համայնքի անդամներին եւս պէտք է իր խօսքով եւ իր քարոզչութեամբ հեռու պահի դրանցից:

<sup>2</sup> Հմմտ. Եփս 5, 25.

<sup>3</sup> Բնագիրը գործածում է «ժուժկալութիւն», «զգաստութիւն» եզրը, բայց քանի որ դրանք բաւականին լայն կիրառում ունեցող եզրեր են, մինչ այստեղ խօսքը վերաբերւում է հէնց սեռական ժուժկալութեանը, նախընտրեցինք գործածել «կուսակրօնութիւն» եզրը, որի իմաստը միանշանակ է:

<sup>4</sup> Իգնատիոսն ի նկատի ունի այն դէպքը, երբ տուեալ եկեղեցու Եպիսկոպոսը ամուսնացած էր: Եկեղեցու առաջին

իրենց միութիւնը կայացնեն Եպիսկոպոսի Համա-  
ձայնութեամբ, որպէսզի ամուսնութիւնը Տիրոջ  
Համաձայն լինի, եւ ո՛չ թէ՝ ցանկասիրութեան<sup>1</sup>:  
Ամէն բան թող Աստուծոյ պատուի Համար կատար-  
ւի:

Մէկտեղէք ձեր շա՛նքերը, միասին պայքա-  
րեցէք

Ձ. – 1. Եպիսկոպոսի Հանդէպ ականաձանք ու-  
նեցէք<sup>2</sup>, որպէսզի Աստուած էլ ձեր Հանդէպ յար-

---

դարերում կուսակրօնութիւնը պարտադիր չէր եւ Եպիսկո-  
պոսներն էլ կարող էին ամուսնացած լինել: Սուրբ Մարտի-  
րոսը մի շատ կարեւոր միտք է ուսուցանում այստեղ. ան-  
հատական սրբութիւնը ոչ ոքի կանոնական իշխանութիւն  
չի հաղորդում Եկեղեցու վրայ:

<sup>1</sup> Եպիսկոպոսի Համաձայնութիւնը ստանալը չի վերաբեր-  
ւում անձի ընտրութեանը, այլ՝ քննելուն, թէ արդեօք առ-  
կա՞յ են ամուսնութեան Համար բարոյական կամ կանոնա-  
կան ա՛յլ խոչընդոտներ (տարիք, ազգակցական սերտ կա-  
պեր, ամուսնալուծութիւն, եւ այլն), «որպէսզի ամուսնու-  
թիւնը Տիրոջ Համաձայն լինի»:

<sup>2</sup> Թէեւ նամակն ուղղուած է անձամբ Պողիկարպոսին, այ-  
դուհանդերձ Իգնատիոսն այստեղ խօսքն ուղղում է Ձմիւռ-  
նիայի բոլոր քրիստոնեաներին: Սակաւաթիւ տողերում նա  
խտացնում է իրեն հոգեհարազատ բոլոր հարցերը. Հնազան-  
դութիւն Եպիսկոպոսին, միասնականութիւն, անսասան հա-  
ւատարմութիւն նեղութիւններում, փոխադարձ բարեացա-  
կամութիւն:



գանք ցուցաբերի: Ես ինձ որպէս զոհ եմ ընծայում նրանց համար, ովքեր հնազանդ են Եպիսկոպոսին, քահանաներին եւ սարկաւազներին: Երանի՛թէ նրանց հետ ես էլ մաս եւ բաժին ունենայի Աստծոյ մէջ: Մէկտեղէք ձեր ջանքերը, միասին պայքարեցէք, միասին ընթացէք, միասին տառապանք կրէք, միասին քուն մտէք եւ միասին արթնացէք, իբրեւ Աստծոյ տնտեսներ, սպասաւորներ ու ծառաներ:

2. Զանացէք հաճոյ լինել նրան, ում համար մարտնչում էք<sup>1</sup> եւ ումից նաեւ ստանում էք ձեր վարձը: Թող ոչ ոք դասալիք չգտնուի: Ձեր մկրդտութիւնը թող մնայ որպէս վահան, հաւատքը՝ սաղաւարտ, սէրը՝ նիզակ, իսկ համբերութիւնը՝ որպէս զրահ<sup>2</sup>: Ձեր աւանդները ձեր բարի գործերն են, որպէսզի կարողանաք ետ ստանալ ձեր հասանելիքը պատշաճ չափով: Ուստի, մէկը միւսի նրկատմամբ մեծահոգի եղէք, հեղութեամբ, ինչպէս Աստուած Ինքն է ձեր նկատմամբ վարւում: Թող որ ես ընդմիջտ կարողանամ վայելել ձեզնից եկող բերկրանքը:

---

<sup>1</sup> Հմմտ. 2Տմ 2, 4.

<sup>2</sup> Հմմտ. Եփս 6, 13-17; 1Թղ 5, 8.

Քրիստոնեան ինքն իր վրայ իշխանությունն

Է. – 1. Քանի որ Ասորիքում Անտիոքի Եկեղեցին – ինչպես ինձ տեղեկացրեցին – ձեր աղօթքների շնորհիւ ապրում է խաղաղութեան մէջ, ես էլ եմ ինձ առաւել մխիթարուած զգում, մտահոգութիւններից ազատ եւ Աստծոյ յոյսով. պայմանով, որ տառապանքի միջոցով կարողանամ հասնել Աստծուն, որպէսզի յարութեան մէջ ձեզ հետեւեմ իբրեւ աշակերտ:

2. Ո՛վ Աստծոյ մէջ երանելի Պողիկարպոս, լաւ կը լինի, որ Աստծուն հաճելի ժողով գումարէք եւ ձեզ յոյժ սիրելի ու ջանասէր մէկին ընտրէք, որը կարող է «Աստծոյ սուրհանդակ» կոչւել: Յանձնարարիր նրան գնալ Ասորիք, որպէսզի հուշակուի ձեր գործուն սէրը, Աստծոյ փառքի համար:

3. Քրիստոնեան ինքն իր վրայ իշխանութիւն չունի, այլ Աստծոյ տրամադրութեան տակ է: Այս գործն Աստծունն է եւ նաեւ ձերը, երբ աւարտին հասցնէք: Արդարեւ, վստահ եմ շնորհին եւ գիտեմ, որ պատրաստակամ էք կատարելու մի բարի գործ, որ Աստծուն է վերաբերում: Ծշմարտութեան հանդէպ ձեր բուռն եռանդին ծանօթ լինելով, ձեզ սակաւաթիւ խօսքերով յորդորեցի:

Աղօթում եմ, որ բոլորդ միշտ անյողողող մընաք մեր Աստուած Յիսուս Քրիստոսի մէջ

Ը. – 1. Քանի որ չկարողացայ գրել բոլոր Եկեղեցիներին, Տրովադայից Նէպոլիս<sup>1</sup> յանկարծակի մեկնումիս պատճառով, – տրուած հրամանի<sup>2</sup> համաձայն, – քո դիմաց գտնուող Եկեղեցիներին<sup>3</sup> դու ինքդ գրիր. դու, որ քաջատեղեակ ես Աստծոյ մտքին: Թող նրանք էլ միեւնոյն կերպ վարուեն. ովքեր կարող են, թող պատուիրակներ ուղարկեն, իսկ ովքեր չեն կարող, թող նամակներ գրեն եւ ուղարկեն քո կողմից առաքուած մարդկանց միջոցով, որպէսզի փառաւորուէք այս յաւիտենական գործով, ինչպէս եւ արժանի ես:

---

<sup>1</sup> Խօսքը վերաբերուած է ո՛չ թէ իտալական թերակղզու հարաւ-արեւմտեան ափին գտնուող յայտնի Նէպոլիս քաղաքին, այլ համանուն նաւահանգստին, որ գտնուած էր Հռոմէական Կայսրութեան Թրակիա նահանգում (ներկայումս Յունաստանի Հիւսիս-արեւմուտքում):

<sup>2</sup> Իգնատիոսը չի ճշգրտում, թէ ում կողմից է տրուել ճանապարհ ընկնելու այդ յանկարծակի հրամանը: Ամենայն հաւանականութեամբ՝ պահակախմբի հրամանատարի: Բայց հաշուի առնելով այն փաստը, որ «*thélema*» եզրը Իգնատիոսը երբեմն օգտագործում է որպէս «Աստծոյ կամք»ի հոմանիշ, կարող ենք իր այս արտայայտութիւնը հասկանալ «Աստծոյ կամքի համաձայն» իմաստով եւ նշանակութեամբ:

<sup>3</sup> Այսինքն՝ Եկեղեցիներին, որ գտնուում են Զմիւռնիայից դէպի արեւելք, դէպի Անտիոք:

2. Ողջունում եմ բոլորին անուն առ անուն: Ողջունում եմ Եպիտրոպոսի կնոջն իր ամբողջ ընտանիքի եւ որդիների հետ միասին: Ողջունում եմ ինձ յոյժ սիրելի Ատթաղոսին: Ողջունում եմ նրան, ով արժանի կը համարուի գնալու Ասորիք. շնորհը միշտ նրա հետ կը լինի, ինչպէս նաեւ նրան ուղարկող Պողիկարպոսի հետ:

3. Աղօթում եմ, որ բոլորդ միշտ Անյողգողգ մնաք մեր Աստուած Յիսուս Քրիստոսի մէջ. որ Նրա մէջ մնաք, Աստծոյ միութեան մէջ եւ Նրա առաջնորդութեան<sup>1</sup> ներքոյ: Ողջունում եմ իմ սիրելի Աղկիային: Անյողգողգ մնացէք Տիրոջ մէջ<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Բնագրում տառացիօրէն. «Եպիսկոպոսութեան»:

<sup>2</sup> Ինչպէս նախորդները, այս նամակը նոյնպէս փակուած է Տիրոջ Անունով: Կարող ենք վստահ լինել, որ Յիսուս Քրիստոսի Անունն է եղել նաեւ այն վերջին խօսքը, որն Իգնատիոսն արտասանել է այս երկրի վրայ, մարտիրոսութեան պահին, մինչ իր փառապանծ մուտքն էր գործում երկինք, Նրան յաւիտեանս տեսնելու եւ վայելելու համար:





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

<i>Նախաբան</i>	5
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ	10
<i>Ասորիքից Հռոմ, դէպի մարտիրոսութիւն</i>	10
<i>Ողջոյնի ու յորդորների եօթը նամակներ</i>	17
<i>Նամականու հիմնական նիւթերը</i>	22
<i>Ա. Իգնատիոսը որպէս Եկեղեցու միութեան եւ Հաղորդութեան պաշտպան</i>	24
<i>Բ. Իգնատիոսը որպէս ուղղադաւանութեան պաշտպան</i>	25
<i>Գ. Իգնատիոսը որպէս Յիսուս Քրիստոսի Աստծուն սիրահարուած հոգի</i>	27
<i>Իգնատիոսը որպէս «միութեանը հակուած մարդ»</i>	29
ՆԱՄԱԿՆԵՐ	39
ԵՓԵՍՈՍԻ ԲՐԻՍՏՈՆՆԵԱՆԵՐԻՆ	41
<i>Ողջոյն</i>	42
<i>Երախտիքի ու գովասանքի խօսքեր</i>	43
<i>Յանձինս պատուիրակների տեսայ ձեզ բոլորիդ, սիրոյ մէջ</i>	45
<i>Ես տակաւին կատարեալ չեմ ...</i>	46
<i>Միութեան գովերգ</i>	47
<i>Եպիսկոպոսը միութեան կենտրոն</i>	48
<i>Ընդունել Եպիսկոպոսին ինչպէս անձամբ Աստծուն</i>	49

<i>Խուսափել հերետիկոսներից. Քրիստոսն է միակ բժիշկը</i>	50
<i>Անձս զոհարելու՞մ եմ ձեր համար</i>	51
<i>Քրիստոնեաները Հօր տաճարի քարերն են</i>	52
<i>Հեզ եղէք, խոնարհ, քաղցրաբարոյ</i>	53
<i>Յաւիտենական ժառանգութիւնը</i>	55
<i>Պօղոս Առաքեալի յիշատակումը</i>	56
<i>Գոհարանութիւն եւ խաղաղութիւն</i>	57
<i>Հաւատք եւ սէր</i>	58
<i>Խօսք եւ գործ</i>	59
<i>Հաւատքն ապականողները: Նրանց վախճանը</i>	60
<i>Կեանքս ընծայում եմ որպէս Խաչի զոհ</i>	61
<i>Բացառիկ խորհուրդներ են կատարւում Աստուծոյ լուսթեան մէջ</i>	62
<i>Խոստումներ ու յանձնարարութիւններ</i>	64
<i>Աղօթքներ եւ հրաժեշտի ողջոյններ</i>	65
<b>ՄԱԳՆԵՁԻԱՅԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՆ</b>	66
<i>Ողջոյն</i>	66
<i>Գովասանքի խօսքեր</i>	67
<i>Յարգել Եպիսկոպոսին</i>	68
<i>Եպիսկոպոսի հեղինակութիւնը ճանաչել խօսքով եւ գործով</i>	70
<i>Երկու դրամներն ու երկու դրոշմները</i>	70
<i>Համախոհութեան հրաւէր</i>	71
<i>Միայն մէկ աղօթք, միայն մէկ թախանձանք, Աստուծոյ միայն մէկ տաճար</i>	72
<i>Յուդայականները</i>	73
<i>Տիրոջ օրը</i>	74
<i>Նոր թթիւմորը. Յիսուս Քրիստոս</i>	76



<i>Անասան հաւատք</i>	77
<i>Ձեզնից ոչ մէկից աւելի չեմ ...</i>	78
<i>Կրկին համախոհութեան հրաւէր</i>	78
<i>Յորդորներ եւ հրածեշտի ողջոյններ</i>	79

<b>ԹՐԱԼԼԻՍԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՆ</b>	81
<i>Ողջոյն</i>	82
<i>Գովասանքի խօսքեր: Հնազանդութիւն Եպիսկոպոսին</i>	82
<i>Առանց նուիրապետութեան չկայ Եկեղեցի</i>	84
<i>Ուրբեր ինձ դովում են, մտրակում են</i>	86
<i>Հերետիկոսութեան թունաւոր խոտը</i>	87
<i>Խոնարհութիւն եւ համախոհութիւն</i>	88
<i>Հեզութիւն, հաւատք եւ սէր</i>	88
<i>Հաւատքի դաւանութիւն ընդդէմ Դոկետների</i>	89
<i>Աստուած մեզ պատուիրել է միութիւնը</i>	91
<i>Ձեզ յորդորում են իմ կապանքները</i>	92
<i>Յորդորներ եւ հրածեշտի ողջոյններ</i>	93

<b>ՀՌՈՄԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՆ</b>	94
<i>Ողջոյն</i>	95
<i>Յուսով եմ դալ ձեզ անձամբ ողջունելու</i>	96
<i>Աստուծոյ խօսք կը դառնամ</i>	97
<i>Հաւատարիմ քրիստոնեայ կը լինեմ, երբ այլեւս տեսանելի չեմ լինի աշխարհին</i>	98
<i>Աստուծոյ ցորենն եմ</i>	99
<i>Միայն թէ ես հասնեմ վայելելու Յիսուս Քրիստոսին</i>	101
<i>Մի՛ խոչընդոտէք ինձ, որ ծնուեմ կեանքին</i>	102
<i>Մարդկային իղձերս խաչուած են</i>	104


<i>Եթէ մարտիրոսութիւնը կրեմ, դա կը նշանակի, որ ինձ սիրել էք</i>	105
<i>Աղօթքներ եւ հրաժեշտի ողջոյններ</i>	106
<i>Վերջաբան</i>	107
<b>ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՆ</b>	109
<i>Ողջոյն</i>	110
<i>Եպիսկոպոսի գովքը</i>	111
<i>Հեռու մնացէք բաժանումներից</i>	112
<i>Ովքեր Աստուծուն են եւ Յիսուս Քրիստոսինը, նրանք եպիսկոպոսի հետ են</i>	112
<i>Հաղորդութիւնը միութեան աղբիւր</i>	113
<i>Մարգարէները փրկուեցին Յիսուսին հաւատալով</i>	114
<i>Զգուշացէք Յուդայականութիւնից</i>	115
<i>Ոչինչ մի՛ արէք առանց եպիսկոպոսի</i>	117
<i>Հաւատում եմ Յիսուս Քրիստոսի շնորհին</i>	118
<i>Աւետարանն առաւել է, քան Հին Կտակարանը</i>	119
<i>Լաւ լուրեր Անտիոքից</i>	120
<i>Հրաժեշտի ողջոյններ</i>	121
<b>ՉՄԻՒՌՆԻԱՅԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՆ</b>	122
<i>Ողջոյն</i>	123
<i>Հաւատքի դաւանութիւն</i>	123
<i>Քրիստոսն իսկապէ՛ս չարչարուեց</i>	124
<i>Յարուցեալ Քրիստոսին հպուելով է, որ Առաքեալները հաւատացին</i>	125
<i>Զգուշացնում եմ ձեզ մարդակերպ գազաններից</i>	126
<i>Աւելի մահուան դատապաշտպաններն են, քան ճշմարտութեան</i>	127

<i>Ամէն բան բովանդակուած է հաւատքի եւ սիրոյ մէջ</i>	128
<i>Ուրբեր մերժում են Աստծոյ պարգեւը, մեռնում են իրենց իսկ բանավէճերում</i>	129
<i>Ուր Յիսուս Քրիստոսն է, այնտեղ է Ընդհանրական Եկեղեցին</i>	130
<i>Աստծոյ համար ամէն նեղութիւն կրելով, մի օր հասնելու էք Նրան վայելելու</i>	132
<i>Ձեր համար եմ զոհաբերում իմ հոգին եւ ընծայում իմ շղթաները</i>	133
<i>Քանի որ դուք կատարեալ էք, ձեր մտքերն էլ թող կատարեալ լինեն</i>	134
<i>Հրածեչտի ողջոյններ</i>	135

<b>ՊՈՂԻԿԱՐՊՈՍԻՆ</b>	137
<i>Ողջոյն</i>	138
<i>Սրտացաւ եղիր միութեան հարցին</i>	139
<i>Խորագէտ եղիր օձի նման եւ պարզասիրտ՝ աղաւնու նման</i>	140
<i>Անյողգողդ մնա, ինչպէս դարբնասալը մուրճի հարւածների տակ</i>	141
<i>Թող ոչինչ չկատարուի առանց քո համաձայնութեան</i>	142
<i>Յորդորներ ամուսնացածներին ու ամուրիներին</i>	143
<i>Մէկտեղէք ձեր ջանքերը, միասին պայքարեցէք</i>	144
<i>Քրիստոնեան ինքն իր վրայ իշխանութիւն չունի</i>	146
<i>Աղօթում եմ, որ բոլորդ միշտ անյողգողդ մնաք մեր Աստուած Յիսուս Քրիստոսի մէջ</i>	147

<b>ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ</b>	151
-----------------------	-----

«Ընդհանրական» Հրատարակչատունը հրատարակել է նաև



Քսաներորդ դարի Փրանսիացի աշխարհահռչակ հեղինակ Միշել Քուսսի գլուխգործոցը հանդիսացող «Խօսիր ինձ սիրոյ մասին» գրքի հայերէն առաջին թարգմանութիւնը: Կարեւորագոյն գործ է:

Տուեալներ գրքի մասին.

Թարգմանիչ՝

Կ.Կ. Դաւեյեան եւ Մ.Վ. Ղազարեան

ISBN

978-9939-9019-1-6

էջ


256

Չափս

14,5 x 20 սմ

Գին

1.500 դրամ



Գրքում հրատարակուած է Սբ. Միքայէլ Հրեշտակապետին ուղղուած աղօթքների ու մաղթանքների մի եզակի հաւաքածոյ: Այն հզօր պաշտպանութիւն է չար ուժերի դէմ: Նախաբանում ամփոփ գիտելիքներ հրեշտակների մասին:

Տուեալներ գրքի մասին.

Թարգմանիչ՝

Մ.Վ. Ղազարեան

ISBN

978-9939-9019-0-9

էջ

64

Չափս

11,5 x 16,5 սմ

Գին

550 դրամ



Քսաներորդ դարի իսպանացի աշխարհահռչակ հեղինակ Սբ. Եղեմարիա Էսքրիվա Դէ Բալագերի ամենակարեւոր գործերից մէկը հանդիսացող «Ճանապարհ» գրքի հայերէն առաջին թարգմանութիւնը:

Տուեալներ գրքի մասին.

Թարգմանիչ՝

Մ. Ղազարեան եւ Մ.Վ. Ղազարեան

ISBN

978-9939-9019-2-3

Էջ

280

Չափս

12 x 17 սմ

Գին

1.100 դրամ



Սբ. Եղեմարիա Էսքրիվա Դէ Բալագերի «Պաշտում եմ Քեզ, թաքնուած Աստուած» գրքոյկը, ուր մէկտեղուած են նրա քարոզներից երկուսը Ամենասուրբ Հաղորդութեան մասին: Հայերէն առաջին թարգմանութիւնն է:

Տուեալներ գրքի մասին.

Թարգմանիչ՝

Մ.Վ. Ղազարեան

ISBN

978-9939-9019-9-2

Էջ

84

Չափս

12 x 17 սմ

Գին

850 դրամ

Պատուիրել կարող էք զանգահարելով 093 58 50 54 հեռախօսահամարին, կամ

գրելով [endhanrakan.hrat@mashtoz.org](mailto:endhanrakan.hrat@mashtoz.org) հասցէին: Առաքումը երեւանում անվճար է:

*Կազմի ձեւաւորումը*  
ՍԻՐԱՆՈՒՇ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

*Տպագրուել է*  
ՇԱՆԹ Հրատարակչութեան Տպարանում  
shantprint@gmail.com